




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ	Պաշտոն
Ս. Կ.	Իրաւեան արդի բանաստեղծութիւնը
Պ. Շ. ՍԱՅԵԱՊ	Գետը եւ մահը
Ա. ՈՒ. ՊԱՅԵԱԹԻ	Կը ծնիւմ... եւ կ'այրիւմ սիրով
Պ. ՀԱՅՏԱՐԻ	Երկու դէմքեր
ՇԱՀԱՆՈՒՈՒՅՏ	Տղամուտ սեռեակի մը հանդիպումը
Ա. ՀԻՒՂԵԱՆ	Դեռատի ազբահաւաք
Փ. ՎԻԱԼԱՐ	«Իրիկուն», հայացուց՝ Տիրան Անէմիան
Ա. ԳԱՔՐԻԵԼԵԱՆ	Այցելու
»	Իմ ու 'ճո տարին
Պ. ՍՆԱՊԵԱՆ	Միջնաբար
ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Եզնիկ կը դասախօսէ Օգոստոսի մէջ
Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ	Գրականագիտութիւնը Հայաստանի մէջ
Ա. ՏԻՐ ՄԻՆԱՍԵԱՆ	Տեղեկագրի նախը
* * *	Երկու խօսք

Բազմ



ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹՅԱՆ և ԱՐՈՒՆԵՍՏԻ

Բ. ՑԱՐԻ. ԻՌԻ 10 ՀԱՆՏԱԴԱՐ 1981 ԴԵՐԵՐ

Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ



ՊՈՒԵՏԸ

Ի՞նչ ընել, ինչպե՞ս ընել... Մէկ կողմէն՝ դազանութեանց, մեղանշումներու, անհեթեթութեան մշտական թաւալումը համայն մարդկութեան ծովուն մէջ, փոխաբէն՝ մէկ քանի կաթիլ ընտրեալներու, որ արժանի են մարդու տիտղոսին: Եօթը մահացու մեղքերը իրենց այսօրու գոյութեան առաջին օրէն, կեանքի հրապարակներուն վրայ, կեանքի սրտին մէջ: Կը շաղախեն անդու՝ աւերակներն ու մոխիրները արիւնով ուղխինահոս, որուն ծորակը կը մնայ մշտապէս բաց: Ինչ փոյթ ցնորական իրադարձումները, երբ քեֆնիք կալուածներուն մէջ, յաղթանակները սրաթափանց բիրերուն, իր իմացականութեան, որուն ետեւ անտեսումովն հականին, նոյն այդ բիրերը կը մնան ամբափակ:

digitised by

A.R.A.R. @

929-850

Դո՛ւն, քերթող ազատամարտ, ազատարար, դիտելէն վերջ զարհուրանքը աշխարհի, անձկայրեաց, անցիւր բոլոր սահմաններէն ալ անդին, բոլոր սահմաններէն ալ վեր: Պրկէ ցոկանաւիդ առաջաստները մաքրափայլ՝ դէպի անդորրաւէտ իշխանութիւնը ներքին կղզիիդ, ուրկէ դիտես մտամոխի՝ ալեկոծումը կեանքին, սեւ սխրագործութիւնները Պատմութեան, Էրոնիք տառապանքը անթեւ էակներուն: Աշխարհդ հարուստ է հոն: Երագայիւնը, պատրանքները, գերերկրայինը կը բանան երփներանգ, համիրաւ աշխարհներ, քանի որ մարդուն կեանքն ալ երագ է ու ներքերանգ մը պատրանքի:

Մնա՛ր հոն, աւագանին մէջ բիւրեղացման, բոլոր կիրքերդ, ինքզինքդ համալ: Ըրէ՛ տյն, որ ընտելեան գերագոյն ճիգը իրականացուց — վերածէ նիւթը՝ օրհներգի, փոխօրկէ անշունչը՝ ոգիի:

Այն ատեն մտաբերէ մոխիրներու վրայ պար բռնող մոլորեանները բոլոր եւ մարդկութիւն մը համալ ժառանգազուրկներու նօթի: Յօրինէ անոնց համար սաղմոսներ եւ տաղեր, մեղեդիներ սրբանուէր: Եւ նաեւ ռազմերգներ արդարախնդիր, սրբազան զայրութեանդ պոռթկած: Հալածեալներու, արհամարհումներու բանալիները ալեկոծւին, կամքերը դառնան միաձուլ, երգիդ մոգութեամբն արբեցած: Վասնդի դուն կը ճանչնաս ակնադբիւրը վերամբարձ կեանքին: Դո՛ւն, որ ծարաւի ես յաւէտ եւ ստացած անկէ շնորհը՝ քեզի վստահուած առաքելութեան: Բանաձեւէ հրաժառ տառերով՝ օրէնքները կեանքի մեծ ներդաշնակութեան:

Մարդիկ թշուառ են եւ տնանկ՝ հոգիով: Կ'ապրին որոճալով մոլախիւնդը ժխտումներու: Տո՛ւր անոնց, քերթող անդին, ոսկեպտուղները մեծ հաւասարեցնելուն, վասնդի մարդը ծարաւի է ցմահ օրէնքի, Բաղարձակի: Հառտատէ հիմնաքարերը սրբատաշ՝ երկինք մխրճուող տաճարներուն:

Մարդիկ կը շփոթեն իրենց ձրի ոխերն ու արհամարհանքը գոռոգ՝ գաղափարին հետ: Էակի մը գերակայութիւնը կը բաւէ, որ ան դառնայ թիրախը, ուր կ'ուղղուին սլաքները իրենց ատելութեան: Այդ է օրէնքը՝ իրենց եղծանուած մտքին: Դո՛ւն պիտի ուսուցանես, որ ընչաքաղցութիւն եւ որեւէ կիրք բռնակալամէտ՝ անկումներ են եւ ո՛չ թէ զօրութիւն: Ինչքան ըլլան մեծ անոնք, այնքան անխուսափելի՝ կործանումն իրենց:

Սէ՛րն է զօրութեան միակ փրկարար ամբարոսն: Ա-

նոր զօրութեամբն է, որ մարդը կը տարուի գերագոյն արարքին՝ զոհարարութիւն: Կուտակումը դիտելիքներու՝ ոչինչ է: Եւ որեւէ ինչ, ամէն ինչ ոչինչ է, եթէ չի ծառայէր անհատի գիտակցութեան անումին: Եթէ չի փշրեր կապանքները, որ կը խափանեն խոյանքն իր հոգիին: Յոյց տուր անոնց, որ իշխանական թափօրն ալ զաղափարներուն կը ցրցենուի անգոր ու ամուլ, եւ անհատն ալ կը մընայ եղկելի, եթէ անոնք չեն ծնիր լուսայորդ գիտակցութեան մը երկունքովը:

Քերթն'դ անգին, վիճակուած տառապելու, քանի որ իմաստութեանդ յոյզը կը կաթի հոգիիդ հնձանէն, սրտիդ աղերեկ կծկումներէն, տուալտող սրտիդ արցունքներովը թաթաւուն:

Քերթն'դ, Պրոմէթէոս նորահրաշ, տեղակայ նազովրեան, պիտի կրես հալածանքները, արհամարհանքն ու ատելութիւնը վտանգալի՝ միջակորեարին, յաւէտ կոյր թշնամի աշն բոյորին, որ վեհանձն է եւ վսեմ: Քու բանիդ մոգութեամբն է, որ պիտի փշրուին բազմապիսի մեծադներով ու անքակտելի հանգոյցներով կռանուած շըղթաները, թէ՛ ամբապինդ, թէ՛ նրբակերտ, որոնց թնճուկներուն մէջ մարդը կը գայարուի իր ծնած օրէն:

Բարձրացման ոսկեկուռ յծակները՝ ամուլ հողերու վրայ չէ, որ կը կոփուին: Վերէն թեւածող, սրտիդ պոռթկացող հնչիւններովն է, որ գերեզմար մարդը կը բարձրանայ, կը դառնայ գիտակցական, ինքնակալ:

Երբ կը հասնի ժամը մեծ շուարումներուն, դո՛ւն է, որ մատովդ ցոյց պիտի տաս ուղենիշները ճամբորդներուն, որոնց աչքերուն լոյսը կը շիջանի: Դուն պիտի հարստացնես անոնց կեանքը, տանելով զանոնք պայծառ յափըլ տակութեանց: Քեզի է վստահուած ստեղծել նոր աղնուապետութիւն մը, ոգիի նոր նուիրապետութիւն մը՝ արժէքներու, ոճի: Վասնզի ոչինչ գոյութիւն ունի, երբ գոյութիւն չունի իտէալը լաւին: Քու բարբառիդ իմաստաւորումովն է, որ պիտի ցայտեն լոյսի կայծեր, վանեն աղջամուղջը կազմալուծ ամբոխին: Անոր վարժ աշխատանքին հոգեգութիւնը նուազումը պիտի փարատես, պարտականութեան իմաստին շարժիչ մեքենայովը հզօր, քերթն'դ վեհանձն, բարախումբներովն սրտիդ անկասելի զարկերուն:

Դո՛ւն, ցաւի եւ խղճահարութեան ուխտաւոր, որուն աչքերը տեւապէս կ'աղօթեն եւ ակնարկները՝ կը սրբագործուին: Որուն սրտին մէջ ամէն ինչ կը դասաւորուի համաձայն տառապանքիդ հրամաններուն: Դո՛ւն, որ կ'իջ-

նեա տրամութեանց խորքերը անպեղելի, դո՛ւն ես, որ պիտի սփռես պայծառութիւնը մարդոց հոգիներուն մէջ եւ բաշխես անոնց՝ յուզումը կեանքի վերին երանութեանց: Դո՛ւն, տրամաթախի՛ծ աչքերով էակ, թէպէտ զիւրաբեկ ու թէպէտ ակաղձուն, խոցելի, դո՛ւն ես ի վերջոյ պարտադրուող ուժը կեանքին: Ինչքա՛ն մանկածալիտ ու եղերական էր միանգամայն ուրախութիւնը բանիմաց բազմութեան, երբ կ'ողջունէր քեզ խելայեղօրէն, քու քերթուածիդ բոցերէն բռնկած:

Քու սիրտդ կծկուեցաւ սակայն տրամութեամբ: Ինչքա՛ն հարկ է որ զրկուած ըլլար կեանքէ: Ինչքա՛ն մոլորած, օրերու խաթարող, բռնադատ ժխտրին մէջ, որպէսզի մանկանայ ան եւ յորդի այգպէս երախտագէտ:

Նրդիդ մոգութեամբը անոնք դտան կորսուած էութիւն մը, որ իրենցն էր: Անոնք պատրաստ էին երախտահատոյց ինքնամոռացումով՝ իրենց կեանքին վարդը նետելու քեզի: Ինչքա՛ն հարկ է որ բռնաբարուած ըլլար իրենց հոգին, ինչքան ըլլային զրկուած կեանքի կրակէն: Քու Բանէդ բխած հաւատարմքը՝ այն երանութիւնն է, որով մարդը կ'ընթանայ հաստատաքայլ եւ կը յագեցնէ սրբադնական իր ծարաւը, վասնզի մարդը յաւէտ ծարաւի է Բացարձակին: Կարօտ է, քայլ փոխելու համար, տեսիլքի մը լուսացայտ, ամրակուռ հողերուն վրայ: Ասիկա է իր էութեան մեծագոյն իրականութիւնը: Ու քաջարձակին տենչանքովն է միայն, որ ան կը դիմէ դէպի լիութիւնը իր իրականացումին:

Հաւատարիմ աւանդութեանց, կ'երգես ապագան: Այն բոլոր անկորնելի ուժերը, որ կը նիրհեն հէք մահկանացուի արիւնին մէջ, կը կենդանանան իմացականութեանդ ճառագայթներուն տակ: Քու տեւապէս ներդաշնակուող եւ ներդաշնակող բնութեանդ նշխարովը անոնք կու գան հաղորդուիլ, խորհրդաւոր եղանակով, ժամանակին հետ եւ ապագայի ուժերուն:

Մարդիկ, ստրուկներ անբնականի իշխանութեան, մոլեգնած, այսահար, պատմութիւնը կը հիւսեն, դարձրնելով կեանքը յաջորդական նախճիրներու դաշտ համայնական ու մեծատարած: Նախճիրներ, որոնց ամէնէն աւերիչները կը մնան անտեսանելի եւ լուակեաց...

ՀՐԱՉ ՉԱՐԴԱՐՆԱՆ

Նիս, 2 Օգոստոս 1981

ԻՐԱՔԵԱՆ ԱՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Երկրորդ աշխարհամարտը եւ, մանաւանդ՝ պաղեստինեան ողբերգութիւնը անկիւնադարձ մը հանդիսացաւ արաբ ժողովուրդին ընկերային, տնտեսական թէ քաղաքական մարկերէն ներս ու իր դրոշմը դրաւ արաբական գրականութեան ու մշակոյթին վրայ:

Արաբական աշխարհի տարածքին թէ արտասահմանի մէջ ըստեղծագործող ողմանքիք բանաստեղծներու արդէն իսկ խոպտած ձայնը մարեցաւ վերջնականապէս եւ թափուր մնացած աթոռները եկան գրաւելու ժամանակակից հետաքրքրութիւններու տէր երիտաւարդ բանաստեղծներ:

Ակպընական շրջանին Եգիպտոսի համալսարանական բանաստեղծներուն պոռթկումները, որոնք կը բխէին ժողովուրդին կրած ընկերային կրկանքներուն եւ վարչաձեւերու սնանկութեան իբրեւ պատասխան, անմիջապէս ենթահող գտան Իրաքի մէջ:

Պաղտատի Ազգ. Ուսուցչանոցին մէջ ձեւաւորուիլ սկսած ընկերվարական իրապաշտութեան եւ յանձնառու խորհրդապաշտութեան զոյգ շարժումները, սակայն, կը սնանէին ե՛ւ իրաքեան դասական բանաստեղծութեան քաղաքական ուղղութեանց ակունքներէն, ե՛ւ ժամանակակից գաղափարաբանութիւններէ:

Եթէ այս բոլորը մղում կու տային երիտաւարդ բանաստեղծներու թռիչքներուն, այնուամենայնիւ, իբրեւ բանաստեղծական աշխարհայեացք՝ անոնք կը սնանէին յատկապէս անգլիական ժամանակակից բանաստեղծութեան ակունքներէն եւ, մասնաւորաբար՝ Ք. Ս. Իլիքթի ձեռք բերած նուաճումներէն:

Գլխաւորաբար Պատրը Հաքէր Սայեապի, Նապէք Մալաիքէի, Ապտըլ Ուսհիապ Պայեաթիի, Պալանտ Հայտարիի եւ իրենց սերունդակիցներուն ճիգերով ձեւաւորուիլ սկսող արդիականութեան շարժումը գրականութիւնը դուրս բերաւ աւանդական շրջածիրէն եւ գրողները դրաւ նոր տագնապներու առջեւ, որոնք կը բխէին ժողովուրդին կեանքէն եւ կը ձգտէին ըլլալ անոր խղճմտանքին ձայնը:

Պատրը Հաքէր Սայեապ եւ իր ընկերները նաեւ վերականգնանացուցին արաբական բանաստեղծութեան լեզուն եւ խօսակցական շերտութեամբ նոր ձկունութիւն մը հաղորդեցին անոր:

Ստորեւ կը ներկայացնենք բնորոշ նմոշներ Սայեապի, Պայեաթիի եւ Հայտարիի գործերէն: Այս դէմքերուն յատկանշական կողմերը բացայայտող ուսումնասիրութիւն մը լոյս պիտի ընծայենք «Բազիւ»ի յաջորդ թիւով:

Ա. Կ.

Մենք է 1926ին, Իրաքի գիւղերէն մէկուն՝
ժերուրի մէջ, զոր երգած է բանաստեղծութիւն-
ներով: Նախնական և երկրորդական ուսումը
Պարսկի մէջ ստանալէ ետք, կը յաճախէ Պաշ-
տատի Ազգային Ուսուցչանոցը, ուր կ'ուսանի ա-
րարէն և անգլերէն գրականութիւն:

Քանի մը տարի ուսուցչութեամբ զբաղելէ
ետք, կորն ժամանակով կը պաշտօնավարէ մէկէ
աւելի հաստատութիւններու մէջ: Քշտառատութիւ-
նը, հիւնախոն ու հայրենիքէն և իր հարազատ-
ներէն հեռու ըլլալու պարտական խորապէս կ'անդ-
րագտանան իր գրականութեան և աշխարհայե-
անցքին վրայ:

Արաքսկան յառաջագահ բանաստեղծութեան
սիրական զէմքերէն նկատուող Պատըր Շաքըր
Սալիսպ հրատարակած է շարք մը գերթողագիր-
քեր, որոնց կարեւորագոյններն են:— «Թօշնամ
ծաղիկներ», «Էլիմմ ամբընիթ», «Աւաստիկներ»,
«Ծովամույն մեծանք», եւ այլն:

Սալիսպի կարգ մը գերթուածները Թաղ-
մանում ևն անգլերէնի, ֆրանսերէնի, ուղանե-
րէնի, ուստերէնի, իտալերէնի, գերմաներէնի,
հայերէնի և այլ լեզուներու, իսկ ինք գերթու-
ածները արաբացոյցած է անգլիական արդի բա-
նաստեղծութենէն:

Երեսասարդ տարիքին մահուան ուրուականը
նախկին բանաստեղծը կը մահանայ 24 Նոյեմբե-
րի 1864ին:



Պատըր Շաքըր Սալիսպ

ԳԵՏԸ ԵՒ ՄԱՆԸ

Պուէյալ...

Պուէյալ...

աշտանակիմ գանգակները կորստեցան յատակը ծովում,
չուրն է կարաններում մէջ եւ մայրամուտը ծառերում,
մինչ կարասներէն կը կաքկիքին գանգակներ ամբընային,
որոնց բիրտեղները տնքոց-տնքոց կը հալին՝

Պուէյալ... Պուէյալ,

եւ արեանս մէջ կ'աճի կարօտ մը

դէպի քեզ, Պուէյալ,

ո՛վ գետ իմ, տխուր ամբընի նման:

Կ'ուզեմ խոյանալ խաւարին մէջ,

կը պրկեմ բռնեցքներն իմ, որ ընդհանուր կարօտ մը կը կրեն

մէն մի մատի մէջ, կարծես թէ ուխտեր կը կրեն

քեզի համար՝ ցորենէ եւ ծաղիկներէ:

Կ'ուզեմ յայտնուիլ բարբերում մանիմէն՝

տեսնելու համար ափերուդ միջեւ ման և կող լուսինը երկնային,

որ կը ցամէ տառերներ եւ կը լեցնէ կողովներ՝

չուրով, ձուկով, ծաղիկներով:

Կ'ուզեմ աւգուիլ, քու մէջ տուգուիլ,

հետեւիլ լուսին եւ յիմերում ձայնը լսել,

որոնք քեզմէ կը ժամանեն, յատակներուդ խորերէն՝

digitised by A.R.A.R.@

Իմչպէս դայլայլը ծառերուն ծաղկած հագարաւոր թռչուններու :
 Արցունքներու սնտա՞ռ ես դուն, թէ գետ արգեօք,
 ձուկերն արթուն գիշերները կախարդանքին մէջ կախարդուած կը ճնտնա՞ն,
 եւ ասողերն այս սպասուսին մէջը իրենց
 մետաքսներով հագարաւոր նարարոյսեր կը կերակրեն...
 Պուէ՛յսլ... Պուէ՛յսլ,
 կ'ուզեմ սուգիլ խորերդ հիմա եւ հաւաքել ռստրները անդունդներուդ՝
 անձնցմէ տան մը կառուցելու համար,
 ուր կը լուսաւորէ կանաչը դուրերուն եւ ծառերուն
 եւ կ'առագեմ լուսին ու աստղեր
 եւ մակընթացութեան հետ զէպի կախարդանք կ'ազդուիմ,
 գի մանը աշխարհ է տարօրինակ, որ մանուկները կը հմայէ
 եւ որուն զաղտ դուռը բաւ մէջ է, Պուէ՛յսլ...

2

Պուէ՛յսլ... Պուէ՛յսլ,
 քանը անցաւ, ամէն մէկ տարին՝ ճիշդ դարի մման,
 եւ հիմա, այսօր, երբ խաւարը կը տիրէ
 եւ անկողնին մէջ կ'երկարիմ առանց կռպերս փակելու
 եւ կը լարեմ խղճմտանքն իմ՝ պուրակ մը դէպի կախարդանք
 նրբագգած ռստերով, թռչուններով ու միւրդերով,
 արցունքներ ու արիւն կը զգամ, անձրեւի պէս
 դառն ու տխուր աշխարհը քամոյ —
 երակներուն՝ մեռելներու զանգակները զնգզնցներ կը դադացնեն
 եւ արեւան մէջ կ'անի կարօտ մը
 դէպի փամփուշտն այն, որուն դառնահամ ու մուք ժիւնը կը ճնդէ
 խորերը կուրծքիս եւ ռսկերներն իմ կ'այրէ դժոխքի նման :
 Կ'ուզեմ խոյանալ, օգնել պայքարողներուն,
 պրկել բռունցքն իմ եւ նակատագիրն ապտակել :
 Կ'ուզեմ սուգիլ իմ արեան մէջ, միմչեւ խորերը ամառ,
 որ մարդոց հետ պատասխանատուութեան բեռը շալկեմ
 եւ յարուրիւն տամ կեանքին : Զի իմ մահս յաղթանակ է...

ՊԱՏԸՐ ՇԱՔԻՐ ՍԱՅԵԱՊ



Ապարի Ուսանալ Պայեաթի

Ծնած է 1828ին, Պաղտատ: Նախնական եւ
երկրորդական ուսումը ծննդավայրին մէջ ստա-
նալէ ետք, մասնագիտական կրթութիւնը կը լա-
րուսահէ Պաղտատի Աղլաշին Ուսուցչանոցին մէջ:
Կարճ ժամանակ մը կը զբաղէ ուսուցչութեամբ,
սպա կը մտնէ լրագրական ասպարէզին ներս:
Պայեաթի ատեն մը կը թափառէ երկրէ եր-
կիր եւ իր հայրենիքը կը վերադառնայ 1858ի յե-
ղափոխութեան վաղորդային եւ կը վարէ լրա-
գրական եւ մշակութային զանազան պաշտօններ:

Արարական արդի բանաստեղծութեան մեղ-
նէն կարեւոր դէմքը նկատուող այս բանաստեղ-
ծը հրատարակած է բազմաթիւ հատորներ, որոնց
գլխաւորներն են. — «Բերքաւանդներ ամսորի մէջ»,
«Բառեր», «Ինչ մեղմիր», «Կրակը եւ բառերը»,
«Սիրոյ քերթաւանդներ» աշխարհի եօթը դուռնե-
րուն վրայ», «Երբագի լուսինը», «Եւրոպ»:

Պայեաթի թարգմանուած է բազմաթիւ լե-
զուներու՝ ֆրանսերէնի, անգլերէնի, գերմանե-
րէնի, ռուսերէնի, սպաներէնի, իտալերէնի, փոր-
թուգալերէնի, հայերէնի, եւայլն: Իսկ ինք բա-
նաստեղծութիւններ արարացուցած է Արախոյի,
Էլիարի եւ Երրորդ Աշխարհի բանաստեղծներու
ստեղծագործութիւններէն:

ԿԸ ԾՆԻՄ... ԵՒ Կ'ԱՅՐԻՄ ԻՄ ՍԻՐՈՎ

1.—

Լարան կ'արթննայ յիշգութեան մէջ — քաթարական տատրակ, կը
ճաստատուի ինձմով, կ'երկարաճուի, կը յօրանջէ, կը ճանկէ դէմքն իմ տնե-
ղահար եւ գիւ կը գրկէ քունէ: Զինք կը տեսնեմ տարտարասներուն մէջ քե-
ւեքային ճաղաքներուն, կը կախէ գիւ իր խաղաղմերով եւ մապատալ մը
ինչպէս վար կ'երկարէ պարիսպին կատարէն՝ արցունքներու թելով քաշ-
ւած: Կը պոռամ՝ «Լարա» եւ սարսափահար հովը կը պատասխանէ՝ «Լարա»:
Կը վազեմ հովին ետեւէն, կը վազեմ գիշերուան շոգեկառքներուն ետեւէն եւ
հարց կու տամ սրճարանի մատուցողուհիին. ոչ ոք կը գիտնայ: Առանձին
կ'անցնիմ մազուող ձիւնին տակէն եւ սայթափած սէրն իմ կ'արտատում աշ-
խարհի ընդ սրճարաններուն ու գինեւաններուն մէջ:

2.—

Լուվրի «Լուվր» պատառներուն եւ սրբանկարներուն մէջ,
թագուհիներու աչքերուն տխրութեան մէջ,
չաստաւածուիներու խորհուրդին մէջ,
Լարան կ'անշնչանայ մահուան ռսկի դիմաւոր տակ եւ պատատունե-
րուն խորը սուգաւոր լռայն ցշումներուն տակ,

կը կանչէ զիս, դէմքս կը մօտեցնեմ իրեն, կու լամ տենդահար,
բայց ճեռք մը կ'երկարի, կը ջնջէ պատառները բալար, կը պահէ սըր-
բանկարներն ամէն՝ մահուան ասկի դիմակին վրայ ձգելով ճշոյլ մը մահա-
ցած օրուան լոյսէն:

3.—

«Լարա՛ն... մեկնեցաւ»,
«Լարա՛ն... անձնասպան եղաւ»,
դռնապանը ըսաւ, իր դրացուհին ըսաւ, բազուկաց տաք արցունք-
ներս մէջ, մինչ արիշ մը ըսաւ. «Յի սք գիտէ, ոչ իսկ տատանան»:

4.—

Յիշողութեանս մէջ ուսմբ մը կը շարունակեմ տղան տերեւներով բեռ-
նաւոր գիշերուան շագնակաւքին տակ, կը սողամ մեռելներու միջեւ, կը շո-
շափեմ ուղիս չեքիւտած դաշտերու տիպերուն մէջ, օգնութեան կը կան-
չեմ պահակները գիշերային, որ կ'եցնեմ յիշողութեանս մէջ գիշատիչ աւ կոյր
սերմ այս, սեւ լոյսն այս եւ կ'արտառուեմ մազաւոյ անձրեւին տակ:
Առաւօտուն ես իմ վրայ կը կրակեմ:

5.—

Ահաբաւած յիշողութեանս մէջ,
բանտարկուած բառերու մէջ,
կը բափառիմ անձրեւին տակ:

6.—

Կը պռտամ՝ «Լարա»
եւ սարսափահար հուր կը պատասխանէ՝ «Լարա»

7.—

Համբայի պայտսին մէջ,
բազաւորին շիկեհեր համառուիներուն անհեղինակութեան մէջ
կը լսեմ ուս մը արեւելեան եւ արտառաւք եղնիկին,
եւ ապշահար կը մօտենամ հազար ծաղիկներով զարդարուն բանա-
րաբաժնոյ արքայական տառին լուսապսակներուն:

Ահեք կը լսեմ.
Եօթը լուսիններուն տակն էր Լարան եւ բոցարծարծ լոյսը կը հրա-
ւիրէր զիս. դէմքս կը մօտեցնեմ իրեն, կու լամ տենդահար, բայց ճեռք մը
կ'երկարի, կը շարսէ զիս խաւարներու հորին մէջ՝ գորգին վրայ ձգելով կի-
բառս աւ ճշոյլ մը մահացած օրուան լոյսէն:

8.—

«Հասցէ չձգեց», ըսաւ տնօրէնը բատրոնին՝ բառերը ծամծմելով:

9.—

Սեւ ծովու անտառներուն մէջ կը քափին տերեւները ծառերուն.
լոյսերը կը մարին եւ սիրահարները կը մեկնին.
եւ կը մնաւ ատանձին, կ'որոնեմ գինձ ուղիորդն
եւ տեղաւոր կ'արտասուեմ անձրեւիմ տակ:

10.—

Կը պտտամ՝ «լարա» եւ սարսափահար ետվը ձկնորսին խրճիթին մէջ
կը պատասխանէ՝ «լարա»:

11.—

Իր պատկերը կը գծեմ ձիւնին վրայ եւ կամայ գայնը կը քոցավառի
իր գոց մեղրագոյն աչքերուն մէջ, կեռասագոյն վառ շուրթերը կը խռնար-
նին այտիս վրայ, ձեռքերը կ'ազուցուին յաւիտեական գիրկընդխառնումով,
բայց ձեռք մը կ'երկարի, կը քնջէ պատկերն իր՝ սպանուած գոյնին վրայ
ձգնելով Քչոյլ մը մահացած օրումն լոյսէն:

12.—

Կեանքիս արեւն անհետացաւ — ոչ ոք կ'ըմբռնէ: Սէրը կոյր եւ մեծա-
ւոր գոյութիւն մըն է: Ոչ ոք կը ճանչնայ այս ահար — արժայութիւնը:

ԱՊՏԸԼ ՌԻԱՀՀԱՊ ՊԱՅԵԱԹԻ

Քրտական ծաղումով իրաքցի այս բանաստեղծը կը ծնի 1928ին: Երկրորդական ուսումը ստանալէ հոգ, կարն ժամանակ մը կը հետեւի համալսարանական դասընթացներու եւ ապա կը նետուի ուսուցչական առարկէ դէն հերոս:

Կարն ժամանակ մը ետք, կը լքէ ուսուցչութիւնը, վաթսուեակն թուականներուն կը հաստատուի Պէյրութ եւ կը զբաղի լրագրութեամբ: Ներանձնական եւ ընկերացական փերթուաններ մշակող Հայտարի կը հկատուի սպիտակ բանաստեղծութեան արական դէմքերէն մէկը:

Իր կարեւորագոյն դործերն են «Մեռած էսպախին երգերը», «Փայլեր պանդխտութեան մէջ», «Ենզին տառերուն ճամբորդութիւնը», «Ջրոյց» երեք հեռաւորութիւններու ընդմէջէն:

Հայտարի եւ թարգմանած է Փրանսերէնի, անգլերէնի, գերմաներէնի, ռուսերէնի եւ այլ լեզուներու:

Ներկայիս կը բնակի Լոնտոն եւ պատասխանատու խմբագիրն է «Արարական տրուեստներ» հանգէտին:



Պալանտ Հայտարի

ԵՐԿՈՒ ԴԷՄՔԵՐ

Այդ ստաւատ, բանաստեղծն ու սուլթանը
երկու դէմքեր էին Լուսինան մէջ:

Գլուխդ պիտի կախեմ քերդին դրամ վրայ
եւ պիտի հանեմ աչքերդ
պիտի անդամահատեմ ձեռքերդ
եւ ոչ մէկ կաթիլ արցունք պիտի չթափուի քեզի համար
մում պիտի չվառի
եւ միսդ պիտի բաշխեմ գիւղին մէջ
գիւղին անօրիններուն
գիւղին քորեցիներուն
եւ պիտի խմեմք կենացը տգատագրուածներուն
եւ ամօթի ջնջումին
արովհետեւ
բանաստեղծը մահապարտ է
եւ ես սուլթանն եմ
արմատներ կը շրջեմ գերօ գերօ
գրայարտութեան պէս
եւ պիտի ցնջեմ տխրութիւնը Ուրբաթ գիշերներուն
եւ պիտի լուամ կոյնակը գիւղին

digitised by A.R.A.R.®

ամէն կտուցածէ
ամէն երկրնաբանէ
եւ ամէն տառապանքէ



Բայց եւ այնպէս
հաւատա՛ ինծի
զգացի ինչպէս ամօքն զզացի
եւ կրակը շօշափեցի
եւ նանչցայ մարդը անպատուօքեան
աչիւնում մէջ փոփրեքում
եւ մեծեքում
եւ լացի ինչպէս ազատագրութենքը կաւ լան
լուօքեան մէջ
եւ մահդ սգերգեցի իմ իսկ մահով
բայց եւ այնպէս
հաւատա՛ ինծի

զլուխդ պիտի կախեմ բերդին վրայ
եւ բոզ տալքանը մնայ
զերօ զերօ արմատներ շրջելով
զրպարտանք ինչպէս

ՊԱՆՆՏ ՀԱՅՏԱՐԻ

Շ Ա Ն Ա Ն Դ Ո Ւ Մ Տ

ՏՆՄՈՒՑ ՍԵՆԵԱԿԻ ՄԸ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Շուշան նստած է «Հորա Շուշ» մայթ-
աբնաբանին մէջ: Հոն դաշած է զիւ մը
գիտութիւն: Նոր բարեկամութիւններ
կ'ուզէ հաստատել: Թող օտարներ ըլլան
անոնք, ի՞նչ փոյթ: Արեւմտախորհրդան
հանդէպ հետաքրքրութիւնը կիրքի վե-
րածուած է: Ապառնակը բերած է պատ-
ւիրուած թէյը՝ շաքարին ու կիտրոնի
շերտերուն հետ: Կը համոզուէ: Քաղցրա-
բոյր հեղուկը կը համայացնէ զիմքը, կը
նայի շուրջ-բոլորը, ուր տակաւին աթու-
ններ դրուուած չեն: Կ'ուզէ հանդիպիլ
մէկու մը, երիտասարդի մը, ո'ւնէ երի-
տասարդի, որուն հետ կարենար քանի մը
անուշ խօսք փոխանակել, արամադրու-
թիւնը փոխուէր: Աչքերը արդէն կը հե-
տեւին բարձրահասակ սիլուէթի մը, որ
տեղ կը գրաւէ իր սեղանին մօտիկ: Թը-
խաղէմ, կանաչ աչքերով երիտասարդ մը:
Շուշան նայուածքը կը դաժէ սողուն գը-
րաւած սեղանին, աչքերը կը դառնան
մերթ անոր աչքերուն, մերթ՝ մազերուն,
մեռքերուն շուրջ, բայց մա'նաւանդ կը
մխրճուին անոր աչքերուն մէջ, ուր զրժ-
քութիւն կտոր մը կը շողար: Շուշան
կ'ուզէր խլել այդ թանկագին ակնաքորը,
անդիմադրելի ցունկութեամբ կ'ուզէր
զայն սեփականացնել, բայց ինչպէ՞ս:
Քիչ ետք աղուն ժպիտ-պատասխանը կը
դիւրացնէ իր մտադրութիւնը: Կը ժպտի
նսեւ Շուշան: Այո՛, կը ժպտի անծանօթ
աղուն մը: Յարութիւն բաժնուելէ ետք՝
այս քանիներո՞րդ աղան է, որուն կ'ուզէ
մօտենալ... Միւրոյ փնտառութիւն ու պո-
հանքն աւելի՞ վրէժին հետապնդումն
էր: Կ'ուզէր մէկը խաբել, ինչպէս որ
զինք խաբած էին Յարութիւն եւ Հրայր:

Զարմանալի, Շուշան կը ժպտէր օ-

տար աղուն: Եւ ինչո՞ւ պիտի չժպտէր՝
ազատամտութեան, հաւատարմութեան առ
դարուն: Դաւանանքի՞ն. ո՛չ, չի՛ կըր-
նար ըլլալ, որովհետեւ այլեւս իրեն ըս-
պառող մէկը չունի, բոլորն ալ հեռացած
են, ու ինք կարէքը կը զգայ իրեն մօտե-
ցող մէկուն, նոր Հրայրներուն: Յարութիւն
վաղուց չէր այցելել իրեն, անծանօթ
պատճառներով: Հրայրն ալ Ամերիկա
մեկնած էր...

Կանաչ աչքերով աղան աչքը յոժա-
ւօրէն սեւեռած կը պահէ Շուշանին վը-
րայ: Աչքերու խաղ: Տարօրինակ մղում
մը կ'ունենայ մօտենալու աղուն սեղա-
նին, նստելու անոր կողքին եւ զրուցելու:
Այո՛, զրուցելու անծանօթ աղուն հետ:
Ի՞նչ կ'ըլլայ, արագութեան դարն է...
Ինչո՞ւ սպաննէր հաճոյքին իրաւունքը,
երիտասարդութեան սենդը: Յիշեց Փիե-
ռը, իրենց գրասենեակին պաշտօնակիցը,
որ յաճախ կը կրկնէր.

— Շուշան, կեանքէն մեծ բաներ մի
ակնկալել, կեանքը մեծ բաներ չունի
առկիւք մեզի... Կեանքը բազկացած է
պտտիկ, լա՛տ փոքր հաճոյքներէ, որոնց
եթէ կարեւորութիւն տանք, կը վերած-
ւին երջանկութեան: Ուրիշ տեսակ եր-
ջանկութիւն չկայ: Մի՛ սպասիր, չեա
զտներ: Դո՛ւն պիտի ստեղծես թու եր-
ջանկութիւնդ:

Այո էր Փիեռին փոխանցած երջան-
կութեան թեման: Ժպիտ, բարեկամու-
թիւն՝ անծանօթին հետ, նոր դէմքեր,
զարմեալ ժպիտ մը ու քաղցր ու զուք
զրոյցներ...

Տղան կարծես կը կարգայ Շուշանին
միտքը: Շուշան լսած է Խիշիքաթի կոչ-
ւած մղումի մը մասին. աներեւոյթ թե-

լով մը կայսուի մէկու մը: Բայց այդ մէկը անհրեւոյթ չէ, այլ՝ ներկայութիւն, միտ ու ոսկորով, շօշափելի գոյութիւն, իր շատ մօտիկը: Ինչո՞ւ փախցնէր առիթը: Կրկին կը յիշէր Փիեռը, անոր յորդորը, փխրոտփայութիւնը եւ ինքնիշխան կը խոստանար Հնազանդիլ անոր ձայնին: Վերջապէս, եւրոպական ուսում քստացած երիտասարդ էր, փորձառու: Որքան հետապնդած էր զինք՝ միասին զգուրս կլլելու: Համար, բայց Շուշան միշտ ալ մերժած էր. չէր ձեռքըցած անոր ներկայութեամբ, բայց խօսքերը պահած էր մտքին մէջ: Ինք սրտով կը շարժէր, կարեւորութիւն կու տար սրտային յորդորներու, մտքին տալով իր զգեստական իրաւունքը...: Բայց հիմա, այդ կանաչ աչքերով տղան մտած էր իր սրտէն ներս ու հոն բան մը կը խառնէր...

Մօտենում արդեօք... ամօթ է, արդեօք... ամօթ... ո՞ւր... ո՞վ ըստեղծած է այս մերկ բառը, արանց ամբողջութեամբ...

Կարծր ձեռք մը ուսին վրայ կը ճընչէր ու խիստ շեշտով ձայն մը կը հնչէր ականջին. «Բայց ո՞ւր մնաց հայ աղիկայ ամօթիս ան պարկեշտութիւնը...»: Բան մը կը ծալուէ իր մէջ. քիչ առաջ բաց դէմք մըն էր, հովին զիմաց, որ կը փակուէ անտեսանելի «այրեանք» մատներով. «Ի՞նչ հայ ես, ասիկա օտար աղիկինբուրս զործն է...»: Բայց ինչո՞ւ կարգաց փնտրիմիզի վերաբերեալ այդ հատորները, ուր հոգեբաններ, ընկերաբաններ, սեռաբաններ եւ դեռ ուրիշ բաններու վարպետներ հաւասարութիւն, ազատագրութիւն կը քարոզէին: Ներքին խառնիք մը կը կոճկէ ցանկութեան շարքերը: Այս անգամ տղան է զինք հետապնդողը: Շուշան որքան ալ հեռացնէ նայուածքը անկէ, փորձութիւնը կը փաթթուի պարտնոցին ու կը խնդրէ աղիկին, որ նայի տղուն, եթէ ո՛չ անոր աչքերուն, գոնէ... շարքերին, փողկապին, սեղանի ծածկոցին... Արդէն Շուշան կը ժպտի անդիմադրելի հրամայականի մը անսալով: Համամարդկային ուրբում: Ո՞վ դիտէ...: Իսկ օտար տղան իր քոյն է արդէն, աթոռը միացուցած Շուշանի աթոռին, զլիտու խոնարհ շարժումով բարեւելէ հոգը:

«Ինչ, զլիտու խոնարհ շարժումով բարեւելէ հոգը»:

— Կուտ իմիջնի:

— Կուտ իմիջնի, — կը պատասխանէ Շուշան ժպտելով:

Ի՞նչ դիւրին է բարեկամանալը, երբ մարդ ժպտիլի դիտէ, միայն ժպտիլ...

Իրեկնամտի բարեւի փոխանակում մէն ետք, որպիսութեան, օդի ու մթնոլորտի շուրջ փոխազդեցութիւնը կը շտապեցնէ անգլիերէնով: Շուշան ուրախ է, որ այդ լեզուն զիտէ՝ բարեւէն աւելի բաներ եւս արտայայտելու շահ: Թէչը ըմբռնելով՝ Շուշան կ'ունենալի տղուն խօսած տեղերէնը, որ անհարազատ բան մը ունէր...

— Ի՞նչ ալ ինձի պէս առանձին կ'երեւիք, — ըսաւ տղան՝ սպասեալին դաւաթ մը դարեջուր աղապրելէ ետք: Այս քաղաքին մէջ առանձնութիւնը որքան թեան համագոր է: Բայց... արդեօք խանդարեցի՞մ ձեզ... մէկու՞ մը կը սղաւտէիք:

— Մասնաւոր՝ ոչ ոքի, հաճելի է, շարունակեցէք:

— Պիտի ուզէի՞ք զաւաթ մը զարեւոյտ ալ գուցէ...

— Գարեջուրէն աւելի՞ ձեր զրոյցը հաճելի է: Թէյով կը զոհանամ:

— Ուրեմն առանձին էք, — շարունակեց տղան, — բայց առանձնութիւնը չի՞ նեղեր ձեզ:

— Ինչո՞ւ նեղէ. ընդհանառակն, աւելի ազատ կը զգամ, Եթէ առանձին չըլլայի, պիտի չկարենայի ձեզի միանալ:

— Ուրեմն չես նեղուիր առանձնութեան:

— Ամենեւին. կ'ըսեն, թէ ամէնէն զօրաւոր մարդը առանձին մարդն է...

— Կ'ըսեն, կ'ըսենք, ճշմարիտ է թեւեւ: Բայց չենք կրնար միեակ աղբիլ: Կարելի՞ է միեակ աղբիլ:

— Այո եւ ոչ. կախում ունի խառնուածքէդ, զբաղումէդ, շրջապատիդ անկեղծութենէն:

— Մարդիկը չէք սիրեր կարծես:

— Այո եւ ոչ...

— Բայց ասիկա առաձգական է. կամ գայտն եւ կամ «ոչ»:

— Աւելի լաւ չէ՞, որ ուրիշ նիւթի մը մասին խօսինք. ձեզ առանձնութիւնը:

— Լաւ. խօսինք յուսախարութեան մասին. յուսախարութիւններ ունեցած էք:

— Յուսախարութիւնը հաց ուտելու պէտք բան մըն է. ամէն օր կը հանդիպինք անոր, բոլոր սեղաններու շուրջ: Կը ծածկենք զայն, կը կշտանանք անոր տուածով, բայց կրկին կ'անօթենանք: Յուսախարութիւնը մեզ կը կշտացնէ պատճառներով, որոնք օգի պէտք կը ցնդին, կը շողանան անոնց զգացնելու: Եթէ յոյսը կայ, յուսախարութիւնն ալ կայ...

— Փիլիսոփայութեան երկրի մը հետեւած էք կ'երեւի. ուսանողուհի՞ էք:

— Ամբողջ կեանքը դպրոց է, ու մարդիկ՝ ուսանողներ: Անշուշտ դուք եւս ուսանող էք:

— Ուսանող եմ, բայց կը հետեւիմ դպրոցի մը:

— Իսկ ես վաղուց հեռացած եմ այդ դպրոցէն, պատերուն նայիլ չեմ սիրած, ոչ ալ յոխորտ փրփեռներէն. ծակ խօսքերուն հետեւելու փափաք ունեցած եմ: Կենտրոն դպրոցը շատ բան օտարացուցած է ինծի: Երբ կեանքը լեցուն է արտերում եւ էգերով, ա'լ ինչ հարկ դրոշմ...

— Դառնութիւն մը կայ ձեր լեզուին ու խօսքերուն տակ. արական սեռի՞ն կ'երթայ ձեր դժգոհ ակնարկը:

— Այսինքն... արական սեռ ըսելով պիտի հասկնանք մարդոց այն տեսակը, որ ոչինչ գիտէ, բայց շատ բան կ'սկզբնորոշեն: Մարդու տեսակ մը, որ կը զոգայ բաց սրունքի մը դիմաց, ինչպէս մանուկ մը՝ օձին դիմաց: Մարդու տեսակ մը, որուն տուած են զօրաւոր սեռն անունը, մինչ՝ ամենէն զակար սեռն է, երբ գտնուի հոլանի լանջի մը ներկայութեան, ուր տերեւի պէտք կը սկսի երեւալ՝ քիչ ետք իյնալու համար դետին:

— Այսքան բանէ՞ր սորվեցուցած են ձեզի տղաքը:

— Շա՛տ, շա՛տ բաներ: Անոնք մեծագոյն փրփեռներն են, ամենազէտ դասախօսները, պոռոտախօս ըլլան թէ

digitised by

Խելացի: Անոնք ինծի սորվեցուցած են ձանձրանալու եւ ձանձրոյթ սպաննելու արուեստը: Անկեղծօրէն կը փարիս իրենց, ու օր մըն ալ յուսախարութիւնդ կը հաստատեն: Ոչինչ այնքան վարկարկել է, որքան խորուած ըլլալու իրականութիւնը: Ներկայիս երբ փողկապ մը տեսնեմ, կը դգամ, թէ պիտի խեղդուիմ:

— Ինչե՞ր կ'ըսէք. արդեօք խանգարեցի՞ ձեր հանգիստը, ազատութիւնը:

Տղան ձեռքը կը տանի պարանոցին եւ՝

— Ի՛նչ աղէկ եղաւ, որ փողկապ չեմ դրած այսօր: Չեմ կարծեր, որ բոլոր տղաքն ալ խաբողներ, խեղդողներ ըլլան: Եթէ կան յարեր, կան նաեւ բարիներ:

— Աղջիկները ընդհանրապէս կը հանդիպին չարերու. կարծես բնաւ բարիներ գոյութիւն չունենային: Եթէ օր մը փողկապը՝ զազրի նորոյթ ըլլալէ, այն ատեն հաւանաբար բան մը փոխուի կացութեան:

— Այն ատեն մօտայի պիտի վերածուի աղջիկներու եւ տղոց փոխարարներութիւնը:

— Կարծեմ ճիշդ բառը գործածեցիք. մոտա... Դարուն բառածիւրքին ամենէն փոփոխականը, յեղշուղական մը, լարծուն, որ չի կրնար հաստատուիլ ոչ մէկ պատուանդանի վրայ:

— Նոյնը կարելի է ըսել աղջիկներուն համար: Չես գիտեր հետեւին ի՛նչ լեզուով խօսիլ. կը շփոթիս:

— Ուրեմն շփոթի մէջ էք հետո խօսելով:

— Անկեղծ ըլլալու համար՝ ոչ, իմ հանդիպած աղջիկներէն տաղիկն էք, զոր կը գտնեմ այսքան դիւրահաղորդ ու անկեղծ:

— Չեմ ուզեր յոգնեցնել տղաքը:

— Անշուշտ փողկապ չունեցող տղաքը... Հետաքրքրական է ձեզ լսելը, բայց ափսոս, որ ժամանակս կարճ է. ասիպոսած եմ ձեզմէ բաժնուելու: Հա՛մալաբարներ դասախօսութիւն մը կայ: Պէտք է ներկայ դտնուիմ: Կ'ուզէ՞ք ընկերանալ ինծի:

— Դժբախտաբար՝ ոչ: Ես ալ համարել մը ներկայ պիտի ըլլամ Վեփլընի

A.R.A.R.@

մէջ. Իտալիայէն երգիչներ եկած են:

— Երաժշտութիւն կը սիրէ՞ք:

— Շատ: Հոգի կու տամ համա-
մարդկային վայելքներու համար, — քո-
սաւ Շուշան եւ ոտքի ելաւ:

— Պիտի ուզէի ձեզի հանդիպիլ ու-
րիշ անգամ մը, — բաւաւ տղան ու աւեր-
ցուց, — կարելի՞ է այժմէն ժամադրե-
լիլ:

— Ինչո՞ւ ոչ, ես կը սիրեմ քարեկա-
մութիւնը:

— Ուրեմն, վաղը իրիկուն, այս ժա-
մուն, հոս: Ը՛... ք՛... կրնա՞ք նսեւ ուն-
եակս դալ: Մեկ ոչ ոք կը խանդարէ: Հի-
մա անցնինք տան մօտէն: Այս կողմերն
է, «Սթրենտին» դիմացի շէնքը: Յոյց
տամ ձեզի, որպէսզի վաղը դժուարու-
թիւն չունենաք: Ուղղակի հոն եկէք...

✽

Շուշան կը քալէ անծանօթ երիտա-
սարգին հետ, բազուկը կը շփուի անոր
բազուկին, որմէ ջերմութիւն կ'արտահո-
սի: Կ'ուզէ աւելի մօտենալ, սեղմուիլ
տղուն: Մերթ զայն կը շփոթէ Յարութիւն
հետ ու կը կարծէ, որ կողքին քայլողը
Յարութիւն է... Կը սթափի. անծանօթ մըն
է քովինը: Ուժ մը դինք կը կաշկանդէ:
Բայց հովը դուրս կը նիւթէ: Մաղերը կը
հպին տղուն պարանոցին: Շուշան աչքե-
րը կը բարձրացնէ իր ուտերէն շնչող աւ-
ղուն դէմքին, որ դարձած է իր կողմը:
Նայուածքը կը սուղուի տղուն կանաչ աշ-
քերուն խորութեան մէջ:

— Հո՛ս է տունս. առ չէնքին մէջ, Կը
մտնէ՞ք այս մուտքէն, կ'առնէք վերելակը,
կը սեղմէք 13րդ կոճակին. առաջն է սեն-
եակս:

— 13րդ յարկ... 13 թիւը ոմանց
համար փոքր մալէօք է... Ես ալ այդ
թիւին հանդէպ հախապաշարուած եմ:
Ձեզեք այդ սենեակը. ձախորդութիւն կը
բերէ...

— Վաղը եկէ՛ք, օտուգեցէ՛ք, ետքը
կը մտածենք... Ձեր սիրած տունը կ'եր-
թանք...

— Այդքան շո՞ւա տեղի կու տաք քը-
մայքներու առջեւ:

— Բժայք չէ, այլ՝ պարզապէս հա-
ճելի թուիլ, կամ հանոյք պատճառել:
Ուրեմն վաղը, ճիշդ ժամը ճին: Կը սպա-
սեմ:

Շուշանն ու տղան կը նային իրենց
ժամացոյցներուն, ապա՝ իրարու աչքե-
րուն, կը ժպտին եւ... պա՛յ-պա՛յ...

✽

Ամբողջ գիշեր Շուշան կ'երազէ ան-
ծանօթ տղուն հետ ունենալիք վաղուան
հանդիպումին մօտին: Ո՞վ էր այդ երբ-
տասարդը, որուն սենեակը երթալու հա-
ւանութիւն տուած էր անմիջապէս: Զար-
խալեցա՞ւ...: Եթէ վաղը չերթայ անոր
տունը, ո՞վ պիտի դատապարտէ զինք:
Թող տղան աղասէր, աղասէր: Թող ան-
գամուան մը համար ինք խարէր աղայ
մը: Բայց ինչո՞ւ առիթ տայ զէջ համա-
րումի: Ինչո՞ւ համար տղան ըսէ, Ե՛կ աղ-
ջիկները կը ստեն, իրենց խոստումը չեն
յարգեր: Պէտք է դանկ ուրիշ միջոց մը,
խոյս տալու համար այդ հանդիպումէն:
Թերեւէ առկած մը պատահի հոն... Ե
Թերեւէ աղտոտ քիմի մըն է, քաղաքա-
վար մարդու շտապէ՛ք ձեզ տեսնան: Ի՞նչ
աղդի դաւաճ է արդեօք: Ինչպէ՞ս եղաւ,
որ մոռցաւ հարցնելու: Ոչ իսկ հեռա-
ձայնային թիւ մը ուզեց: Բայց կարեւո՞ր
էր պատկանելիութիւնը: Յարութիւն իր աղ-
ջին դաւաճը չէ՞ր, ինչո՞ւ լքած էր զինք
առանց պատճառի, առանց բացատրու-
թիւն մը տալու: Ինչո՞ւ անպայման քա-
ղաքակրթուած աւաղակ մը տեսնել այդ
աղուն մէջ, Բայց որքա՞ն դրուիլ էր
Կարելի էր սիրել զինք: Վաղը կը հարցնէ
անոր անունն ու ազգանունը: Արդէն հա-
մակրած էր: Իսկ եթէ Յարութիւն իմանար:
Արդեօք վերջնական էր անոր հեռանալը:
Արդեօք պիտի չձանձրանա՞յ այդ կեղծ-
մէն...: Բայց ինչպէ՞ս սիրել այս օտար
տղան, հարց տուաւ Շուշան ինքնիրեն
ու պատասխանեց. ինչո՞ւ: Սէրը ե՞րբ
պայման ճանչած է, չարունակեց մըտ-
մըտալ սիրոյ մասին, հաստատելով, որ
միակ ճշմարտութիւնն է սէրը, որ հաշիւ
չի հանդուրժեր: Սէրը նախօրօք կաղմը-
ւած արամադրութիւն չէ, չարունակեց

Շուշան պատասխանել էր մէջէն խօսող անձի ծանօթին։

Իստալացիներուն համերգը ինչո՞ւ սիրեցի, հակասակ։ ոչ մէկ բառ հասկնալու։ Ուրիշ է սիրոյ լեզուն, երգի լեզուն պէս է։ Համամարդկային ապրում ու վայելք։ Բայց իր սենեակին մէջ առաւել աւելի պիտի ունենամ. զինք ճոնշնալու, քայլերից ինքզինք Շուշան, նոյն ատեն ինքնաքննարկումի ենթարկելով իր յանդգնութիւնը։ Իրաւունք ունի՞մ անծանօթ տղու մը սենեակը երթալու. համամարդկային սիրոյն։ Երգի վայելքը բաւարար չէ։ Ի՞նչ տարբերութիւն պիտի ունենամ հասարակ պոռնիկէ մը։ Ո՞ր մտաց պարկեշտութիւն։ Պէտք չէ՞ տարբերիմ օտար աղջիկներէ։ Ինչ որ եւրօպացի կամ ամերիկացի աղջիկը կ'ընէ, ճիշդ կ'ընէ, հապա ինչո՞վ դանազան էի միւսներէն...

Շուշանի ժամօրումները բարակ ժանուղ թելերու նման հրկարեցան, կծկրւեցան, մերթ թնդեցան արթուն գիշերուն մութին մէջ, առանց կարենալ ուրողութիւն մը յանդիլու. վաղուան ժամադրութեան շուրջ։

❖

— Գարեջուր մը կ'առնէ՞ք։

— Խմելու ախորժակ չունիմ

— Հանգիստ նստեցէք, — ըսաւ երիտասարդը ուրախ տրամադրութեամբ եւ շարունակեց ժպտուն, — որքան լաւ ըրիք, որ եկաք։ Կը կատկածէի, որովհետեւ շատ հանդիպած եմ փոփոխամիտ աղջիկներու։ Սր մը տուջ կը խոստանան, օր մը ետք կը ժողանան։

— Եկայ, բայց չուտ պիտի մեկնիմ։ Անակնկալ գործ մը կը ստիպէ, որ չուտ մեկնիմ։ Եկայ պարզապէս՝ միւս աղջիկներուն նման խոստումս զրոյս չըլլալու համար։

— Քանի որ եկած էք, քիչ մը խմենք. քիչ մը ուշացէք ձեր ժամադրութեան։

— Խմել չեմ սիրեր. թէեւ պիտի ուզէի ձեզի բնկերանալ։

— Վախճալէք մէկը ջեմ կարծեմ կ'ուզեմ, որ մնաք։

— Բռնակալութիւն եւ բռնակալներ չեմ սիրեր...

— Սէրը ինքնին բռնակալութիւն չէ՞։

— Ո՛չ... սէրը ազատ կամքի ազատ արտայայտութիւն է։

— Մայրալիզ. ազատութիւններու վախճանը բռնակալութիւն է։

— Այդ տեսութեան ծակ փրկեստիտութիւն կ'ըսեն. անհասկնալի բաներ՝ տարնքն...

— Լաւ, խմենք, կենացդ, — ըսաւ տղան՝ բաժակը բարձրացնելով։

Շուշան բնկերացաւ ածոր, նոյնը ընելով, Երեսասարգը զրոյցի նոր թել մը բռնեց։

— Այսօր տեղական թերթերը գրեցին Խաբայէիան յարձակումի մը մասին։ Ինչ լաւ պիտի ըլլար, եթէ ժողովուրդները գիրար սիրէին, իրարու իրաւունքները յարգէին, փոխանակ գիրար յօշոտելու. եւ կ'ատեմ պատերազմը։

— Պատերազմները կը ծագին սէրերու բացակայութեան։ Այս պահուս կըրնանք մենք իսկ պատերազմի պատճառ դառնալ, եթէ սիրոյ հակառակ գործենք։

— Ես խաղաղապաշտ եմ...

— Ուրեմն կը հաւատաք, որ սիրոյ մէջ պայմաններ գնելը խաղաղութեան դէմ է։

— Ես երբեք պայման չեմ դրած սիրոյ մէջ։

— Աղնիւ օրիորդ, դուք ձեզի կը հասկտէք։

— Ինչո՞ւ պաշտօնական կը խօսիք հետս...

— Օ՛, ինչ լաւ. գիտէի, որ աղնիւ էք։ Բայց ինչո՞ւ անհանգիստ նստումք մը ունիք. կը վախցնե՞մ ձեզ։

— Ամենեւին. բայց պատշաճութիւններ կան. ինքզինքս յանցաւոր կը զգամ։

— Ինչո՞ւ։

— Որովհետեւ... որովհետեւ առաջին իսկ հրաւերին ձեր սենեակը եկայ։ Ձեւ ուղեր. որ սխալ կարծիք կաղծէք իմ մասին։ Վերջապէս, հաւ Սերգայա կամ Ամերիկա չէ. ոչ ալ ես. հարապացի կամ

ամերիկացի: Պատիւի մասին շատ խօսած են մեզի մեր ծնողները, գաղտնարահները: Հեքիաթի մեծի տակ մեզի փոխանցած են պատիւ պաշտպանելու անհրաժեշտութիւնը: Մեծ մայրս շատ հեքիաթներ կը պատմէր պատիւի մասին: Անոնց մէջ մէկը երբեք չեմ մոռնար: Հեքիաթէ աւելի՝ առակի կը նմանի...

— Դուք այլ ինքի պատմեցէք հեքիաթի պէտ: Հետաքրքրուած եմ լսելու:

Ետևան կը ոկոխ պատմել հազար անգամ լսած հեքիաթը, արդարացնելու համար իր ներկայութիւնը եւ փախուստը այդ օտար միջավայրէն:

«Օր մը, Կրակը, Ջուրը եւ Պատիւը ճամբայ կ'ելլեն պառլամէն: Բաւական չըլլելէ ետք, կը հասնի բաժանման պահը: Անոնք հասցէներ կու տան իրարու, երկրորդ հանդիպումին զիրար դիմաւ դըռմենէլու համար: Կրակը կ'ըսէ.

«Եթէ որեւէ տեղ ծուռ տեսնէք, դիտեցէք, որ հոն եմ: Քալեցէք ծուռին ուղղութեամբ»:

«Ջուրը կ'ըսէ.

«Ուր որ դալարիք, կանաչ խոտ ու ծառ տեսնէք, ուղղուեցէք դէպի հոն. դիտ պարտեղներու եզրին կը գտնէք»:

«Հէրթը կու զայ Պատիւին: Ան երկար մտածելէ ետք՝ կ'ըսէ.

«Թարգելի բարեկամներ, դուք երկուքդ տուիք ձեր հասցէները, խորհրդանշական եւ շօշափելի պատկերներով, բայց դժբախտաբար նոյնը պիտի չկարենամ ընել ես: Դս ոչ մէկ նշան ունիմ մեզմէն երեւանի: Անգամ մը, որ կորսնցնէք դիտ, այլեւս չէք գտնուիր...»:

— Խորունկ իմաստութիւն է, — ըսաւ տղան՝ դարձանալով առակին պարզ փոխաբանութեան: Ուրեմն Պատիւը այնքան կարեւոր է ու անհրաժեշտ՝ ձեր կեանքը կենսաւորելու համար:

— Իրաւունք չունի՞մ:

— Ես՝ ա: Ուրախ եմ, որ պատուաւոր աղջկայ մը կը ծանօթանամ:

— Պատիւը մեր միակ գէնքն է, որով կ'ընանք պաշտպանութիւն: Մանձարձակ ազատութիւնը մեզ տեղ չի հասցնէր: Հո՞ն է, որ չենք կրնար նոյնանալ այդ ու կնոջ հաւատարմութեան դադափարին հետ:

Փեմիւնիկը պիտի կործանէ կիներ, իսկ կիները տեղեակ չեն այդ մեծ վտանգին: Միտլ կը մեկնարարեն կնոջ ազատագրումի տեսութիւնը: Վերջապէս, երբ էդր սկիւթ խօսիլ ձեր մէջ, մեր մէջ պէտք է լուէ արուն...

— Հոյակապ մտածումներ ունիք: Ուրեմն կը վստահիք ինձի:

— Անվատահոյսեան հարց չկայ: Կայ պատշաճութեան, մայրելութեան հարցը: Ես եկած եմ ձեր սենեակը հաւատալով մարդուն պարկեշտութեան:

— Հաւատալով հանդերձ մարդուն, անհանգիստ նստուածք մը ունիք աթոռին վրայ: Եթէ աթոռը կ'անհանգստացնէ ձեզ, կրնաք նստիլ մանձարձակ վրայ ու շարունակել հաւատալ մարդուն, աշխարհին, բնութեան. որո՞ւն որ կ'ուզէք...

Օտար ուսանողին անկողինը խառնի-խառն ագնողութիւն մը կը պարզէր: Ետևան անկողինին ու սենեակին խառնակ մթնոլորտէն աւելի կը կշռէր տեղումած կացութիւնը, ուր անուն-ազգանուն հարցընելը կը դառնայ աւելորդ ու անպատեհ: Ետևան իր դիմաց նստած տղան նկատեց հարազատ մը, բարեկամ մը, նոյնիսկ հայ մը, փորձեց ինքզինք նկատել մարդ, հայ ըլլալէ առաջ, հայ մարդ, համամարդկային արդուններով շնորհ: Ամէն ինչ ընկալած գտաւ իր շուրջ, բայց չեւ դիտեր ո՞ր հովէն մտելով, սառնոյցի կտորի մը իննալը դառց իր գլխուն: Կարծեա զարուհ օրով կը գտնուէր լեբան մը զազաթին, ուր արեւին հետ յանկարծ կը սկիւթ միանայ...: Երեւց Ղանաթ Պաքիւլը, Սաննիի մէկ սարահարթը, ուր անգամ մը բարձրացած էր Ետևան խումբ մը բարեկամներով, եւ ուր ամբողջ եղանակին սկսած էր անձրեւել: Մտնելու չափ ցրտած էր լեւեր Օղոստոս տաճարէն...: Բայց այդ սենեակը Ղանաթ Պաքիւլի սարահարթը չէր, ուր կարենար անձրեւել կամ միանել արեւներուն հետ:

Տղան սիկարէթ մը վառելով դրազած էր, բայց հրահանք չէր բաներ:

— Ինչո՞ւ չի վառելի պլիւմէդ, — հարցուց Ետևան:

— Կարծեմ պնդիմը սպառած է:

— Կայծքար ունի՞ս։
 — Կայծքարը չէ կարեւորը, պենդին չկայ։ Առանց պենդինի հրահանը կը նրա մանի ահլու՜նչ մարդու... կմախք ունի, միս ունի, բայց շունչ չունի։
 — Եթէ ուժ ունիս, կրակ եղի՞ր ու բոցավառէ զայն գորաւոր շունչովդ։
 — Ակնարկելիքդ կ'իյնան վերացական տեսութեան կայրւածին։ Բանաստեղծութիւն... Կրակը կը ստեղծուի շփումով. հին-հին օրերուն փայտերն իսկ իրարու շփելով կայծ կը ստեղծէին, իսկ դուն... Որքա՞ն հեռու նստած ես...
 Եռշան շիրջաւ պատասխանել։ Լը-
 ութիւնը դաւ մը կը դարբնէր։ Կոյր հը-
 րժանքը տիւր մտածումներ արծարծեց
 աղջկան ուղեղին մէջ։ Միտքը պզտորե-
 ցաւ։ Թիւ 13 սենեակ... առանց պենդի-
 նի հրահան... օտար տղայ մը հայ աղ-
 ջըկայ մը հետ... Թիւ 13 սենեակի մը
 մէջ...
 — Պայման է ծխելը. խօսի՞ք առանց
 ծուխի, — ըսաւ Եռշան։
 — Առանց ծուխի կրակ կ'ըլլա՞յ։ Ձե՞ս
 որ դուն պատմեցիր Կրակին հեղիաթր,
 քիչ առաջ. պէտք է նախ միայն՝ կրակի
 վերածուելու համար։
 — Բայց մենք բանաստեղծ մը ու-
 նինք, որ ըսած է. «Մեծ Կրակն Երազ
 եւ Կրակ մարել»։
 — Հոյակա՞ղ է. մօխով կրակ մա-
 ղել... Մե՞ծ գիւտ, սքանչելի բանաս-
 տեղծութիւն...
 — Հրահանդ ինծի յիշեցուց նաեւ
 Աւետարանի Յիմար կոյսերը։ Գիտես ան-
 շուշա այդ առակը։ Իմաստուն կոյսերը
 իրենց լապտերներուն համար պահեստի
 իւղ առած էին, երբ իրենց լապտերները
 մարեցան, իւղ լեցուցին ու լուսաւորե-
 ցին, վառեցին իրենց լապտերները։ Մինչ
 Յիմար կոյսերը ոչինչ նախատեսած էին.
 իրենց հետ պահեստի իւղ չէին առած, ու
 երբ փեսան ուշացաւ, սպասումի պահուն
 մարեցան անոնց լապտերները ու չկրցան
 մտնել հարսնետուն. զրկուեցան իրախ-
 ճանքէն, հարսանիքի ցնծութենէն։ Ծիչդ
 այդպէս. հարկ էր, որ նախատեսէիր հը-
 րահանդ պիտոյքը, պենդին ըլլայ թէ

կայծքար, մանաւանդ՝ որ հիւր մը պի-
 տի ընդունելի։
 — Հետաքրքրական է, նոր կը լսեմ
 այդ պատմութիւնը։ Ախտո՞ւ, որ Աւե-
 տարան չեմ կարդացած։
 — Այս գրուազը զիս յուզած է իմ
 մանկութենէս։ Մեր եկեղեցիին փոխանց-
 ւած է այս իմաստութիւնը, բայց մենք
 երբեք չենք ուզած ականջ առլ իմաստա-
 թիւններու, մենք զմեզ առաւել իմաս-
 տուն եւ զերազաս նկատելով։ Աւազ Ծառ-
 թու երեքշաբթին Կուսանաց նախնաւ-
 է։ Այդ օր քեզ եկեղեցի չէ՞ք գացած...
 — Ես քրիստոնէայ չեմ... ընդհան-
 րապէս հաստատեցաւ ալ չեմ...

...
 Լուսթիւնը կլորցաւ, թեւեր առած
 պարեց օդին մէջ, յետոյ՝ ծանրացաւ ու
 ինկաւ վար, յատակին, յետոյ՝ վերած-
 ւեցաւ լուսաւոր լապտերի, կուսանաց
 պատկերի։ Բառեր չէր դոնէր Եռշան զը-
 րոյցը շարունակելու, մինչ տղան կը խա-
 դար հրահանին հետ։ Բայց հարկ էր, որ
 մթնոլորտին ցուրտ գոյնը փոխուէր. բա-
 ւեր եկան Եռշանի լիզուին վրայ։
 — Մարդիկ հղալարներ են, ի՞նչ կը-
 րօնքի ալ պատկանին։ Ատուած բոլորին
 հայրն է։ Մենք բոլորս քոյր-եղբայրներ
 ենք։ Մարդիկ հնարած են դասանաճեհե-
 րու տարբերութիւնը...
 Այս բոլորը ըսաւ Եռշան, քարոզչի
 մը թաց տրամադրութեամբ, խիւ տղան...
 — Ես կարեւորութիւն չեմ տար կը-
 րօնքներու, դասանաճեհերու։ Մեր պա-
 պերը քիչ մը մոլեռանդ եղած են։ Մոլե-
 ռանդութիւնը կը կուրցնէ ընկերութիւ-
 նը։ Կը սպաննէ սէրը ու մարդիկը կը դար-
 ձընէ թշնամիներ։
 Անհաճոյ էր պահը. Եռշան ուղեց
 Թօթաւել արտին վրայ ծանրացած փոշին,
 ու մտաւ սովորական հարցումներու կալ-
 ւածին մէջ։ Հարցուց տղուն...
 — Երկու օրէ ի վեր միասին ենք ու
 տակաւին իրարու անունները չենք գի-
 տեր։ Ի՞նչ է ձեր անունը...
 — Փարամազ...
 Եռշան պահ մը լուռ մնաց։ Կը ճշդ-

նէր Ծարձակ անունը՝ յարժարցնել ազգի մը. կարծես զսաւ բառին ծագումը ու լաւ աւաւ։

— Մեր ժողովուրդները դրացիներ եղած են։ Ճակատագրական կապեր աւելացած ենք։ Ձեր ազգային պատմութենէն տեղեակ էք անշուշտ։

— Պատմութեամբ չեմ հետաքրքրուած բնաւ։ Ինչ որ անցեալ է եւ հիւսիսը, արդէն մեռած է ու թաղուած։ Պէտք է նախ ինչ նոր կեանքին, ապագային։

— Ես ձեզի պէտք չեմ մտածեր. անցեալէն բոլորովին խոսելի կարելի չէ։ Իսկ ինչ որ նոր է՝ անպայման սիրելի եւ հաճելի չէ։

— Ես արդիական ըմբռնումներով ուսանող մըն եմ. կը հաւատամ միայն համամարդկային զաղափարներու։ Հարկ է յիշել ինչ աշխարհը, թօթափել անոր վրա ինչ հին փոշիները։ Իսկ ձեր անտանը։

— Ետեւան։ Ես հայ եմ։

— Ախորժապուր անուն է. Ետեւան։ Իմաստ մը ունի։

— Մագիկի մը անունն է, ընդհանրապէս սպիտակ կ'ըլլայ եւ անձեզութեան խորհրդանիշ կը նկատուի...

— Ուրեմն մենք դրացիներ եղած ենք։ Որքան լաւ։ Մտեցիք ինձի իրերէ դրացի։ Դրացիները պէտք է ապրին իրարմով, պէտք է օգնեն իրարու... I need you...

— Մենք շատ կարեւորութիւն կու տանք պատմութեան, — շարունակեց Ետեւան, առանց լսած ըլլալու տղուն Այ Ունի։ Մեր ժողովուրդը ապրած է յիշելով իր անցեալը։

— Ըսել չուզեցի, որ մոռնաս անցեալդ. մտածումներու տարբերութիւն է. հաւատալու եղանակ։ Ապրինք իրերէ դրացիներ, անցեալի դրացնութեամբ... մօտեցիր...

— Մենք այսօր ալ դրացի ենք ձեզի։ Հայրենիք ունինք ձեր հայրենիքին սահմանակից։ Մեր հայրենիքը մեր ճակատագրի պատմութեան շարունակութիւնն է։ Իմ ճակատագիրն է անիկա. խլուած, լքուած, խարուած, արորուած, բայց միշտ կենդանի, միշտ ապրող...

— Եթէ ջնջուէին ազգութիւններու

անունները եւ հայրենիքներու՝ սահմանները, աշխարհ գտնար մէկ հայրենիք եւ մէկ ազգ, ես աւելի ուշախ պիտի ըլլայի, — բուա Ծարձակ։

— Անիրականանալի բաներ կ'ըսէք։ Աղուէսը չի կրնար մօկ ըլլալ, ոչ ալ նապաստակը՝ կատու։ Իւրաքանչիւրը իր ճիւղաճառածքը ունեցող կենդանիներ են. այսինքն՝ տարբեր «ցեղի» անասուններ։

— Մի մոռնար, որ մենք մարդ ենք եւ ոչ անասուն։ Լաւ, վերջ տանք փոճ խօսքերու։

— Եթէ ժողովուրդները իրարու պատմութիւնները լաւ ուսումնասիրեն, առաւել կը յարգեն զիրար։ Բայց պարտաւոր չեմ սորվելու մեր պատմութիւնը,

— բուա Ետեւան քծծիծաղով, — բայց քանի որ ես քովդ եմ, ինքնաբերաբար կը կարդաս Հայոց Պատմութիւն...

— Երկու տարի է ի վեր հետադարձ եմ հայրենիքէս եւ կ'ուզեմ պատմութիւնս մոռնալ բարեկամութիւններով։ Իմ հայրենիքս հիմա դուն ես։

— Կը շփացնէք դիւ... Հայրենիք փոխել լաւ բան չէ...

— Ժշմարտութիւնը կ'ըսեմ. հիմա դուն կրնաս օգտակար ըլլալ ինձի, եթէ...

— Եթէ... այսինքն... եթէ սահմանները քանդէմ...

— Քանդելու հարց չկայ. պարզապէս ջնջել սահմանները եւ իրաւունք ունենալ որեւէ երկրէ ներս մտնելու՝ առանց անցողիկի։ Կրցա՞յ հասկցնել, չէ՞ք կարծեր, որ մեծ գիւրութիւն է առիկա մարդկութեան համար... Հայրենիքներու մասին մտածելը ոչինչ կը փոխէ մեր կացութիւնէն։ Դուն ու ես տարագրիներ ենք։ Պէտք է պիտանք վերածուիլ հասարակաց հայրենիքի։

— Իմ մէջ հայրենիքի գաղափարը առաւել կը թանձրանայ օտարութեան մէջ։ Ես հետու եմ հայրենիքէս, բայց ինքզինքս շատ մօտիկ կը զգամ անոր։ Երբ ստաքերուդ տակ հող չունիս, կը մնաս պարագին մէջ. օգային բան մը... Կը տեսնե՞ս, ճիշդ ինձի պէտք է հիմա ես ինքզինքս օգնել կախուած բան մը կը նկատեմ, ճիշդ այդ պատճառով տօգերս՝ ամուր կը

գտնեմ առաքարին, որ շաղթաքիմ...

— Ժամանակավորեւ խոսքեր են մըտածումներդ: Կայնա՞նք խնդիր չկայ: — Սեփական հողը չի կրնար ժամանակավորեւ ըլլալ, մասնաւոր մեր հայրենիքը որուն գինը շատ անդ վճարած ենք, — պատասխանեց Եռչան: քիչ մը ջղային:

— Ինչո՞ւ:

— Եթէ քու ժողովուրդդ պատմութիւնը լաւ պարտած ըլլայիր, հիմա ինձի գինը՞նչ պիտի չհարցնէիր:

— Ըսի՞ քեզի, թէ չեմ սիրեր պատմութիւնը, անցեալը, հինը, որ գերեզմանի գոյն ունի: Հիմա երիտասարդ ենք եւ գոռարճանալը մեր իրաւունքն է: Մօտեցի՛ր: Այ նիւտ եմ...: Ես քեզի պէտք ունիմ եւ ոչ՝ պատմութեան, — ջղային լեզուով ըսաւ Պարամազ:

— «Լաւ՞նք ես Վարդան Մամիկոնեանի անունը, որ մեռաւ Տղմուս գետի ափին: Ներկայիս այդ գետը գոյութիւն ունի մեր երկրին մէջ, սահմանամերձ տեղ մը, հեղեղատի մը նման, գորշ ու պղտոր: Գործով: Դարեր առաջ այդ գետը ներկայեցաւ կարծիք արեւմտի: մեր քաղաքուն արեւն էր այդ: Անոնք մեռան հայրենիքի եւ կրօնքի համար, ազգի փրկութեան համար: ...»

— Ձեմ սիրեր քարոզ լսել: Քեզի ըսի, թէ աշխարհագրութեան եւ պատմութեան հետեւած ուսանող մը չեմ: Իմ հիւզս երկրաչափութիւնն է: Գործս չափերու եւ գիծերու հետ է, հաշիւի հետ: Մէկ առաւել մէկ՝ կ'ընէ երկու: Պա՛րզ է: Ես մէկ, դուն մէկ: Եթէ գումարութեան կ'ըլլանք երկու, կ'ըլլանք հարուստ: Վերջապէս, երկուքը մէկէն աւելի լաւ է: Այո՞...»

— Իսկ մեր Աւետարանը կ'ըսէ, երբ երկու մարմիններ գումարութիւն՝ կ'ըլլան մէկ մարմին: Ուրեմն եթէ գումարութեան, մեղմէ բան մը պիտի պակսի ու պիտի վերածուի մէկի: Հետեւաբայ, մէկ առաւել մէկ, նուազ մէկ՝ հաւասար է երկուքի...: Հանումի խնդիր է եւ ոչ գումարումի...

— Ուղեղս կը յփնքնեմ, մինչդեռ մենք երկուքս ալ տնքանքի, հանդիսի

պէտք ունինք, — ըսաւ Պարամազ գուրգուրալի եւ դարձեալ կրկնեց իր Այ նիւտ եմ, այս տեղում պաղատագին չեւո մը դրած բաւերուն եւ ձայնին վրայ, — մօտեցիր՝ ըսի, խնայցի աղջիկ կ'երեւի: Այ նիւտ եմ...: Մի ձանձրացներ գիտ...: Աղջիկները պէտք է մտածեն միայն սիրոյ, եւ ոչ՝ պատմութեան մասին...

— Սիրոյ մասին չեն մտածեր, Պարամազ, սէրը կ'ապրին: Սէրը սիրա է եւ ոչ միտք...

— Ուրեմն յայտնէ, արտայայտէ ազդեցութեան, զգացումները, համարյոք մը կամ...

— Համարյոք չեն խնդրեր, չեն պահանջեր, հրահանգով չի տրուիր, կը... ձօնեն, կը նստին...

— Աւելի լաւ՝ նստիմ:

— Ձեռքերուս մէջ նստիմ չունիմ,

տե՛ս, գտաւարկ են ափերս...

— Գեղեցիկ մարմին ունի: Աչքերուդ մէջ փոթորիկ կը փրփրի: Համարժէք գիտ...: Այ նիւտ եմ...

...

— Ամբողջ ուժով նորաշնորհ Աւարայր մը կը մղէր Եռչան: Կարծես գումարէր Վարդան Մամիկոնեանի, ու՛ր կը շարունակէր հօրը կիսատ ձգած մարտը: Պարսկական փրկիչը կարծես կը արողէին զինք, կը բռնէին, բայց ինք չէր մեռնէր...

— Դուք հագարաւոր փրկիչ ունէ՞ք, Պարամազ, — լուսեցաւ Եռչանի խուլ ձայնը, որ կարծես կը լուսէր անդունդի մը խորերէն, — իսկ մենք, մենք փոքրաթիւ քաղեր: 1036 նահատակներ տուինք մեր փրկիչին թաթերուն տակ: Քանի որ հաշիւի հետ է գործը, գոնէ այս թիւերը պահէ մտքիդ մէջ: 1036 նահատակ. այո՞...: Պարտուեցանք: Դուք յաղթեցիք, քու պապերդ յաղթեցին իրենց փրկիչով: Բայց մենք չմեռանք, չմեռանք...

— Մի՛ շարունակիր: Պատմութիւնը կ'ատեն: Անարգարութիւններու ցուցատախտակ մըն է: Մոռցի՛ր փրկիչը դաւը...: Հիմա՝ հիւշէն կը խօսի: Հիւշատցիր ու այլէ գիտ...

— Բայց դրացին կը մոռցուի: Ինչ-

պէ՞ս մտնալ ձեր փրկերուն գործութիւնը...

— Ծիշդ ես, գրացիները չեն մոռցրիր, բայց էթէ սենեակին դուռը փակես, գրացին կը մնայ դուրսը: Տես, ձեր դուռը փակ է: Դուն ու ես ներկայ ենք հոս միայն... Որքա՞ն զեղեցիկ է մարմինըդ... Այ նիւս ես...

— Երբ աչքերու փակեմ, աշխարհ կը մտնէ կոպերուս տակ, իր զեղեցիկ ու տըղեղ զոյներով, գորշ ու մութ պատկերներով, իր բզկտոյ պատմութեամբ, լըլկոյ անցեալով, — դիմադրեց Շուշան, ջանալով փրկուիլ փարամազի բազուկներուն բռնակալութենէն:

— Փակէ աչքերդ, թող աշխարհ մտնէ կոպերուդ տակ. ամէնէն վերը ես պիտի գտնուիմ... Այո՞...

— Կ'ուղեմ մէկնիլ, — փափայց Շուշան, — ժամադրութիւն ունէի. ուշացայ:

— Կ'երթաս, հոգ չէ ուշանալդ, բայց խոստացիր, որ վաղը կրկին կու գաս, իսկ ես կը խոստանամ էջ մը պատմութիւն կարդալ:

— Ձե՛ր պատմութիւնը:

— Ձեր ու ձեր պատմութիւնը, որ գրացիներու պատմութիւն մը ըլլալ կը թուի, սահմաններ իւրացնելու պատմութիւն, միացեալ պատմութիւն մը, մէկը միւսէն անբաժան...

— Ուշիմ աշակերտի կը նմանիս, բնական' շուտ ըմբռնելու:

— Ուսուցիչներու շունչէն կախում ունի...: Կարծես սկսայ սիրել պատմութիւնը, — քսաւ փարամազ ժպտելով, ափերովը շտկոտելով խոսնշտկուած մազերը: Հիմա կ'ըմբռնեմ, թէ կեանքը միայն դիմ ու թիւ չէ, նաեւ շարժում, յեղաշրջում, անցեալի ու ներկայի միասնական ճամբարութիւն, անցեալին ու ներկային մէջ, նաեւ կապ ու դրացնութիւն, բարեկամութիւն: Ուրեմն ձեր պատմութեան առաջին դասը՝ վաղը...

— Վաղը, այո, վաղը... Յետո՞ւն թիւն փարամազ: Ուրեմն յիշէ. Տղմուտի ափին մենք պարտուեցանք, բայց չմեռանք: Մեռանք, բայց չթաղուեցանք:

Այսինքն՝ շարունակեցինք տարիլ: Մնաս բարով, փարամազ...

— Յետո՞ւն թիւն. կը սպասեմ... վաղը...

Շուշան արտորանքով դուրս կ'ելլէ անծանօթ երիտասարդին սենեակէն: Դուրսի գով օդը կը հանգարտեցնեն իր ջիւղերը, իր խղճահարութիւնը: Մեռած էմ, թէ օղջ, հարց տուաւ ինքնիրեն: Համբայի լոյսերը կը շլացնէին աչքերը. մութ սենեակէն ետք տուտա լոյսերու շտարեանումը կը մեղմացնէր իր տագնապը, նոյն առին մաքուր պոզոտաները կը թուէին աղոթաւ: Նկատեցաւ հանգիտած առաջին հսկրվիսին ու դիմեց տուն: Ճանապարհին ուղեղը կը ճանկուէին, կը խոցէին սուր-սուր բաներ: Իր աշփոուն պատկերացաւ բարեկամ մը ու անսրկատարած մէկ խոստովանութիւնը. արկածախնդրութիւն մը ունեցած էր թըրքուհի մը հետ, Պէյրութի դիշերային մէկ զբոսատան մէջ: Շուշան ըզայնացած՝ պախարակած էր իր բարեկամը:

— Ամօ՞թ՝ Գուրգէն. ինչպէ՞ս համբարեցիր թըրքուհին. չգողացիր: Մեր նահատակ աղջիկները բան մը չբռնին չեղի...: Գուրգէն անակնկալի եկած, պատասխանած էր, արդարանալու մերկ չըք մեղանք մը կարկտելով. — «Բոլոր հայ աղջիկներուն վրէժը լուծեցի. բզկտեցի պոռնիկը...»: Գուրգէն արդարացումի հիշ մը դասած էր, հնարք մը ճարած էր, իսկ ի՞նչ... Շուշան... Ո՞ր չքմեղանքին դիմէր՝ արդարացնելու համար արդուստ սենեակի մը հանդիպումը: Կանանց հաւասարութեան, ազատագրութեան թեզին, ֆեմինիզմի խարդախ խաբէութեան...:

— «Պարտուեցար, բայց չմեռար», փափայց ձայն մը Շուշանի ականջին:

«Կարեւորը ապրիլն է, ողջ մնալը», հանգարտեցուց Շուշան ինքզինք՝ պատասխանելով փափայցող ձայնին. պարտուեցայ, բայց չմեռայ, կրկնեց ան. չըմեռա՞յ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

1981, Յունիս

digitised by A.R.A.R.@

ԴԵՌԱՏԻ ԱՂԲԱՀԱԽԱՔ

Կուսարի եւ սպիտի անտառներուն մէջ՝
Տղայ մը տերեւներէն հաւաքած խունկին բայրը
Կարծակէ,
Երբ ազրիւն կայտերը կը հռաւիժէ քաղաքի երակներէն:

Նոր ճակատէն քափանցէ գովաւթիւնը,
Շունչին տափուքեամբ արթնցնող բամ մը,
Պատին քարերը միացնող ազիւսէն դուրս կը հասի:

Որքա՛ն անմեղութիւն պէտք է՝
Հոս կուտակուած բարձրացներու համար
Բոցերը մերշնչումին:

Հեռու տեղ մը,
Հսկայ ժայռեր կ'երգեն՝
հովերը ափերու մէջ բռնած մանուկներու մասին:

Պիտի սաւառիւմ ցօղի կաթիլի մը մէջ,
Ուր տեսողութիւնը այնքան յստակ է:

Այս շրթնեղբայրին՝
Զիշրուած ալեակներ կը մեռնին՝ անձայն փրփրելով:

Գիշեր գողցողները,
Քունդ ահաբեկելով՝ երազն/ըդ ալ կրցան գողնալ...

Գողցուած այդ երազները
Գուցէ օր մը ես գողնամ
Ու ի՞նչ տիբաջ վերադարձներու պատրուակով՝
Կազմեմ անոնցմէ գիշերներու յիշատակարանը...

Անծանօ՛ք բացակայ,
Երբեմն ձիեր կը փաթեն մերսէս դուրս ցատկել գազանի
Եւ գողնալ զիս այս անշարժութենէն...

ԱՐԱՄ ԶԻՒՂՆԱՆ

ՓՈԼ ՎԻԱԼԱՐԻ ԿՐԻԿՈՒՆԵՐ

Փոլ Վիալարի ԿրիկուՆոյ (ժկկ արար) մենք կը մօտենանք առաջնակարգ թատերախաղի մը: Պատմութիւնը շատ հուրք է ու երկուսիսմ պարզ, բայց սրբուն մանրակրկէտ ու հուրք: Լիւթանկարչի պարտեղին մէջ, օրուան վերջաւորութեան, տարեց պարուն մը եւ տարեց կին մը սովորութիւն ունին ամէն իրիկուն իրարու հանդիպելու: Մարդը վայելչօրէն հաղտուն է եւ շափաղանց ներկայանալի: Կինը մնացած է սիրուն, հակառակ իր ճերմակ մազերուն եւ կու տայ արգաստութիւնը բարձր դասու: անմեղութեան մը: Եւ անոնք կը խօսին մեղմօրէն եւ սիրով, վերջիւսով հին յիշատակներ: Որովհետեւ միայն երկուսու մէջ է, որ գիրար կը ճանչնան՝ խաղանքիւրէ կը պրպտէ իւր անցեալը: Բայց կամայ-կամայ սրու բռնէր, որու պիտի կը պատրիկ իրենց սրտերը: Մարդը անցեալին սիրած է երիտասարդ աղջիկ մը, որուն երբեք չէ համարձակած յայտնելու իր զգացումը: Ան կը կարծէր, որ իր քննանկան զիրքը կ'արգիլէր նոյնիսկ յայտն անուցանելու այդ մասին: Կինը ինքն ալ սիրահարուած էր երիտասարդի մը, որ բանաստեղծութիւններ կը գրէր. ան նոյնիսկ իրեն համար ալ գրած էր քերթուած մը եւ որ երբեք չդրսեւարեց իր զգացումը աղջկան: Ի՞նչ եղաւ, ո՞ր է հիմա: Ձի գիտեր: Անպայման հանրամանեթ զրոյ: Ինչ է հիմա ու կը գրէ կեցնանունով:

Եւ ահա անցեալը կը պայծառանայ: Այո՛ երկու անմէրը, որ ընթացին կը սիրէին զիրար, առանց երբեք արտայայտուելու, արդեօք թատերախաղին երկու անմեղութեան ներք չէ՞ն: Հեղինակը մեզի կը մզէ զուշտիկ, առանց պնդելու:

Փոլ Վիալար գրած է հոգեբանական հուրք թատերախաղ մը, որ խորաթափանց պատկերացումն է մարդկային սրտին, առանց որեւէ շափաղանցութեան եւ շատ բնական կերպով մտերիմ զգացումները այս երկու անմէրուն ի յայտ կու գան զգալի կերպով եւ կը մեծնան մինչեւ այն վայրկեանին, երբ անոնք պիտի խոստովանին իրականութիւնը: Հեղինակը կը վերջացնէ ճիշդ ժամանակին եւ լուծումը կ'իտով մը կը ներգալնակուի վերջաւորսին հետ, որ կ'իջնէ պարտեղին վրայ:

Վիալարի այս թատերախաղը արժանի է, որ դասուի փոքր դրամադուրիստներու շարքին: Թատերը կրկայն Կարտանալ եւ, իր ճիշդ տեղը տալ անոր Գոմեի Գրանդեղի խաղացանկին մէջ:

ՀԱՅԿԱՆԻՍ ԿՐԻԿՈՒՆ

ԹԱՊԵՐ ՏԸ ՊՕՓԼԱՆ

Փ Օ Լ Վ Ի Ա Լ Ա Ր

Ի Ր Ի Կ Ո Ւ Ն

(Մէկ ԱՐԱՐ)

Հայացուց
ՏԻՐԱՆ ԱՃԷՄԵԱՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԿԻՆԸ.— 65էն 70 տարեկան, ճերմակ մազեր. շատ
գեղեցիկ եղած է: Գլխարկ: Ուտերուն՝ կրկնոց, բիշ մը
տեճօտէ:

ՄԱՐԴԸ.— 75ը անցած: Բարձրահասակ, բիշ սը
կարաճամակ եւ բիշ մը խիստ իր ձեւերուն մէջ: Հան-
գըստեան կոշուած մէկու մը տպաւորութիւնը կը թո-
ղու:

ՊԱՀԱԿԸ.— Սիրուն ու կամայ համագրեստ, ոսկե-
գօծ կռնակներով:

ՏԵՍԱՐԱՆԸ՝ հասարակաց պարտէզ մը. իրիկուն է, Հոկտեմբեր: Ժա-
մը՝ չորսուկէտէն եինգ: Աւագուտ ծառուղի մը կ'երկարի բնին երկայնքին,
ձախէն աջ, որ զայլաբար խոտերով բաժնուած է մարգագետինէն, ցած ու կա-
մարածեւ ցանկապատով մը: Խորքին՝ խնամուած վարդերներ: Կամայ ճր-
տարան մը:

Վարագայրը բարձրանալուն՝ իեմը պարագ է: Ատեն մը ետք, ձախէն
կը մտնէ պահակը, ձեռքերը կռնակին, փարը տնկած. կամայ մը կ'անցնի,
աջ ու ձախ մայելով, տէր ու տիրակալի պէս, ու աջէն գուրս կ'ըլլէ՝ պտտոր
շարունակելու ձեռով:

Հագիւ գուրս ելած՝ ճերս կը մտնէ տարիքուտ կիւնը, փոքր քայլերով
կը յառաջանայ, առանց տեսարարելու կ'երթայ զէպի ճատարանը, սովորու-
թիւն ըրածի պէս, թերթով մը կը մաքրէ ճատարանը ու կը տեղաւորուի, ծաղ-
կաւոր ծրարէ մը կը հանէ ձեռագործը ու կը սկսի աշխատիլ: Քիչ ետք, պա-
հակը կը մտնէ աջէն, հակառակ կողմէն իր շրջանը ընելով, կ'անցնի կնոջ առ-
ջեւէն եւ կը խոնարհի բիշ մը ու կը ժպտի յարգանքով:

Տիկինը գլխու նշանով մը շնորհակալութիւն կը յայտնէ իրեն եղած
յարգանքին ու կը նշմարուի շատ նուրբ եւ չափազանց քաղցրաբարձ ժպտը:
Պահակը կը մեկնի ձախէն, կիւնը կը շարունակէ իր ձեռագործը, աջէն
կը մտնէ տարիքուտ պարտէզ՝ գնալով մը ձեռքին, ձեռքը բռնած է գիրք մը:
Անմիջապէս որ ռոմանտայնը կը լսէ, տարիքուտ տիկինը վեր կ'առնէ գլուխը.
եւ երբ պարտէզը կը մօտենայ, կիւնը, մատը վերցուցած՝ քարեկամական մե-
ղադրանքով կ'ըսէ.

ԿԻՆԸ.— Ուշացա՛ց:

ՄԱՐԴԸ.— Իրա՞ւ (պատրուակ մը փնտռելով), աբե՛ն է, որ կանուխ ժաբը
ժառաւ այս իրիկունէ:

digitised by A.R.A.R.®



ՄԱՐԴԸ.— Իրա՛ն... արեւն է, որ կամուխ մաքը մտաւ այս իրկումն:

ԿԻՆԸ (Ձեռքը երկարելով).— Բարեւ, պարոն:
 ՄԱՐԴԸ.— Բարեւ, սիրելի տիկին:
 ԿԻՆԸ.— Այսօր քիչ մը զով է:
 ՄԱՐԴԸ.— Այո, զգնոցս միասին բերի:
 ԿԻՆԸ.— Ես ալ մուշտակս:
 ՄԱՐԴԸ (կէս-կատակ).— Մեր տարիքի մարդիկ պէտք է զգոյշ ըլլան:
 ԿԻՆԸ.— Լաւ, կոնկրետէք ձեր վերարկուն (ինք կը կոնկրէ):
 ՄԱՐԴԸ.— Գուրգուրոտ էք, սիրելի տիկին:
 ԿԻՆԸ.— Կարելի է՝ զաւակ չունենայս է պատճառը:
 ՄԱՐԴԸ.— Կամ աւելի ճիշդը՝ որովհետեւ կին էք:
 ԿԻՆԸ.— Օ՛հ, այնքան քիչ... Գրեթէ չեմ...
 ՄԱՐԴԸ.— Եւ ինչո՞ւ:
 ԿԻՆԸ.— Մեր եմ...
 ՄԱՐԴԸ.— Բայց կին...
 ԿԻՆԸ.— Մերացած կին մը ուրեմն:
 ՄԱՐԴԸ.— Իսկ ես ծերունի մը:
 ԿԻՆԸ.— Ո՛ւ... Դուք...
 ՄԱՐԴԸ.— Իրաւունք ունիք... Առաւելագոյնը՝ ծեր պարոն մը (ճայելով ձեռնազործին): Գեղեցիկ է ձեր ձեռագործը:
 ԿԻՆԸ.— Իրա՛ն:
 ՄԱՐԴԸ.— Հասկցող չեմ... Բայց սիրուն է:
 ԿԻՆԸ.— Թիկնաթոռի մը վրայ դնելու համար է:
 ՄԱՐԴԸ.— Յենարանի՞ն:
 ԿԻՆԸ.— Այո, արդէն այսպէս չորս հատ ունիմ:
 ՄԱՐԴԸ.— Ձո՛րս հատ:
 ԿԻՆԸ.— Կը զարմանա՞ք:

ՄԱՐԴԸ.— Որքան աշխատանք ու ժամանակ պէտք է... Երկու ամիսէ աւելի է, որ սկսեմ էիք այս մէկը...

ԿԻՆԸ.— Այո, երկու ամիս է, որ ամէն կէտրէ ետք կու գաք այստեղ:

ՄԱՐԴԸ.— Ճիշդ է:

ԿԻՆԸ.— Երկու ամիս է կը շատախօսեմ՝ փոխանակ աշխատելու:

ՄԱՐԴԸ.— Կը ցաւիմ:

ԿԻՆԸ.— Ընդհանրապէս:

ՄԱՐԴԸ.— Ինչո՞ւ:

ԿԻՆԸ.— Կ'աշխատեմ, երբ աւելի լաւ քան մը շունիմ ընելիք:

ՄԱՐԴԸ.— Բայց թիկնաթոռնե՞րը:

ԿԻՆԸ.— Կրնան սպասել...

ՄԱՐԴԸ.— Կը կարծէ՞ք:

ԿԻՆԸ.— Ահա քառասուն տարի է կը սպասեմ:

ՄԱՐԴԸ (Ատեն մը ետք).— Կը ցաւիմ ձեր ժամանակը խելում համար:

ԿԻՆԸ.— Կը սխալեք:

ՄԱՐԴԸ.— Յետոյ, ամէնօրեայ խոսակցութիւն...

ԿԻՆԸ.— Ըսի՞ր, որ անախորժ էր:

ՄԱՐԴԸ.— Շատ հաճելի է, այո... Բայց ինծի համար...

ԿԻՆԸ.— Ըսե՞ր եմ, որ ձանձրացուցիչ է:

ՄԱՐԴԸ.— Ոչ, բայց...

ԿԻՆԸ.— Այդպէս քան զգացուցիչ:

ՄԱՐԴԸ.— Երբեք:

ԿԻՆԸ.— Ուրե՞մ...

ՄԱՐԴԸ.— Դուք շափազանց քաղաքավար էք այդ տեսակ բան մը ընելու համար:

ԿԻՆԸ.— Ե՛ս... Օ՛հ, երբեք... Իմ տարբեր քաղաքավար չեն ըլլար ալ, անօգուտ է:

ՄԱՐԴԸ.— Սովորութիւնը կը մնայ:

ԿԻՆԸ.— Այսինքն:

ՄԱՐԴԸ.— Օրինակ, մայրս քաղաքավար էր, հայրս՝ կրթուած մարդ... Ես ալ քաղաքավար եմ:

ԿԻՆԸ.— Շա՛տ:

ՄԱՐԴԸ.— Գուցէ շափազանց:

ԿԻՆԸ.— Ինչե՞ր կ'ըսէք:

ՄԱՐԴԸ.— Այո, այո: Նոյնիսկ քիչ մը փնտրելի ըլլալու աստիճան:

ԿԻՆԸ.— Բայց ոչ, դուք խիստ ասպնասական էք, ինչպէս կ'ըսեն վէպերու մէջ...

ՄԱՐԴԸ.— Շատ կը կարգա՞ք:

ԿԻՆԸ.— Շատ կարգացեր եմ:

ՄԱՐԴԸ.— Գիշերները այնքան երկար են:

ԿԻՆԸ.— Եւ ցերեկները...

Կարճ լուսաբան:

ՄԱՐԴԸ (Երկարելով դիպի գիրք մը, որ ձեռքը բռնած է).— Անորէ Մօրուս-
յի վերջին վէպը: Կ'ազն՞ջ կարդալ:

ԿԻՆԸ.— Սիրով, սիրով: Երբ վերջացնեմ՝ կը վերադարձնեմ:

ՄԱՐԴԸ.— Օ՛հ, ահապարհալու քան չկայ:

ԿԻՆԸ.— Շնորհակալ եմ:

ՄԱՐԴԸ.— Գիտէ՞ք, ամէն օր չիլ մը տնտեսականութեամբ կը ապուսեմ այն ժամանակ...

ԿԻՆԸ.— Այո, մեր հաճելի շաղակրատութեան:

ՄԱՐԴԸ.— Երբ արեւը մար մտնէ եւ օդը աւելի զովանայ, ես ալ կը սկսիմ մօրի... երբ պէտք է մեկնի՞մ...

ԿԻՆԸ.— Վերադառնալ տուն:

ՄԱՐԴԸ.— Ամէն մէկը իր կողմը, առանձին...

ԿԻՆԸ.— Քիչ մը աւելի մտած... Իրաւունք ունիք:

ԼՈՍՔԻՆ:

ՄԱՐԴԸ.— Այո, արեւը այնքան լաւ է մեր տաղացած յողացաւորուն համար:

ԿԻՆԸ.— Կը տեսնէ՞ք, նոյնիսկ մեր յողացաւորը հին են:

ՄԱՐԴԸ.— Օ՛հ, ատիկա ըսելու ձեւ մըն է:

ԿԻՆԸ.— Անշուշտ: Դուք մեր տարիքը ցոյց չէք տար:

ՄԱՐԴԸ.— Իսկ դուք իմ տարիքս չունիք:

ԿԻՆԸ.— Գիտէ՞ք, Էթէ Էրիտրոսարգ ըլլալի, մեր այս ամէնօրեայ հանդիպումները...

ՄԱՐԴԸ.— Կրնային մեզ բամբասանքի նիւթ դարձնել...

ԿԻՆԸ.— Օ՛հ, ոչ մեզ... Այլ՝ դիտ:

ՄԱՐԴԸ.— Այդ մասին չէի մտածած:

ԿԻՆԸ (եմփատիկ)։— Լուր կու տամ չ ահա արդէն իսկ բամբասանքի նիւթ դարձած եմ:

ՄԱՐԴԸ.— Ձէ՛:

ԿԻՆԸ.— Ինչպէ՞ս թէ չէ... Նայեցէ՛ք... այնտեղ... ուղտուհին...

Կը մատնանշէ ձախը

ՄԱՐԴԸ.— Այո՛...

ԿԻՆԸ.— Փայլուն աչքերով դիտուկը:

ՄԱՐԴԸ.— Լա՛ւ...

ԿԻՆԸ.— Գիտէ՞ք, թէ ինչ կ'ընէր իր բարեկամուհիին՝ Էրկայնահասակ նիւհարին, չիլ տալ, երբ կ'անցնէի:

ՄԱՐԴԸ.— Ի՞նչ կ'ընէր:

ԿԻՆԸ.— Ահաւասիկ «Փոքրիկ պատուր»:

ՄԱՐԴԸ.— Օ՛հ... «Փոքրիկ պատուր» ըսաւ:

ԿԻՆԸ.— Այո, «Փոքրիկ պատուր», «Փոքրիկ պատուր», որ կու դայ իր սիրահարին սպասելու...

ՄԱՐԴԸ.— Օ՛հ...

ԿԻՆԸ.— Տարօրինակ է, չէ՞:

ՄԱՐԴԸ.— Այո՛, այո՛, տարօրինակ է:

ԿԻՆԸ.— Կը տեսնէ՞ք, ահա արդէն բամբասանքի նիւթ դարձած եմ:

ՄԱՐԴԸ.— Օ՛հ, ո՛չ, երբ դիտեն, թէ միայն այնտեղ է, որ կը հանդիպիմ ձեզի...

ԿԻՆԸ.— Բացատրեցէ՛ք:

ՄԱՐԴԸ.— Կը նշանակէ, որ ուրիշ տեղ չենք տեսնուիր:

Ատեն մը ետք

ԿԻՆԸ.— Յետոյ, կայ պահակին ժպտալ։

ՄԱՐԴԸ.— Եւ բարի կամեցողութիւնը սպասուհիներուն։

ԿԻՆԸ.— Այնքան շատ բան ունինք անոնց ներելիք։

ՄԱՐԴԸ.— Գիտէ՞ք, անցորդներուն համար մենք հինգոյք մը կը թուինք։

ԿԻՆԸ.— Շատ հաւանական է։

ՄԱՐԴԸ.— Կրնայինք հինգոյք մը ըլլալ։

ԿԻՆԸ.— Միայն թէ քիչ մը ուշ հանդիպեցանք իրարու։

ՄԱՐԴԸ.— Գուցէ աւելի լատ է այսպէս, քան եթէ ծերացած զոյգ մը ըլլալինք։

ԿԻՆԸ.— Մենք չունինք անոնց յատուկ քմայքները, ոչ ալ ձոնձրոյթը։

ՄԱՐԴԸ.— Թէեւ իրար լատ կը ճանչնանք։

ԿԻՆԸ.— Այնքա՞ն քիչ։

ՄԱՐԴԸ.— Իրաւ, զարմանալի է. մէր անունն իսկ չեմ գիտեր։

ԿԻՆԸ.— Ոչ ալ ես՝ ձերը։

ՄԱՐԴԸ.— Իրար ճանչնալու համար անուններու պէտք ունի՞նք։

ԿԻՆԸ.— Այսպէս գէթ քիչ մը խորհրդաւորութիւն կ'ըլլայ մեր միջեւ։

ՄԱՐԴԸ.— Եւ սակայն զիրար կը գտնենք, կարծեա թէ միշտ զիրար ճանչնա՞ծ ըլլայինք։

ԿԻՆԸ.— Մեր տարիքին համար երկու ամիսը միշտէն աւելի բան մըն է։

ՄԱՐԴԸ (նմղալով)։— Գուցէ ես վտանգաւոր, արդարութեան կողմէ դատաւարաւորած մըն եմ։

ԿԻՆԸ (նմղալով)։— Իսկ ես վտանգաւոր արկածախնդիր մը։

ՄԱՐԴԸ.— Ոչ, դուք պարզապէս տարիքոտ օրինորդ մըն էք։

ԿԻՆԸ.— Ինչէ՞ն հասկցաք։

ՄԱՐԴԸ.— Ձեզ գտնակներուն մասին երբեք չխօսեցաք։

ԿԻՆԸ.— Ճիշդ է... Եւ սակայն կրնայի ամսօրնայած ըլլալ։

ՄԱՐԴԸ.— Լատ, իսկ ե՞ս, դու չակեցէք։

ԿԻՆԸ.— Ո՛հ, դուք... դուք գինեւորական եղած էք։

ՄԱՐԴԸ.— Ոչ։

ԿԻՆԸ.— Փաստաբա՞ն։

ՄԱՐԴԸ.— Ոչ։

ԿԻՆԸ.— Դատաւոր։

ՄԱՐԴԸ.— Շատ հեռու էք։

ԿԻՆԸ.— Պաշտօնատա՞ր։

ՄԱՐԴԸ.— Ոչ իսկ այդ։

ԿԻՆԸ.— Ձեզ կրնար գուշակել։

ՄԱՐԴԸ.— Վստահութեան պաշտօն մը։

ԿԻՆԸ.— Նախարա՞ր։

ՄԱՐԴԸ.— Ոչ, կոչում մը չէ։

ԿԻՆԸ.— Երեսփոխա՞ն։

ՄԱՐԴԸ.— Այդ ալ չէ։

ԿԻՆԸ.— Ձեզ գտնե՞ր։

ՄԱՐԴԸ.— Վստահութեան պաշտօն մը։

ԿԻՆԸ.— Ձեզ կրնար գուշակել։

ՄԱՐԴԸ (Ցած ձայնով, գրեթէ գաղտնապահութեամբ)։— Գանձապա՞հ։

ԿԻՆԸ.— Գանձապա՞հ։

ՄԱՐԴԸ.— Գանձապա՞հ. քառասուն տարի շարունակ։

Կինը.— Տարբերե՞լ... Ձեր երեւոյթէն դատելով պիտի ենթադրէի, թէ...

ՄԱՐԴԸ.— Տարբեր բան էի, այնպէս չէ՞:

Կինը.— Ոչ... այսինքն... ներկայէք...

ՄԱՐԴԸ.— Ուրիշ բան էի, ճիշդ է:

Կինը.— Ա՛հ:

ՄԱՐԴԸ.— Բայց ոչ ոք գիտցաւ...

Կինը.— Կարելի՞ է գիտնալ:

ՄԱՐԴԸ.— Այո, դուք... գուցէ... կրնաք գիտնալ:

Կինը.— Ըսէք:

ՄԱՐԴԸ (Փաղտնիք մը հաղորդելու պէս).— Կը գրէի:

Կինը.— Դո՛ւք:

ՄԱՐԴԸ.— Այո, կը գրէի: Օ՛հ, բայց ասիկա ամբողջ պատմութիւն չէ, ամբողջ պատմութիւն մը:

Կինը (Հետաքրքրութեամբ).— Կը գրէի՞ք: Ա՛հ, կը գրէի՞ք...

ՄԱՐԴԸ.— Գրողական ճանաչում էր:

Կինը.— Այո, ճանաչայ մէկը... ժամանակին...

ՄԱՐԴԸ.— Հռչակաւոր գրող մը:

Կինը.— Հիմա պէտք է հռչակաւոր եղած ըլլայ:

ՄԱՐԴԸ.— Ո՞վ է... անպաշտօնականութիւն է հարցնելու:

Կինը.— Իր իսկական անունը գրաւոր միայն. անշուշտ փածկանունով կը գրէր:

ՄԱՐԴԸ.— Եւ ասպիտակ... ունէ՞ր:

Կինը.— Աւելի քան տաղանդ:

ՄԱՐԴԸ.— Այդ ինչպէ՞ս կ'ըլլայ:

Կինը.— Ինչի համար կը գրէր...

ՄԱՐԴԸ.— Եւ հետքը կորսնցուցի՞ք:

Կինը.— Է՛հ, կեանքը...

ՄԱՐԴԸ.— Այդ... այդ պատիկ բառը՝ տիմար ու հասարակ գիտնալքը...

Ինչպէ՞ս կը բացատրէ ամէն բան:

Կինը.— Ամէն բան:

ՄԱՐԴԸ.— Կեանքը կը նշանակէ... հակառակորդ, ձախորդութիւնը, համա-
կերպումը...

Կինը.— Յիշատակը...

ՄԱՐԴԸ.— Ասիկա ալ (լռութիւն), գիտէ՞ք, այս բաները երբեք մարդու չեմ
ըսած:

Կինը.— Ես ալ:

ՄԱՐԴԸ.— Բարեբախտաբար կեանքը արագ կ'ընթանայ:

Կինը.— Եւ տարիները կ'անցնին:

ՄԱՐԴԸ.— Եւ կը զարմանանք տեսնելով, թէ ինչպէ՞ս բոլոր պատիկ ու ան-
նշան բաները դրաւեր են մեծերուն տեղերը եւ...

Կինը.— Կարծես կեանքը չի նուաճ ըլլալ միայն պատիկ բաներով:

ՄԱՐԴԸ.— Եւ անոնք ըլլային այնքան շատ, որ այլեւս տեղ չմտար մեծերուն:

Կինը.— Ուրեմն, դուք կը գրէի՞ք:

ՄԱՐԴԸ.— Օ՛հ, եթէ չգրէի...

Կինը.— Կը գրէի՞ք, հարկ է որ կարգաք ինծի...

ՄԱՐԴԸ.— Գուցէ, օր մը...

Կինը.— Կը տրեմ գրականութիւնը... Տղէտ չեմ...

ՄԱՐԴԸ.— Գիտեմ: Ըսիք, թէ ձեզի համար կը գրէին...

Կինը.— Այնքան գեղեցիկ բաներ:

ՄԱՐԴԸ.— Ես ալ կը գրէի մէկու մը համար, եթէ այդպէք տունս՝ ձեզի

պիտի կարգամ :

ԿԻՆԸ. — Լաւ ըսիք, իրիկուն մը կու գամ :

ՄԱՐԴԸ. — Ինչո՞ւ չէ : Այդպէս կրնանք երբեմն-երբեմն հասնիլ իրիկուններ անցընել միասին :

ԿԻՆԸ. — Ձեր գործերը հրատարակած էք :

ՄԱՐԴԸ. — Ոչ :

ԿԻՆԸ. — Ոչ մէկ գործ չէ՞ք հրատարակած :

ՄԱՐԴԸ. — Ոչ :

ԿԻՆԸ. — Ինչո՞ւ :

ՄԱՐԴԸ. — Կը գրէի մէկու մը համար... Հետագային միայն ինծի համար գրեցի... Այդ ժամանակէն սկսեալ չէի կրնար գրել ուրիշներուն համար :

ԿԻՆԸ. — Այո, կը հասկնամ :

ՄԱՐԴԸ. — Մասամբ ամբողջ կենսեքիս պատմութիւնն է ատկա :

ԿԻՆԸ. — Մասամբ բոլոր կեանքերուն պատմութիւնը :

ՄԱՐԴԸ. — Օ՛հ, մի՛ ըսէք այդպէս :

ԿԻՆԸ. — Գէթ իմ կեանքս է մասամբ...

ՄԱՐԴԸ. — Ինչ ընենք, ամէն մարդ երջանիկ չի կրնար ըլլալ :

ԿԻՆԸ. — Հաւանարար մենք «ամէն մարդ» չենք :

ՄԱՐԴԸ. — Ձեզ գղջար :

ԿԻՆԸ. — Ոչ ալ ես :

ՄԱՐԴԸ. — Արդէն այնքան գեղեցիկ է ապրիլ կեանք մը ամբողջ՝ կրկնելով զեւ սակայն կրնայի երջանիկ ըլլալ :

ԿԻՆԸ. — Ամէն մարդ չի կրնար ըսել ատկա :

ՄԱՐԴԸ. — Կը տեսնէք ուրեմն, որ մենք «ամէն մարդ» չենք :

Փիլ իտք

ԿԻՆԸ. — Ուրեմն... դժբա՛խտ եղաք...

ՄԱՐԴԸ. — Ո՛չ, միայն թէ երջանիկ չեղայ... Ինչ որ նոյն բանը չէ :

ԿԻՆԸ (Փիլ մը վարանելով) . — Դուք «իրեցի՞ք» զայն :

ՄԱՐԴԸ. — Այո :

ԿԻՆԸ. — Եւ չկրցա՞ք ամուսնանալ անոր հետ :

ՄԱՐԴԸ. — Կարելի չէր այդ ժառիե նոյնիսկ մտածել :

ԿԻՆԸ. — Գեղեցի՞կ էր :

ՄԱՐԴԸ. — Հարուստ էր :

ԿԻՆԸ. — Յետո՞յ :

ՄԱՐԴԸ. — Ծառ հարուստ :

ԿԻՆԸ. — Ա՛հ...

ՄԱՐԴԸ. — Ծառ հարուստ... ինծի՛ համար, որ իբր հարստութիւն քիչ մը յոյս ունէի միայն եւ գուցէ տաղանդ իսկ չունէի, եւ սակայն...

ԿԻՆԸ. — Այո...

ՄԱՐԴԸ. — Սակայն, երբ զայն կը տեսնէի, վստահութիւն ունէի... Անոր համար կրնայի գրել... կրնայի յաջողիլ...

ԿԻՆԸ. — Ուրեմն :

ՄԱՐԴԸ. — Հարուստ էր : Ոչինչ փորձեցի :

ԿԻՆԸ. — Այնքա՞ն հարուստ էր :

ՄԱՐԴԸ. — Հարստութիւն մը, որ մեզ կը բաժնէր իրարմէ... Յետոյ... միայն այդ չէր : Ան գեղեցիկ էր, իսկ ես...

digitised by A.R.A.R.®

Կինը.— Գո՞ւր :

ՄԱՐԴԸ.— Ե՞րբ, ապրիլի և մայրիկի ճերմակ մորուքս փոխեր են ոչ միայն
գիծերը... Յետո՞յ :

Կինը.— Յետո՞յ :

ՄԱՐԴԸ.— Ան չըմպապառած էր, փայլալուծած : Կը հագնէր մետաքսէ չոր-
ջագեղատա և և երբեք դուրս չէր ելլեր առանց գաւտիարակուհիին : Որ-
քա՞ն փեղեցիկ էր և արքա՞ն կը սիրէի զայն :

Կինը.— Ան երբեք չգիտցա՞ւ :

ՄԱՐԴԸ.— Ի՞նչ օգուտ... (Կը մտածէ) Օր մը սակայն...

Կինը.— Պատմեցէ՛ք :

ՄԱՐԴԸ.— Այո, ինչքան հին յաւ է...

Կինը.— Ըսէ՛ք :

ՄԱՐԴԸ.— Գերթուած մը գրեթէ իրեն համար... Ժպտեցաւ ինծի, գոհ թը-
ւեցաւ ըլլալ : Բայց լաւ չեմ յիշեր... Պզտիկ աղջիկ մըն էր ան, իսկ
ևս արդէն երիտասարդ մը... ևս այսպէս, ամբողջ կեանքիս ընթաց-
քին զայն միայն սիրեցի... Ի՞նչ ծիծաղեցի բան... Հէ՞... Ի՞նչ ծիծա-
ղեցի...

Կինը.— Եւ... ան ի՞նչ եղաւ :

ՄԱՐԴԸ.— Ձեմ գիտեր... չեմ գիտեր :

Կինը.— Ձէ՞ք գիտեր :

ՄԱՐԴԸ.— Երբեք չուզեցի գիտնալ... Մեր ընտանիքները աչքէ կորոնցուցին
գիրար : Ան հարկաւ տնտեսացաւ. հարուստ մարդու մը հետ... Ձեմ
կընար հաւատալ, որ ան արդէն ծերացած է... Ձեզմէ գուցէ տասը տա-
րեկան միայն պզտիկ եղած ըլլար... Այո՛, տասը :

Կինը.— Ան ոչ տք է. որ երջանիկ եղած ըլլայ :

ՄԱՐԴԸ.— Վստահարար :

Ատնն մը խոփ

Կինը.— Անոր մասին կը խօսինք, երբ այցելութեան դամ :

ՄԱՐԴԸ.— Լսեցէ՛ք... Կը յիշեմ զայն այնպէս՝ ինչպէս էր այն տան : Ինծի
համար ան միշտ դեռատի աղջնակ մըն է մնացեր... Հիանալի աչքեր
ունէր, նուրբ ձեռքեր, բարակ իրան մը և վարդազոյն այտեր :

Կինը.— Այո՞, այո՞ :

ՄԱՐԴԸ.— Ամբողջ կեանքս այդ պատկերով ապրեցայ, այդ յիշատակով...
Ահա բոլորը :

Կինը.— Փոխուած ըլլալու է :

ՄԱՐԴԸ.— Ձեմ կարծեմ, բայց չեմ գիտեր, թէ ինչո՞ւ պատմեցի ձեզի այդ
... բոլորը : Արեւոյ արդէն կ'իջնէ... Իսկապէս այս իրիկուն զուարթ չեմ :

Կինը.— Իրիկունը սիրտը նման է յոգնած ձեռքերու. ինքնաբերաբար կը
բացուի :

ՄԱՐԴԸ.— Կը կարծեմ, որ եթէ կրկին տեսնէի զայն...

Կինը.— Գուցէ պիտի չհանձնայիք :

ՄԱՐԴԸ.— Այո՛, պիտի չհանձնայիք :

Կինը.— Տարիները կ'անցնին, կը փոխուինք :

ՄԱՐԴԸ.— Այո... Ձեռք փոխուի : Մեր չըմպապառ իրերը կը փոխուին :



ԿԻՆԸ.— Կարծես հազիւ վայրկեան մըն է, որ հասնեմք։

ԿԻՆԸ.— Իրաւունք ունիք։ Ձեռք փոխուիք։ (Լսուք ին)։ Ձեր պատմութիւնը
յո։ զեց զիտ, այո, հիշող աշխարհ... Յուզեց... Այնքան յաւ հասկցայ
ձեզ։

ՄԱՐԴԸ.— Օ՛հ, զիտէք...

ԿԻՆԸ.— Ոչ... Ոչ տառը համար ժխայն... Ոչ... Այլ... Որովհետեւ ես այ...

ՄԱՐԴԸ.— Դժբեք...

ԿԻՆԸ.— Ես ալ սիրեցի ձեզ...

ՄԱՐԴԸ.— Գրագէտը...

ԿԻՆԸ.— Այո, գրագէտը... Միայն թէ...

ՄԱՐԴԸ.— Միայն թէ...

ԿԻՆԸ.— Կը կարծեմ, որ ան ուշադրութիւն անգամ չբռաւ ինծի... Իսկ հի-
մա, որ հոշակաւոր պէտք է եղած ըլլայ, գուցէ անունս իսկ չի յիշեր։

ՄԱՐԴԸ.— Օ՛հ, կը կարծեմք։

ԿԻՆԸ.— Ան կոչուած էր բարձրագոյն հակառակորդներ... Իսկ ես փոքրիկ
բաղբէրի մըն էի լուկ... Խոչընդոտ պիտի ըլլայի անոր կեանքին...

Այսպէս աւելի լաւ է։

ՄԱՐԴԸ.— Եւ... սիրեցի՞ք զայն։

ԿԻՆԸ (Պարզաբեամբ).— Այո։

ՄԱՐԴԸ.— Եւ դժբեք ալ կ'անդիտանաք, թէ ո՞ր է եւ ի՞նչ եղաւ...

ԿԻՆԸ.— Այնքան ժամանակ անցած է... Յետոյ՝ ձեռքը չէր առեր, որ կը-
րէր, իրենց դիրքին համար։ Կ'ըսէին, թէ կը վախնային, որ կրնար

լուրջ բան մը ըլլալ։ Ըսած էր ինծի, որ իր ծածկանունով պիտի ապէր։

ՄԱՐԴԸ.— Գուցէ պարտն Անտրէ Մօրուան է։

ԿԻՆԸ.— Կը կարծեմ, թէ տարեկա ծածկանուն մըն է։

ՄԱՐԴԸ.— Այո, ահա մը աշխարհ կարգացի։

ԿԻՆԸ.— Օր մը հարկաւ պիտի գիտնամ, թէ ինչ եղաւ, եւ յետոյ... Անշուշտ պահած է իր պզտիկ անունը... Ժանն:

ՄԱՐԴԸ (Շփռած).— Ժանն:

ԿԻՆԸ.— Այո, աղպէս էր անունը:

ՄԱՐԴԸ (Կարծես ինքնին).— Ժանն...

ԿԻՆԸ (Շարունակելով).— Կիրակի օրերը մեզի կու գար... Ճաշէն ետք կը կոթնէր ժողովարանին:

ՄԱՐԴԸ.— Ա՛հ, այո...

ԿԻՆԸ.— Երկար մազեր ունէր...

ՄԱՐԴԸ (Արգարացնելով կարծես երկար մազ ունենալը).— Բանաստեղծ էր:

ԿԻՆԸ.— Քերթնածներ կ'արտատանէր:

ՄԱՐԴԸ.— Հաւանաբար ձեզի համար:

ԿԻՆԸ (Մտածելով).— Կրնայ ըլլալ... Այո... Կրնայ ըլլալ... Այնքան հին է...

ՄԱՐԴԸ.— Որ ալ չես կրնար գիտնալ...

ԿԻՆԸ.— Ան յաճախ քերթնած մը կ'արտատանէր... զեղեցիկ քերթնած մը... Այո՛, այո՛, կը յիշեմ... Կը կոչուէր... Սպասեցէք... Կը կոչուէր... Մահը, մահը...

ՄԱՐԴԸ (Շատ պարզօրէն, կարծես հակառակ կամէին).— «Հիպիարի մո-
հը»...

ԿԻՆԸ.— Այո, հիշէ՛ք... Այո՛... այո՛ (ըստին): Բայց դուք ինչպէ՞ս գիտցաք:

ՄԱՐԴԸ.— Այդ, այդ ծանօթ վերնագիրը մըն է...

ԿԻՆԸ.— Ուրեմն... Հեղինակին անունը... Դուք պէտք է...

ՄԱՐԴԸ.— Այլ չեմ յիշեր... (Մտածելու ձեւով): Չեմ յիշեր տղիւս, թէ ուր ունէր է...

Այդ վայրկեանին կը լսուի առաջին քմբուկը հեռուէն. պարտէզի փակման ազդանշանը: Մարդը կը վեր-
ցընէ գլուխը, կարծէք քիչ մը յանկարծակիի եկած:

ՄԱՐԴԸ.— Թմբուկն է:

ԿԻՆԸ.— Արդէ՛ն...

ՄԱՐԴԸ.— Փահուճը...

ԿԻՆԸ.— Կարծես հազիւ վայրկեան մը կը թուի ինծի, որ հոս ենք:

Ոտքի կ'ելլէ:

ՄԱՐԴԸ (Նայելով կնկան).— Անոր աչքերը քիչ մը նման էին ձեր աչքերուն:

ԿԻՆԸ.— Բայց ան աւելի գեղեցիկ էր... Այնպէս չէ՞:

ՄԱՐԴԸ.— Այլ չեմ գիտեր... չեմ կարծեր... Իրաւունք ունիք... Այո... Ան աւելի գեղեցիկ ըլլալու էր...

ԿԻՆԸ (Նայելով մարդուն).— Ան... ան քիչ մը ձեր կեցուածքը ունէր, բայց քիչ մը աւելի կորովի, աւելի տոնակա:

ՄԱՐԴԸ.— Մտածել, թէ կրնայիք միասին ծերանալ անոր հետ:

ԿԻՆԸ.— Ոչինչ պէտք է ապաստալ... Գուցէ աւելի լաւ է այսպէս:

Թմբուկին ձայնը այս ամբողջ աւելի մօտէն. կիներ կը ծալէ ձեռագործը: Ատեն մը ետք...

ՄԱՐԴԸ.— Վաղը պիտի տեսնեմք ձեզ...
 ԿԻՆԸ.— Ձեզ գիտեմք, այո, կրնայ ըլլալ։ Օ՛հ, օրերը տկուտ կտրենայ։
 ՄԱՐԴԸ.— Եւ չեմ գիտեր, թէ արդեօք լա՛ւ է ձեր յօդացուերուն համար...
 ԿԻՆԸ.— Արեւը այնքան շուտ ժարը կը ժանկ հիմա։
 ՄԱՐԴԸ.— Թե՛րեւս աւելի լաւ պիտի ըլլար...
 ԿԻՆԸ.— Իրատենք ունիք... Ուրեմն այդպէս... չժամադրուինք...
 ՄԱՐԴԸ.— Եթէ իբարդ գտնենք... Լաւ, աւելի լաւ։
 ԿԻՆԸ.— Իրատենք ունիք... Աւելի տրամաբանական է։
 ՄԱՐԴԸ.— Մե՛ծ գուռնէն դուրս կ'ելլէք։
 ԿԻՆԸ.— Այո, սովորականին պէս։
 ՄԱՐԴԸ.— Ես՝ կողմնակի գուռնէն։
 ԿԻՆԸ.— Լաւ կ'ոճկեցէք ձեր վերարկուն։
 ՄԱՐԴԸ.— Այո, շնորհակալ եմ, իրատենք ունիք, ցուրտ կ'ընէ... արդէն
 իսկ ցուրտ կ'ընէ։

Լուսինն։
 Ատեն մը ետք խզելով լուսինը։

ԿԻՆԸ.— Գիշեր բարի, պարոն։
 ՄԱՐԴԸ.— Գիշեր բարի, տիկին։

Ձեռքերը կը թափուին, անա պզտիկ քայլերով կը
 մեկնին, իւրաքանչիւրը իր ուղղութեամբ։ Կինը ձա-
 խէն, մարդը՝ աջէն։ Կինը կը գտնուի մը անտառի
 է գիւղի, զոր քիչ ատաղ տուած էր մարդը։ Կը կանգնէ։
 Մարդը կը գտնուի։

ԿԻՆԸ.— Ձեր գիւղը...
 ՄԱՐԴԸ.— Գիւղացի։
 ԿԻՆԸ.— Կարծեմ աւելի լաւ է, որ գոյն վերադարձնեմ ձեզի։ Կրնանք ժամա-
 նակ մը առանց իրար տեսնելու մնալ...
 ՄԱՐԴԸ.— Այո... իրատենք ունիք... շնորհակալ եմ...

Կտուցէ գիրքը, զոր կինը երկարած է իրեն։

ԿԻՆԸ.— Գիշեր բարի, պարոն...
 ՄԱՐԴԸ.— Գիշեր բարի, տիկին...

Եւ անա անոնք կ'երթան մէկը գետի ձախ, միւսը՝
 գետի աջ, ամեն մէկը գետի իր երանգը... որ ամբողջ
 կը մնար...
 Բեմը պարտաւ իր մնայ վայրկեան մը։ Հետուէն կը
 լուսի քամակին ձայնը։

(Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր)

ՓՈՒ ՎԵՐԱՆՈՒՄ

Ա. Գ Ա Ր Ր Ի Է Լ Ե Ա Ն

Ա Յ Ց Ե Լ Ո Ւ Մ

Դա՛հճիս հանդիսած տեսայ,
Ա-ի. զԱրեւս առն:

Վ. ՏԵՐԵԱՆ

Տարօրինակն այն է, որ չգարմացայ, երբ կուտրած թիւով երեշտակը յայտնուեց այնպէս, կարծես միշտ սենեակն էր եկել ընտանի թռչունի պէս քառելու: Ոչ էլ այն, որ հետը մի կծիկ էր բերել ու կէս-գարմացած ու կէս-վախուռքած նայում էր չարս կազմը: Կարող էր պարզապէս ինձ հարցնել, թէ ի՞նչ կծիկ է այդ եւ սրտեղի՞ց, բայց երեւի վերացապաշտ երեշտակներին էր եւ կամ չխօսկաններին:

Բանն այն է, որ չգարմացայ եւ տարօրինակն էլ հենց այն է, որ շարունակեցի հայելու մէջ արտացոլումս իմ իսկական շէտքին, չգիտեմ ճշմարտորոնգամ հարցնել. «Հիմա ի՞նչ»: Նայն պատասխանների անոթը զանգուածն էր խուժում վրա՝ խրթին, հակասական, անիրական, զգուցեմալ: Այն է, որ շարունակ էի նախադասական կանոնի դաժան ուղին ընտրել, մէկ էլ աչքիս մեղք գեղի արանէտով էի տարւում: Գրեթէ արդէն էի շրթաւններին շարքը գծագրումս վշտոտ անճշտութեանը յամճեմել, երբ յօճերեցս բեւ առած չարաննի մի թրթիռ ասեց, աշխարհագրութեան դասի ժամանակ դուրս ցատկած գուպ էր քիչի պէս:

Պատասխանների այսպիսի յորձանք եւ որոշակութեան ոչ մի նշան: Սեփական դէմքս հրաժարում է ինձ ծառայելուց եւ իր ամէն մի մասը, մաս-նիկն ու գիծը իրենց հաստատ կարծիքներն են յայտնում, կարծես ինձ ծաղրելու նենգ միտումով: Եթէ՛ նո՛ր նրանց տէրը, ու նրանց կրկնու համար ըստեղծուած սարուկը, սպիտակ քղթի նման անգէտ, չգիտեմ, թէ ի՞նչ են յօժքեղու վրա:

«Հիմա ի՞նչ», հարցնում եմ նորից: Ձեռքերս՝ հայրենիքիս պալ տուակներ, արցունքներս՝ հայրենիքիս անգիշտ տապը, անուս՝ նրա սէրն ու ոգին, բայց ինքս՝ շփոթի անշունդում խորտակուած ու ծիծաղելի մի խաղաղիւ, խնամած խոստումների, ստերի, ժպիտների մէջ, ժամացոյցի բութ քրտալանների խաչմերուկում կանգնած, սեւ սալերի խոնարհ ու անըմբռնելի փայլի պէս մի ճայնի ելու:

Երեւի, շատ էի ողորմելի ու ծիծաղելի, որովհետեւ այդ անկողնայցութեան, որի ներկայութիւնը նայնքան էի գգում, որքան միջանցում մնացած կրկնակողմնակներն, յանկարծ ուղեց խաղալ եւ իր կծիկը նետեց արեւին մէջ: Կարծում եմ, որ իրեն շատ էլ պէտք չէր այդ կծիկը: Կամաց-կամաց ծայրը գտայ ու բնիլ սկսեց ծարալ: Կարմիր, կարմիր թեղն էր մօրս հիւսած իմ առաջին քաթմանների: Կարմիր թելն էր ինձ ստեղծողների երակներին հասած ու իմ գարկերակում սրտփող թանձր արեան: Ձգացած մանկութեան անհոգ չրքիչի վառ կարմիրն էր վազուայ սպասումից տմաք սեղմած կռպիւրի տակ նազագուղ կարմրը:

Թեւեթիս փաթաթեցի այդ բնիլը, որ ջերմանում եւ ուժ ստանում՝ խորամանկ Աղազային գռնէ տակալու համար:

digitised by A.R.A.R.@

Կծիկը մի փոքր էլ գլորեցի Անիմառուութեան երկնագոյն դաշտում եւ թելը, երեսի չհնազ կախարհանքով, քանդակի վերածուեց: Պատահեկամ եւ քաղցնրի նրբին քանդակներ, լի աստղափռով, բայց տեղ-տեղ պատառուած բիրտ հայեացքներէն, կոպիտ, դրամապանակի կաշուից շինուած ձեռքերից: Ո՞վ կը նորագի այդ քննաշ նախշերի ռզնդէն յօրինուածքը, որ մի օր ե՛ս էի տեսնել, իսկ հիմա չունեմ աստղափռի ու երազումս էլ պարզ հովապակների ծածանաւոր բաշերի խիզախ գծանկարը չեմ տեսնում:

Այժմ Երազը շարժեցի այդ անգին ծուլներով, որպէսզի դրանց միջով մի քիչ բարի տեսնեմ պատասխաններն ետեւում դարձանկարած աշխարհը:

Կծիկն այս անգամ ինքը գլորուեց, միջից ներմակաթոյր մտաւս յորդեցնելով: Լեռան գագաթի ձեռն պէս անքիծ, վերջին անգամ ներքող ծերունու մօրաւիճն պէս խաղաղ, գայրացկոտ ծովի փրփուրի պէս շլացնող ներմակ: Մտանքն փաթաթեցի խաչտուն մետաքսը աւ շուարեցի՝ առաջին անգամ կրկէս գնացած մանկան նման, երբ թելի ծայրին մի բազմաբանգ աւ հնչեղ փուլա յայտնուեց:

Նարոտ էր Խօթ գոյն, խնկաբոյր նարոտ, որ հրճուամբներն գահակալն եղաւ: Ի՛նչ աշխարհի այդ ծիածանը կը ծփն կապեցի Խօթ ամուր կապով, որ ետգին պաշտպանութի չար գալիքի անշայտ ծաղրանքից: Արդէն գիրտ առած կծիկը մի լաւ պտրտեցի, դատարկամիտ անհամբերութեամբ:

Շուրջս փռուեց մի գորշ, լճուածութեան պէս պղտոր գայնի կտաւ: Կռպիտ հիւռուած, առանց նախշի, ճնշող, անհրապոյր՝ դառնի հագուստի կամ դիակաւքի կառապանի համազգեստի նման: Խօնչ գոյն կամ երանգ փնտռեմ — քաղում եմ այդ վառող հիւստամբն տեսնուն, ահա խննուեմ եմ, կաշկանդուած ծնկներս չեն կարող օգնել, որ դիմեմ իմացածս միակ փրկութեանը՝ փախուստի: Եւ ի՞նչ փախուստ, ումի՞ց հարցում, ինքս ինձնից:

Ա՛յս է իմ վերջին, յանձնակամ հարսնութեան զգեստը, այդքան նման պատանքի:

Պատասխանների աղմուկի միջից դարձեալ չեմ լսում միակը, ճշմարիտը:

Զանկարծ յիշում եմ լռակեաց այցելութիւն, որ նման չէ երկրաքնակի աւ արագութեամբ ծիլի անօգնական ասկումով հարցնում եմ. «Հիմա ի՞նչ»:

Իսկ նա կազ է ու թելը կոտրած:

Գնում է, այսինքն՝ հեռանում է, կարողանում է գնալ:

Նա սեւ էր, սեւ: Բոլոր անգոյ եւ իրական գոյներն իր մէջ խտացրած սեւ:

ԻՄ ՈՒ ՔՈ ՏԱՐԻՆ

Քաղաք իմ, արդեօք ինձ կը ներն՝ ուշացումս այս: Անկախեան պրկուած լարերի խուլ բարախը կը լսե՞ս արդեօք:

Ու կը յիշե՞ս, քէ ինչպէս էիր իրիկնամուտին իմ արցունքները քափուն պահած յաւալքման այդ փոքրիկ, գուլալ դաւաճաններին, անցորդների հայեացքներից քողարկում աւ քո զիշերուայ լուրք թաշով ծածկում:

Կը յիշե՞ս ինձ, երբ գամ-փարուեմ քարերիդ, որոնք մարդկանց ցուրտ անտարբերութեան հոգմին մտնուած պահիս տաք շնչով էին ինձ պարարում, որ ջերմանում աւ համբերեմ... քարերիդ պէս:

digitised by A.R.A.R.@

Կը կրկնե՞ս արդեօք սփռվող շշուկներդ, երբ թուայ, քէ վերջին, ամօգ-
նական թրթիռով կտրուում են թաւշուփակի լարերը՝ անհրաժեշտ շշուկների ճիշե-
րից ու ես էլ, ուր որ է լարերի ճման վերջին զնգացով կ'անհետանամ գալարա-
փաղի պտղաւան երախի մէջ:

Դու մտերմօրէն տարածում էիր միայն քեզ յայտնի ու միայն ի՛նձ հա-
մար յօրինուած սփռվող շշուկներ: Շտապեցնում էիր զեփուկներդ, որ թող-
նեն կուշտ մարդկանց հաշտահանակների վարագոյրները խնկելն ու գամ, շուրջը
պտտուեն, շուրջս սրտիման՝ չարամենի ու ամենթեք... որ չանհետանամ պըս-
պըզուն գալարափաղի երախում:

Կը ծշմարե՞ս ինձ ամբոխի մէջ, որ ընտելացած քո կախարդիչ բայրիին,
չի անէաճում ծալ-ծալ ծաւալուող փշատիչ բայրից: Քնքուշ նարսեհաբո բալե-
նիներդ բայրից, բարի բարերիդ եւ նոյնիսկ փռուող, փռուող՝ յագեցած ա-
րեւի ճառագայթի բեկորով ու մի ծանօթ մրցի հազարութեամբ: Երբ լուսինն
ու փշատենին փոխանակեն իրենց արծաթափայլին, կը տեսնե՞ս դու ինձ, փռ-
ուող կոծկածներով դէմքիս յուշեր կը ցանկե՞ս:

Դու ինձ կը ցգռե՞ս, անուրջ-փաթիլներիդ տեղեկագործով կը ծած-
կե՞ս թարթիչներս, երբ անուրջներս հալչեն իրականութեան հնոցում ու ձուլ-
ւեն-դառնան անցոյն հեղուկ: Նոր երազների ժանեակ կը հիւսե՞ս ձեռն քու-
լանքով ու տալամանդէ տաղապարակներ կը կախե՞ս մ'իմ պտտուեաններս,
հազաւ իմ, առա՛:

Իսկ քո տերևների ծիածաններով կը խորշափե՞ս ու թիկնապահ կը
կանգնեցնե՞ս բարդիներդ, երբ կրկին անգոր լինեմ անաճուն սարսափի դէմ:
Երբ յոգեած լինեմ ու հաղիչ հակուեմ, դէմքս բեկուած տեսեմ անձրեւաբեր
մէջ, բարդիներդ դարձնել կը սլանա՞ն երկինք, հայեացքս կտրելով բեկրեկ
ու փշուած ինչ-որ հետքերից, կը տանե՞ն իրենց գազաթմերի հետ վեր՝
խառնուելու աստղերիդ բայլի անթիծ ցոլանքին:

Իսկ երբ ուզեմ լալ, տխուր ու յոգեած անհուն երկինք — քո խորին
հոգի՛ն, օգնութեան կը գա՞ն: Անձրեւի շիթերն իմ լացը կը ցօղե՞ն զով կա-
թիլներով ու ցած կը հոսե՞ն իմ ու քո դէմքով՝ մեզ միացնելով: Կը յիշե՞ս դու
ինձ, երբ դէմքս դէմ տամ քո արցունքներին եւ որպէս օրհնամք ընդունեմ
դրանք: Քո յուշիկ եղբւրեանս ամպիկների նման կը գաւաթեմամ, երբ դառ-
նալի արցունքներս լուսա անձրեւիդ միտնեմ:

Կը գա՞ս, որ պար բանեմ նախշուն աշնանդ հետ: Քուտուղ հետ անշար
ստեր փոփանեմ, ջրհորդանի գուարք երգերը կրկնեմ ու երգներանգ գորգիդ
տերևները խորանեմ, երգեմ մի սին սիրերդ հին փաղսկների մէջ եւ խնկեմ
վարսերը բոլոր աղիկների, բոլոր ուտենիների:

Քաղաք իմ, ո՞ւմ ես եիմա: Դաւաճանե՞լ ես ինձ եւ ուրիշի՞նք անմու-
թիւնն ես փարատում քո լոյսերի խայտառակներով անվերջ:

Քաղաք իմ, երբ լսին ու երկնազած քո գիլկը գամ անդորք լուսաբացի
պանիդ, ինձ կը ներե՞ս ուշացումս այս, ցնա՛րք իմ, իմ հեռուս՛ր...

ԱՐՆԻԻԿ ԳԱՐԻԷԼ ԵԱՆ

15 Սեպտեմբեր 1980, Նիւ Եորք

յէն, Ափրիկէն, Մայրադոյն Արեւելքն, իրենց ազգային տարազներով, յարդարանքներով, ամբողջովին փաթաթուած, կիսամերկ: Գաւաթներու ժըխոր, ծուխ, ծո՛ւխ, ձայներ, տարբեր ելեւէջներով, հեղասահ, շառաշուն:

Աւերբա քանի մը անգամ պտըտցուցի անոնց վրայ, բայց միտքս չդանդաղեցաւ ոչ մէկուն առջեւ: Միտքս կապած էր Մարտեանի ընդունելութեան մթնոլորտը ու կառչած անոր: Հիմա արդէն հոն պէտք է ըլլայ Առաժը, նուէրը՝ սեղանին վրայ, ինք անկիւն մը, բաժակը ձեռքին, դէմքը ծուխի մէջ, սիրտը թունդ էլած: Ի սրտէ կը մաղթէի, որ այդպէս մնայ մինչեւ հրաժեշտի պահը, մեկուսի, հետաքրքիր մը շօտենայ իրեն ու ինք չկրկնէ հայելիի իր անողոր փիլիսոփայութիւնը...

— Շատ տոբուած կ'երեւիս:

— Գուրդէ՛ն, — հացի մէկէն, ձայնին կողմը դառնալով ու փաթթըւեցայ իրեն, — այս ի՞նչ գեղեցիկ անակնկալ է, ե՞րբ եկար:

— Երէկ առտու:

— Ինչ լա՛ւ: Ի՞նչ, պատմէ ծայինք:

— Դեռ առթի կ'ըլլայ: Հիմա ժամանակ չունիմ: Հիւրերս տուն ձգած՝ դուրս ելած եմ:

— Սա ծրարները վար գիր ու նստէ վայրկեան մը, — ըսի ու ձայնեցի սպասեալին:

— Ձեռ կրնար, բայց շատ զոհ կը մնամ, եթէ դուն ընկերանաւ ինծի: Լաւ ժամանակ կ'անցընենք:

— Տո՛ւնը:

Մարտիկ գլուխը:

Վեր առի յօնքերս:

Մանկութեան ու պատանեկութեան շրջաններէս մնացած ամէնէն սիրելի տղան էր Գուրդէն, ճարտարապետ, որ Փարիզէն վերադառնալէս գրեթէ անմիջապէս ետք Մէռուական Արարիւն մեկնեցաւ եւ մինչեւ օրս հոն կը թրտնակէ աշխատիլ: Ամառները, իր արձակուրդին, միշտ պատեհութիւն կը ստեղծենք միասին ըլլալու, իմ սահմաններէս ներս՝ սրճարաններու, ճաշարաններու եւ գիշերային գրօսափայրերու մէջ: Միջաշաքի, լեցունիկի, շարժուն ու զուարթ բնուորութեամբ տղայ մը, որուն ներկայութիւնը միշտ հրճուանք պատճառած է ինծի, իր բոլոր ծանօթներուն: Մարիայէն բաժնուած ուռնիս հո՞տ էր տակաւին ու գիտէր, որ այդ միջադէպէն ետք որեւէ տուն ստէ չէի գրած, խուսափած էի միշտ ու բոլորովին կորսնցուցած անային յարաբերութիւններու պարզ ճաշակը: Ինք, ընդհակառակն, հազի կու տար անոնց համար: Հայր ունէր, մայր ունէր, եղբայր, քույր, ուրիշ մերձաւորներ, կը վառէր անոնց կարօտներով եւ արձակուրդի իր համրուած ժամերուն մեծ մասը կ'անցընէր անոնց հետ, օրինապէս հոգիի մը բոլոր յատկութիւններով, շտապելով շահածը, սիրտը, խօսելով, պատմելով, երջանկութեան նոր-նոր սերմեր նետելով հոգիներուն մէջ:

— Դէ՛, ժամանակ չկարսնցնենք: Այս մէկը տարբեր տուն է, ի՞մ տունս:

Նախորդ արձակուրդին յայտնած էր, որ իրազործած է իր մեծ երազներէն մէկը, զնա՞ծ է սեփական յարկարաժին մը եւ մտադրած է վերադառնալ Լիբանան: Աւարտած էր որդիական ու եղբայրական բոլոր պարտաւորութիւնները ու սկսած էր մտածել ինքն իր մասին, երջանիկ էր: Հետագայը բնական հետեւած էի իր պատմութեան: Քաղցրագին յուզում մը պատեց զիս կրկին ու անպատուութիւն մը զգացի մէջի, երբ մանկական ուրախութեամբ մը արտասանեց իր վերջին բառը՝ «Ի՞մ տունս»:

Մտանք տնկողման փողոցը, առաջացանք զիջ մը ու բարձրացանք Գանթարիի դռնիթափին վրայ նորակառույց հսկայ շէնքի մը եօթներորդ յարկը: Դուռը բացաւ բարձրահասակ, սեւ մազերը ուսերուն թափած բոցաբնարծ աչքերով աղջիկ մը:

— Ճանչցա՞ր, — զարձաւ ինծի Գուրգէն, — Լիլին է:

Լիլին, պզտիկ քոյրը: Աչքերուս չհասնացի: Ե՛րբ մեծցած էր Լիլին: Այսքան արագ անցած էին տարիները: Մեր պատանեութեան օրերուն, երբ հիւզաւանի մէջ կ'ապրէինք եւ կ'այցելէինք իրարու, հազիւ վեց-եօթը տարու աղջնակ մըն էր, վառվռուն, խելացի, տան ամենափոքրը, ամէնուն սիրելին, եւ կրնա՞ր մէկը մտքէն անցնել, որ այսքան չուտ պիտի մեծնայ:

Հիւրերը՝ երեսասարդներ էին, բոլորն ալ, ամսինքն եւ քոյր ու եղբայրներ, թեթեւ հագուստներու մէջ, կոկիկ, ժուժկալ, ամէնքը խնդումներով: Սրահը ողողւած էր անկիւններէն ու անյայտ խորշերէն արձակուած լոյսերով, ու դրադարանին պորտէն երկարող մեղմ երաժշտութիւն մը կը ծածկէր միջոցին մէջ: Մաղկակողովներ՝ հոս ու հոն, թիկնաթոռներուն մօտ, անկիւններուն, ու դրադարանին կցուած սեղանին վրայ դոյնդոյն թուղթերով պատուած առփեր: Տարբեր բան մը կար մթնոլորտին մէջ: Պարզ հանդիպում մը չէր կարծես եղածը:

Ծանօթացման արարողութենէն ետք, Գուրգէն բացաւ հանդիպակաց պատէն կտի վարագոյրը ու ներս մտաւ, իսկ Լիլին ուխտէ լիցուց բաժակէն մէջ եւ քառուկեցաւ միջանցքին կողմը:

— Կը ծխէ՞ր, — հարցուց մօտո նստած երիտասարդը՝ սիկարէթին տուփը մօտեցնելով, — անուշա մոռցար թերեւս, ես Սերբին եմ, այս քաղաքի ամէնէն անհող ու զուարթ աղան:

— Արդէն կ'երեւի, — ըսի ժպտելով:

Սիկարէթին ծուխին մէջէն անսայ, որ ամէնքը ինծի կը նային, ինչպէս կը նային օտարի մը: Ավիրաւորուեցայ ատար համար: Արդէն չէի ուզեր, որ մէկը հետաքրքրուի ինձմով: Կեանքս դժուար էր պատմել, ատրեան չէի կրնար դուքս հանել իր փակ շրջանակէն, ասորքեր հարցումներու համար անկատար պատասխաններ միայն կրնայի մըթմըթալ: Նեղութիւն մը եկաւ վերտա:

— Լիլի, թեղի կը սպասենք, — ձայնեց Գուրգէն, ու Լիլին անմիջապէս երեւցաւ, այս անգամ սեւաթոյր հագուստի մը մէջ, որուն ծփանքներուն հետ կը փափլէին աստղային պատրանքներ:

— Ներկայներէն կը խնդրուի, որ իրենց բաժակները առած այս կողմ մօտենան, — խօսեցաւ զարձեւալ Գուրգէն եւ իր վերջին բառին հետ բացաւ խորքի վարագոյրը ու երեւցաւ խմբի, աղանդներէրու եւ ուսելիքներու ճոխ ալլաղանութեամբ քեանուսը սեղան մը: Այն ատեն իմացայ հուսօքոյթին շարժառիթը: Լիլին տարեդարձն էր: Հոգիին ճշդօր օտարութեան վերջի շարժացի նոր ճնշում մը: Ինչո՞ւ Գուրգէն ինձմէ ծածուկ պահած էր իրականութիւնը: Վերաւար աչքերս սեւեռեցի աչքերուն: Խնդաց: Մաղկակողովներն ու սեղանին վրայ դիզուած ժապաւինազարդ տուփերը աւելի խորացուցին դատարկ ձեռքերուս վիշտը:

Մէկ վայրկեան լուսթիւն պահանջեց Սերբը, Լիլին անունը ասաւ, երջանկութեան մաղթանքներ բրաւ, երազներու ճամբաներ բացաւ ու տաքաւ բաժակը շրթներուն: Միւսները հեռուցան իրեն:

— Լիլի, կ'անցդ:

— Կեանքդ երկար ըլլայ, Լիլի:

— Թող կատարուին բոլոր խաղերդ:

Լիլին ժպտելով, խոնարհելով, շատագուհեղով եւ ամ ու ձախ դառնալով ամէնուն շնորհակալութիւն յայտնեց ու հերթով պարկաւ բաժակը բաժակներուն:

Սերորի առաջարկով խմբերդ մը սկսան: Անծանօթ էր ինծի: Սերոր տուաւ Սոնային անունը: Ու Սոնան մեներդեց: Ձէի լսած: Բոլորը մէկ յեղափոխական երգ մը պայթեցունցին ապա, Սերոր փառաբանուած յեղափոխականին մէկ սխրանքը պատմեց: Խորթութեան նոր ասեղ մը ժխուեցաւ որդիս: Ինծի տարեկիցներ կային անոնց մէջ, ինձմէ քանի մը տարիով պըզտիկներ, աւելի թարմերը կային, բայց հաւաքական շնչառութիւն մը կը վարէր ամէնքը ու որքան տարբեր էր իրենց կեանքը, դուարթ, բուխ: Ուրիշ խմբերդ մը, ուրիշ մեներդ, բանաստեղծութիւն, իւրաքանչիւրին աւարտին խօսք մը, մանրամասն մը, անեղ մը, ալեկոծում մը: Այն ոք մենակատարի վարժութիւն ունէր: Կը զարմանայի իրենց հալոյն ու անձկութիւն մը կ'ապրէի ինծի ըլլալիք առաջարկի մը հաւանականութեան համար: Այն մէկ լրիւ հրդգիւտէի, ոչ մէկ բանաստեղծութիւն, պատմելու շնորհէն անմասն ծնած: Ես՝ որ ամօթխածութեան մասին պաղափար չունեցող մէկը կը կարծէի ինքզինքս ու յանդուգն նախաձեռնութիւնները իմ ամէնէն ցայտուն գիծերը կը կազմէին, այդ պահուն զգացի, որ ունեցածս չըմանային խիզախութիւն մըն է միայն, չըմանային լեզու մը, չըմանային փորձառութիւններու գումար մը միայն: Երգ, բանաստեղծութիւն, մանրամասն, պատում, սուր խօսքեր՝ աղբիւր, կիներու, մշակութային անձնաւորութիւններու, քաղաքական դէմքերու մասին, ոգեւորութիւն, յուզում, ուրախութեան ճիւղեր:

Նոյն կըստով կ'ընթանար նաեւ ժամանակը, որ անցած էր կէս գիշերուան սահմաններէն շատ անդին, բայց անյայտագիր խնձորքը կը շարունակուէր՝ դուարթութեան, յուզումի, տենդայայտ յիշողութիւններու անըստ պահանջներէն առնելով իր թափը: Նոր երգ մը, կարօտի կրակ, հայրենական պատում մը, լրջութեան հովեր, արցունք, լուսութիւն:

Պարզը եկաւ Լիլին, որ մինչ այդ, Գուրգէնին հետ, աւելի հիւրընկալի դեր մը կը կատարէր եւ հարեւանցիօրէն միայն կը մասնակցէր պոթիկոնումներուն: Սերոր երգ մը առաջարկեց իրեն: Դժկամակեցաւ: Երդիկ մենապար մը պահանջեց: Թախիծ մը ուրուաղծուեցաւ դէմքին: Մափահարեցին: Կաթիլ մը արցունք սահեցաւ գունամառ դէմքին: Պահանջները կրկնուեցան: Այն ատեն որեւց աչքերը ու սկսաւ արտասանել սպասումէն խոցուած հոգիի մը պաղատանքը աչքան վայելչօրէն, ուժով ու ջերմութեամբ, որ ալիւներու պէջան բոլորը:

Եկա՛ւր, տաղտկալի կեանքս խաղաղէ,

Զգալ տուր ինծի գորովանք ու յայտ...

Երբ Լիլին վարձատրող փոթորիկը մարեցաւ, Սերոր ժամանակը յիշեցուց ու խօսքը բաւ վերջացնելու մասին:

— Պարով մը, — առաջարկեց Երդիկ:

— Պարով մը, — ըսաւ Սերոր հաճոյակատար շեշտով մը:

Ակաւառակը անմիջապէս սկսաւ դառնալ ատենէ մը ի վեր ամէն տեղ ու ամէնուն կողմէ իրախայտած «Մովսիսիմ» անունով դանդաղ պարեղառնակին վրայ:

Երբ մօտս մէկը լմնաց՝ ուղղուեցայ պատշգամ, որ կը հայտնէր քաղաքին մէկ ժամին, լեռներուն ու լեռներու փէշերուն զարնուող ծովային դիւթանքներուն: Զախին՝ նորէն ծովն էր: Ծովը: Հիմա լուսաւոր կէտեր կը թաւայէին անոր բացերը, թաւալող հրդեհներ կը մօտենային ափին՝ վերջացող երազներուն պէս, սկսող, երազներու պէս: Թո՛ղ:

— Կը խանդարե՞մ :

— Խնդրեմ, — ըսի՝ դառնալով ձայնին կողմը :

Լիլին էր : Պատահանէն հոսած լոյսի շերտ մը կը խաղար դէմքին ու կը մատնէր թարթիչներուն հեւքը :

— Կը տէրէ՞ք ծովը, — հարցուց :

— Շատ :

— Ո՞ր եղանակին :

— Բոլոր եղանակներուն :

— Ձեռն զարմանալ : Գուրդէնին պատմածներէն ընչ մը կը հանձնամ ձեր հոգին :

— Ի՞նչ :

— Այս :

Թերահաւատ ժպիտով մը նայեցայ դէմքին :

— Եթէ տեղ մը պատահաբար հանդիպէինք՝ իրապէ՞ս պիտի չճանչնայիր զիս, — շարունակեց Լիլին :

— Անկեղծ ըլլալու համար՝ ոչ : Շատ փոխուեր ես, մեծցե՛ր... :

Թեթեւ մը խոնարհեց դուիսը ու փափայեց պզտիկ թաղարի մը մէջ խնամուած ուհիանի թուփը : Հանելի բոյր մը տարածուեցաւ միջոցին մէջ ու տարաւ զիս մինչեւ Փարիզ, ուր այսպիսի գիշեր մը եւ այսպիսի բուրումնալից մթնոլորտի մը մէջ, Ձեւային հետ իրենց պատշգամէն դիտեցինք լուսոյ քաղաքի լուսահեղեղ համայնապատկերը : Յետոյ, Յետոյ... Թախիծ մը պտրտեցաւ թարմինիս մէջ ու ակնարկն դարձեալ ծովուն զարժուցի :

— Նրեւի պարեւ չէք տիրեր, — ըսաւ Լիլին՝ բուրումնալից ափերը երեսին տանելով :

— Պարեւ՝ ոչ, պարը՝ այո :

— Ո՞ր տեսակ պարը :

— Նայած :

— Նայած ի՞նչ :

— Վայրագութեան չափին :

— Ծովո՞ւն պէտ :

Օրորեցի դուիսը :

— Ե՛ւ, դո՛ւք, — ձայնեց Սերոր՝ մեզի մօտենալով, — պարը վերջացաւ ու ամէն ինչ վերջացաւ. ա՛յս կողմ :

Իրեն հետ խնդալէն ներս մտնալ : Ոմանք ինկած էին թիկնաթոռներուն մէջ ու կը հովէին իրենց բոց առած երեսները, միւսները ոտքի էին աւրդէն : Զուր անցած բաժակ մը եւս առնելու Գուրդէնին ջանքերը : Ողջագուրեցայ հետը :

— Կը յուսամ դուիսդ շատ չցաւցուցինք եւ կը յաւատամ, որ դարձեալ կը հանդիպինք իրարու, — ըսաւ Սերոր եւ մեկնած պահուն ամուր մը սեղմեց ձեռքս :

Յաջորդաբար քանի մը օր կ'ընէ, որ ձայն չկայ Ատոմէն : Գուրդէն ալ չերեւցաւ ու, զարմանալի բան, երէկուան պէս ու առջի օրուան պէս, այս երեկոյ եւս փոխանակ սովորական ճամբաները նետուելու, քայլերս դարձեալ ուղղուեցան դէպի «Փանսիոն» իմ սենեակս : Մտածած փանջան զգաց ժուաքս ու հաղիւ քանի մը վայրկեան անց, ըստ իր սովորութեան, դաւաթ մը ուխտէի դրաւ մօտս : Որեւէ խօսք ըսելու փորձ չըրաւ : Երեւի դէմքս դարձեալ չարամադրեց զինք :

Կը դարձնէի «Փարի Մալ»-ի էջերը, բայց ոչ մէկ գրութիւն, նոյնիսկ ոչ մէկ նկար կը յաջողէր իր վրայ քեւեռել ուշադրութիւնս: Էջերուն հետ ու նկարներուն հետ մտասեւեռումի մը ուժգնութեամբ կը կրկնուէին այն գիշերուան անցուղարձերը, Հիփփիններուն մեր հանդիպումէն մինչեւ Մարտեանի ցուցահանդէսը, ու մինչեւ Հէտ Ռոշ սրահանքը, ու մինչեւ Գուրգէնի յարկարաժինին մէջ թաւալած պահերը: Կը մտաբերէի մանրամասնութիւնները ու սրտիս կը զգայի ինքզինքս չսիրելու տրամադրութեան ուժեղացումը: Ուրիշներուն համեմատութեամբ՝ որքա՞ն զուր անցած են կեանքին առջինն յորդ տարիները: Մարդիկ ի՞նչ լնչին ծառայութիւններով, ընդառաջումներով ու հաճոյական խօսքերով գիտեն ուրախացնել զիրար, երգել իրարու համար, պատմել, զարնել բաժակ բաժակի ու գինովնա՞լ իրարու համար: Այս բաներով կազմուած օրերու շղթան աւելի արժէք չունի՞ տրդեօք, քան գիշերային զրօսավարերու մէջ իմ գնած հաճոյքներու ուժգնը: Առաջին տեղամ Ջոյնին կրած հարուածին անդրադարձը նետեց զիս այս համբուն մէջ, որ ամէնօրեայ դարձաւ, երբ զգայի Մարտիի ծնողներուն զիս որդեկրելու մտադրութիւնը: Մնողը չունէի, քոյր-եղբայրներ զլացած էր ինծի թախար, քան տարեկանիս միամիտակ մարդ մըն էի կեանքին մէջ, բայց չէի ուզեր, որ ուրիշներ խօսին միեակութեան մասին ու պաշտօնական վրաս: Հօրս կորուստը, կորուսած սիրոյ մը վէրքը, ուրիշ մը չկարենալ սիրելու տառապանքը եւ կարեկցութիւններէն զգացած սարսափս տարօրինակ անձ մը կազմած էին մէջս, հեռաւորութիւններու երկրպագու, խորացումներէ խորող, թեթեւ հաճոյքներու անձնատուր: Այս չէ՞ պատճառը արդեօք, որ մեծ կիրքերէ ու մեծ մոլութիւններէ պուրկ մարդոց պէս մեծ դատարկութեան մը առջեւ կը զգամ ինքզինքս հիմա: Սր մը, կը յիշեմ, հարեանցի մարդ որակեց զիս Ատոմ: Այն ատեն պզտիկ վիրաւորանք մը զգայի, բայց իրատուեց չունէ՞ր միթէ: Հարեանցի հայ մը, հարեանցի մարդ մը, հարեանցի սիրող, հարեանցի խմող: Միայն մէկ անգամ զգացած եմ տառապանքը, հօրս մահուան վաղորդային, Փարիզ, անորոշութիւնը, որ դրո՞մ շահելու կիրք մը անաշտաց սրտիս, վրէժխնդրութեան չափ զօրաւոր: Գրասմը մը մեծ հարց մը չէ ինծի հիմա, անոր տիրանալու ձեւերը գիտեմ, ուղածն կրնամ ընել, ունենա՞լ դրամով, բայց ոչինչ անցող մէկը կը թուիմ ես ինծի, աղքատ՝ երբ կիրքի հսկայ տարերքով փոթորկող Ատոմին հետ կը բաղդատեմ ինքզինքս, կը համեմատեմ այն գիշերը քով ջուրի եկած տղոց հետ, որոնք պարզ կեանք մը կը վարեն, կը փնտեն զիրար, կը հասկնան զիրար, բաց սրտով կը խօսին իրարու հետ, կ'երգեն նոյն երգը, կը պարեն, կը յուզւին նոյն արայայտութիւններէն, կը խնդան իրահագաղ: Փանօրոնէն՝ դրասենեակ, դրասենեակէն՝ հաշարան, հաշարանէն՝ զրօսավար, զրօսավարէն՝ անկողին: Աշխատիլ, ուտել, զուարճանալ, հանգիստ ընել: Արթննալ՝ ու կրկնել նոյն հեքը: Բնակարաններու շինութեան յանձնակատարի այս դրո՞ւծին մէջ արձանադրած առաջին յաջողութենէս ի վեր այս հալոյթով թաւալած են տարիներս եւ չեմ յիշեր ուրիշ երեւոյթ մը, որ զիս ցնցած ըլլար ուրախութեան կամ տխրութեան փոթորիկներով: Գործ, դրամ, զրօսավար: Ո՛ր ընկուզող մոլեռանդութիւն մը ունիմ, ոչ ալ պարզութեան մը շարուանակամութեան սաղմը կը կրեմ: Աւելի չատ գործ, աւելի նոր հաշարաններ, նոր... Յետոյ ի՞նչ:

Ես ինծի դէմ ընդվզած՝ այս անդրադարձներով կ'ալիկոծէի, երբ հընչեց հեռամասին: Վերցուցի ընկալուչը: Գիծին միւս ծայրը գանուղը մասմանակ շատաւ: Ինծի նոյնիսկ պայմանական ալսն տրտմաններու, ուղղակի սկսաւ երգել:

Շրջում եմ ես, արտում
Քա պատկերն իմ արտում,
Քա խօսքերն իմ արտում,
Իմ լուս, իմ լուս:

Այս, ո՞ւր ես արդեօք, ո՞ւր,
Դարձել եմ տխուր,
Այս, իմ լուս, իմ լուս...

Կին ձայն մըն էր, խորունկներէն տղերացող, ողորուն, խոսվիչ:
Վերջացուց: Սպասեցի լուս: Հարցուց.

— Արած:

— Ո՞վ:

— Արածը չէ՞ խօսողը:

— Ոչ, Կարծեմ թերթագրութեան մէջ էք:

— Ո՞վ է ուրեմն հետ խօսողը:

— Արածը չէ:

— Կարելի՞ է գիտնալ, թէ ինչ է ձեր թիւը:

Ըսի:

— Կը ներէք: Վերջացող վեցին փոխարէն՝ եօթին վրայ գրելեր եմ
ժառ: Կը ներէք: Բայց...

— Բայց:

— Բայց ինչո՞ւ ընդհատեցիք երգը:

— Ինչո՞ւ պիտի ընդհատէի:

— Այնպէս: Կրնայիք առաջին բնութիւն կոսակէ, որ թերթագրութեան
մէջ եմ:

— Ձեռնահատեցի:

— Ձայնս հանելի՞ թուեցաւ ձեզի:

— Ձեռնեցի Արածին անակնկալ մը ընելու ձեր հանոյքը ընդհատել:

— Օ՛, ի՞նչ փորձառութիւն: Կրնա՞մ գիտնալ, թէ ով է հետ խօսողը:

— Հետաքրքրական մէկը չէ: Մի՛ սմն:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ ձեզի հետ խօսողը Արածը չէ:

— Շատ կարուկ են ձեր պատասխանները: Կը ձանձրացնե՞մ ձեզ

արդեօք:

— Ո՞չ:

— Անարամպիւր կ'երեւիք ստեղծ:

— Ձեմ գիտեր: Թերեւս:

— Կ'ուզե՞ք ուրիշ երգ մը երգեմ:

Հռեցի:

— Գիտէ՞ք ինչ, — ըսաւ պահ մը հաք թիթեւ մը խնդալով:

— Ինչ:

— Ոչինչ:

— Ոչինչ:

Երկար լռութիւն:

— Յանկարծ փափաք մը արթնցաւ մէջս ու չեմ համարձակիր յայտ-
նել զայն, — վերսկսաւ վարանաւ:

— Ի՞նչ:

— Յայտնեց, որ հետաձայնալին այս պատահարէն աւելի պայծառ յի-
շատակ մը ունենալու համար կը փափաքէ օր մը ուղղակի խօսիչ երաբ. հետ,

Եթէ անպատեհութիւն մը չկայ: Անմիջապէս յիշեցուցի իրեն անպատեհութիւնը, Արամի պարագան: Գաւառահովիտին մը չհամարեց: Իր ուղածը ապրիլը թափափախն հանդիպում մըն էր, ճամբու միայն: Սիրեցի իր պարզութիւնը: Իր անակնկալը արդէն մեղմած էր զոտն անդրադարձներու աստակաւ: Թիւնը, ու ձայնը՝ հեղեղէն ետք իր հրաշքը շարունակող աղբիւրին պէս սկըսած էր քաղցրօրէն կտրկուել արիւնիս մէջ: Հետաքրքրուեցայ իր ժամերով: Կրնար ամէն օր յետմիջօրէի ժամը շոգութիւնին ըլլալ քաղաքի կեդրոնը: Որոշեցինք հանդիպել յաջորդ օրն իսկ, Ռիտա Սոյճի հրապարակին միայն, արձանին ծօռ: Երբ բարձրահասակ ու երկայն մազերով աղջիկ մը տեսնէի հոն՝ զլխով բարեւելու փորձ պիտի ընէի ու, ինք պիտի միանար ինծի: Ինքնութիւնը շայտակեց: Անունը պիտի վստահէր ինծի, Եթէ յարգէի ժամադրութիւնը: Պայման: — Եթէ զրօքինք իրարու տրուած այս խոստումը, այլեւս երբեք պիտի չհետաքրքրուէինք իրարմով:

Կէս ժամ առաջ տեղ հասայ, բարձրացայ Սինեմա Վիսփիթոյճի սըրճարանը եւ դրաւեցի Նշանակուած ժամադրութիւնը Նայոյ սեղանը: Եթէ չգտար՝ սպասումը աւելի տանելի կրնար ըլլալ հող, իսկ երբ հասնէր՝ կըրնայի մէկ վայրկեանէն ծօռ ըլլալ:

Նշանակուած պահուն, խոր հրճուանքով մը դիմացի մայթին նկատեցի նկարագրուած աղջկան պէս աղջիկ մը, բարձրահասակ, երկար մազերով, սր եկաւ ու կանգ առաւ արձանին մօտ: Հաւաքեցի ինքզինքս ու, հագնալ քաղի ելած՝ հակադիր մայթին երեւցաւ ուրիշ աղջիկ մը, գրեթէ նոյն հասակով ու սեւ մազերով դարձեալ, որ ճեղքեց ինքնաշարժներուն հոռոք ու կանգ առաւ առաջինէն քանի մը քայլ անդին: Ուժգին դող մը սկսաւ ցնցել զիս: Ո՛ր մէկն էր արդեօք ինծի սպասողը, որո՞ւն զլխով Նշան պիտի ընէի: Ոտքերս առաջ չգացին: Մտնելու աւելի դիպուեցաւ սրտիս:

Առաջին եկողը մօտեցաւ մայթիկին, նայեցաւ ժամացոյցին, զննեց քառուղին, անցաւ դիմացի մայթը, դարձեալ նայեցաւ ժամացոյցին, ալ ու ձայն չարժեք զլուխը ու կեցուց զէպի Արդարութեան պալատ ուղարկող ինքնաշարժ մը:

Տարակոյս մը ուրուացաւ մտքիս: Ինծի հետ ժամադրուողը մեկնո՞ղն էր արդեօք, թէ յամացողը: Դողահար սրտով շտապեցի վար, մօտեցայ քիչ մը: Կոնակը իմ կողմս՝ երկրորդ կեցած էր անշարժ ու կը դիտէր արձանին վրայ թառած միայնակ աղանին: Աւելի մօտեցայ ու այդ վայրկեանին երկնքը վիհեցաւ վրաս: Լիւին էր: Սարսափելի թուեցաւ ինծի զինք տեսնել այդպէս, սպասման մէջ, վկայ ըլլալ իր գաղտնիքին, երեսնալ իրեն: Խուճապահար ընկրկեցայ ու խոնուեցայ զէպի Մուարատ խուժող բազմութեան մէջ: Ա՛խ ատի ուղղակի տեսնակս, ուր սկսան ու անվերջ կրկնուեցան տանջալի նոյն շարժումները — որո՞ւ կը սպասէր արդեօք Լիւին եւ ո՞վ էր այն միւս աղջիկը, որ քանի մը վայրկեան աւելի չսպասեց ինծի ու մեկնեցաւ աշտան անողը կարգապահութեամբ մը, եւ անդամօրէն, ինչպէս սպասեցած էինք իրարու: Գնաց, բաց օդային յարաբերութեան մը մէջ կազմուած այս կապը կը յամադր սրտիս ու չեմ յաջողիր, չեմ յաջողիր վանել իր ձայնը, որ կը կրկնուի արիւնիս մէջ, այս անգամ իր ետեւէն, իրեն համար, անիրաւուն իր պատկերին կարօտով:

Ա՛խ, ք՛ու ես արգեօք, ք՛ու,

Դարձել եմ ես տխուր,

Ախ, իմ լաւ, իմ լաւ...

-(Հաստատած)

ԳՕԴՈՍ ՄԱՎԳԵԱՆ



Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ.
ԱԹՈՌԱԿՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԵԶՆԻԿ ԿԸ ԴԱՍԱԽՈՍԷ ՕՔՍՖՈՐՏԻ ՄԷՋ...

Բարակ մաղուող անձրեւը, մշուշապատ մթնոլորտին մէջ, յաճախադէպ երեւոյթ է Օքսֆորտի մէջ: Աշնան եղանակին՝ աւելի եւս յաճախակի, գրեթէ ամէնօրեայ երեւոյթ: Ինծի համար ամէնէն հաճելի եղանակներէն մէկն է այդ. ինքնամփոփումի եւ սեւեռեալ աշխատանքի մղող արտաքին այդ մթնոլորտը, սակայն, արեւի կարօտ անգլիացիին համար անսխորժելի տրամադրութիւն կը ստեղծէ:

Բայց այս օրերուն, Սեպտեմբերի վերջերուն, արտասովոր կերպարանք մը ունի Օքսֆորտը անգլիացիին համար: Օդին անհաճոյ երեւոյթը մոռցուել է. եռուզեռ մը կայ, խանդավառութեան անսովոր շարժում մը կայ ակադեմական, համալսարանական, գիտական եւ ուսումնական կեանքով ողողուած այդ փոքր քաղաքին առհասարակ «ծանր» մթնոլորտին մէջ: Այս օրերուն, անգլիացիներէն աւելի ոչ-անգլիացիներ կը տեսնեն համալսարանական դուլէճներու շրջափակերուն, սրահներուն եւ քաղաքի գլխաւոր փողոցներուն մէջ: Գրատունները գիրքերուն չափ խրճողուած են մարդերով: Աշխարհի չորս ծագերէն, աւելի քան քսան երկիրներէ, մեծաւ մասամբ արեւմտեան, եւրոպական քաղաքներէն, հինգ հարիւր գիտնականներ փութացած են այստեղ Հայրաբանական Ուսմանց (Patristic Studies - Patrologie) Ճրբորդ Միջազգային համաժողովին բերելու իրենց մասնակցութիւնը:

Գրիստոնէական եկեղեցւոյ մտածողութեան եւ ընդհանուր կեանքի ու առաքելութեան վրայ իրենց որոշադրիչ դերն ունեցած են այն դէմքերը նախնական դարերուն, յատկապէս երրորդէն մինչեւ վեցերորդ դար, որոնք առհասարակ միջազգային քրիստոնէական գրականութեան եւ եզրաբանութեան մէջ կը ճանչցուին Եկեղեցական Հայրեր (Church Fathers - Les Pères de l'Eglise) անունին տակ: Յունարէն, լատիներէն, ասորերէն, հայերէն, ղպտերէն, եթովպերէն եւ այլ հին դասական լեզուներով անոնց մշակած գրական ստեղծագործութիւնները նոր հետաքրքրութեան, գիտական պրպտումի առարկայ են դարձած մասնաւորաբար վերջին տասնամեակին: Գիտական այդ ճիգն է, որ, Հայրաբանութիւն (Patrologie) անունին տակ ընդգրկուած՝ համաշխարհային տարողութեամբ արժեւորումի եւ նոր պրկումի առիթ գտած է միջազգային այս երրորդ համաժողովին գումարումով:

Եկեղեցիներու մտածողութեան եւ կեանքի ներքին սահմաններէն անդին են տարածուած այդ գիտական ճիգին իմաստը, արժէքն ու կարեւորութիւնը: Մարդկային ընդհանուր քաղաքակրթութեան, փիլիսոփայական, ընկերային մտածողութեան մէջ սկսած է վերարժեւորուիլ Եկեղեցական Հայրերու մշակած ընդարձակածաւալ գրականութիւնը: Յատկապէս դասական փիլիսոփայութեան պատմութեան նուիրուած ուսումնասիրութեանց մէջ կարեւոր անդ սկսած են գրաւել անոնք: Մասնաւորաբար յունական, պղատոնական, արիստոտէլեան, նոր-պղատոնական իմաստասիրական աւանդութեանց հասկացման եւ արժեւորման մէջ իւրայատուկ կարեւորութիւն ստացած են անոնց մեկնաբանական, ճառագրական եւ ջատագովական գործերը:

Ինծի համար ամէնէն գրաւիչ պատկերը Օբաֆորտի այս ընդհանուր տեսարանին մէջ՝ մարդերն են, իրենք՝ գիտնականները: Մինչեւ այդ օր, անոնք ինծի համար ռոսկ անուններ էին, գիրքերու ճակատներուն վրայ դրոշմուած կամ գիտական հանդէսներու, հաւաքածոներու, համաշխարհային բառարաններու յօդուածներու տակ զետեղուած անուններ: Զանոնք երեւակայած էի մատենադարաններու սրահներուն մէջ, հակած՝ ձեռագիրներու, հաստափոր հատորներու վրայ, երբեմն միջբրոֆիւմի մեքենաներու առջեւ՝ մանրագին պրպտումի աշխատանքին լծուած: Ծոռա, շատ քիչեր անոնցմէ տեսեր էի ամպրոններու վրայ դասախօսելու պահուն, յաճախ անհրապույր ըլլալու առտիճան չոր ու ցամաք մեթոտով: Անոնց մասին պարզապէս լուռ աշխատող մարդկային մեքենաներու պատկերը

չինքն էի մաքիս մէջ, նման այն հացթուխին, որ այլուրէն մեզի հաց կու տայ եւ մենք հացը կը ճաշակենք, բայց հացթուխը կը մոռնանք...

Ամէն անգամ երբ աչքերս անոնց անուններուն հանդիպէին՝ հիացումի զգացում մը կը զարթնէր իմ մէջ անոնց նկատմամբ: Միտքի, գիտութեան հերոսներ էին անոնք: Բայց այդ հերոսութիւնը անգայտ, անիրական, վերացական բան մը ունէր իր մէջ: Եւ իմ հիացումս ալ հետուի հիացում էր, երեւակայուած ապրում. գիտակցուած, խորհուած ապրում էր անշուշտ, բայց կը զգայի, որ չէր այն, ինչ որ իրաւութիւն կը կոչենք, այն՝ որ կենքի ճշմարտութենէն կեանք կ'առնէ, մարդկային ուղղակի հագորդութենէն եւ անձնական ճանաչումէն կը բխի եւ անձին գոյութեան հետ կը շաղախուի:

Հոս են անոնք հիմա, երբեմն սրահին մէջ համախմբուած, երբեմն համալսարանի դոկէմէնտու միջանցքներուն մէջ երթեւեկող, երբեմն ճաշարանի սրահին մէջ ջովջովի նստած, երբեմն գրատան մը մէջ գիրքերու առջեւ աչքերն իրենցմէ դուրս բերած, հատորներուն վրայ սեւեռուած եւ երբեմն անոնց էջերուն մէջ խորասոյգ եւ հետաքննիչ հայեացքով իջած, մերթ փոդոցի երկայնքին, ուսանողական հաւաքավայրերու մէջ սեղանի մը առջեւ թէյ կամ սուրճ առնելու եւ մտերմիկ խօսակցութեան բռնուած պահուն: Անոնցմէ մէկը կաթոլիկ է, կաթոլիկներուն մէջ մին՝ դոմինիկեան, միւսը՝ ֆրանչիսկեան, ուրիշ մը՝ բենեդիկեան, մին՝ յիսուեան: Միւսը օրթոտոքս՝ յոյն, ռուս, ռումէն, պուլկար: Շատեր կան անկլիքան. ուրիշներ՝ բողոքական: Բայց այստեղ բոլորն ալ հագած են հասարակաց, ընդհանուր տարազ մը եւ եղբայրօրէն մտերմացած իրարու հետ՝ գիտական առաքելութեան, ճշմարտութեան եւ արժէքներու որոնումի ճամբուն վրայ: Իրենց պատկանելիութիւնը գիտութեան եւ ճշմարտութեան նուիրումին հետ է առընչուած: Կը զգաս, որ բոլորն ալ նման են իրարու՝ անդրանցած ըլլալով իրենց մասնաւոր պատկանելիութիւնները:

Այս օրերուն անունները շունչ առին, անձնացան, մարդկային տեսանելի եւ շնչող կերպար զգեցան: Տեսայ, լսեցի գիրքնք. խօսեցայ շատերուն հետ եւ գիտնականի իրենց տիպարը նոր տարածք ստացաւ գիտակցութեան մէջ:

Համալսարանի ընդարձակ սրահին մէջ են յաճախ՝ Նորաբեր ուսումնասիրութիւններ կը կարդացուին. Ս. Գրքի բնագրային ճշգրտումներ կը կառարարուին. Ս. Գրային աստուածաբանական հարցեր կ'արծարծուին. նորադէւա ձեռագիրներու ներկայացումներ եւ վերլուծումներ

կը կատարուին. նաեւ-Համառօտի պեղումներէն զուրս բերուած նոր ձեռագիրներու, պապիւրոսներու մէջէն նոր յայտնագործումներ կը հանդիսադրուին, զնոստիկեան շարժում մի տարածուն պատկերներ կը գծուին, եկեղեցական հայրերու, յատկապէս Օգոստինոսի փիլիսոփայական մտածողութեան նոր անկիւններ ի յայտ կու գան, յունական փիլիսոփայութեան հետ առնչութեան նոր կապերու մասին կը զեկուցուի, ծիսական, սրբախօսական գրականութեան մէջ նոր էջեր եւ նոր երևոյթներ կը պարզուին. մէկ խօսքով՝ այդ մէկ սրահին մէջ ամբողջ աշխարհներ կը բացուին: Միտքի, մշակութային արժէքներու, մարդկային ապրումներու եւ իրազործումներու անծայրածիր հորիզոններ կը բացուին ամիսներու եւ տարիներու մեղուաջան հետաքննական պրպագումներու իբրեւ արդիւնք: Միջազգային տարողութեամբ աստուածաբանական, իմաստասիրական եւ մշակութային օրումի մը մէջ կը պտուտինք այս հինգ-վեց օրերուն, ամէն դարձումաժքի եւ անկիւնի վրայ հանելի նոր լոյսի մը հանդիպելով, նոր գիւտի մը առջեւ գէժ յանդիման դռնուելով: Օքսֆորտի համալսարանը բազմապատկուած է, ընդարձակուած՝ միտքի նոր ու լայն ալիքներով: Իմացական հունձքի անշափելի եւ հսկայադէզ կալ մը կարծես, ուր իրենց խաչքուռներն են բերեր մտաւորական գիտական մշակութեան այս բանուորները եւ զանոնք իրարու ընծայելով՝ միասնաբար իբրեւ համախումբ եւ համախորժ խաչքուռ կ'ընծայեն մարդկութեան միտքի խորանին:

Այս բոլորը վայելք են, անտարակոյս, բառին ամբողջական իմաստով՝ իմացական հրճուանքի աղբիւր, հոգեկան եւ մտաւոր ճանաչման անպուգական ապրում: Կը զգամ, որ այս օրերը տարի կ'արժեն ինծի համար: Բայց վայելքս անխառն ըմբոյնում չէ: Կ'որոնեմ, կը սպասեմ, որ այս ամբողջ համագումարին մէջ, բազմազգի եւ բազմալեզուեան այս ճոխութեան մէջ, լսուի նաեւ ձայնը իմ ժողովուրդին եւ իր լեզուն, իր մշակոյթին ժառանգութեան, իր եկեղեցական Հայրերու ստեղծագործական նուաճումներուն: Ո՛ր է Հայաստանի շունչը այս համաշխարհացած քաղաքին եւ միջազգայնացած մթնոլորտին մէջ: Հազիւ տեղ-տեղ, կցկտուր, ակնթարթային, կողմնակի ակնարկութիւններ հայ մատենագրական դանձարանին: «Գիրք քղթոց»էն առնուած եւ լատիներէնի թարգմանուած կարճ հատուածի մը վերլուծումը պիճիգացի անուանի աստուածաբան Շարլ Մէօլլէրի կողմէ մասամբ կը փառատէ նեղութիւնս: Քիչ մը աւելի գոյն կ'առնէ հոգեկան գոհունակութիւնս, երբ եկեղեցական Հայրերու գործերու հրատարակութեան, թարգմանութեան եւ ուսումնասիրութեան յատկացուած Sources Chrétiennes («Քրիստոնէական սկզբնաղբիւրներ») ծաւալուն, բազմահատոր եւ գիտական

մեծ վարկ վայելող շարքին վարելը՝ Հայր Մոնաէզէր իր ընդհանուր զեկոյցին մէջ կը յիշատակէ 2րդ դարու մեծագոյն եկեղեցական հայրերէն Իրենիոսի յունարէն սկզբնադրով կորսուած եւ հայերէն թարգմանութեամբ միայն փրկուած գրքին՝ «Յոյցք առաքելական»-ի ֆրանսերէն նոր թարգմանութիւնն ու հրատարակութիւնը, միանգամայն Նարեկացիի Աղօթամատենի ֆրանսերէն թարգմանութեան պատրաստութիւնն ու մօտայում հրատարակութիւնը:

Սոսկ նշմարներ էին ասոնք սակայն. միութարական ըլլալու չափ իրենց փոքրուած զօրութեամբ հազիւ կրնային մեղմացնել ներքին դժգոհութիւնս իմ հայրերուս արժանի ներկայութեան ցանցառ ու ծանծաղ այդ պատկերին համար միջազգային այդ հրապարակին վրայ եւ մեծահանգէս տեսարանին ու յոյսովազոյն համայնապատկերին մէջ, ուր հայադիտութեան երանդին բացակայութիւնը խոր կը խոցէ սիրտս, երիտասարդի ընդվզումիս տուն տալով: Ո՛ւր են մեր նոր հայազէտները, կը մտածէի, ո՛ւր են Մխիթարեան հայրերը, ո՛ւր են Ս. Էջմիածնի Արշակ Տէր-Միքէլեանները, Գալուստ Տէր-Մկրտչեանները, Կարապետ Տէր-Մկրտչեանները, Երուանդ Տէր-Մինասեանները, Գարեգին Յովսէփեանցները, որոնք եւրոպական, յատկապէս դերմանական դիտական բարձր շրջանակներու մէջ պայծառութեան նոր փայլ կու տային մե՛ր եկեղեցական Հայրերուն, մեր հին մատենագրութեան անհնայեալ էջերուն, ձեռագիրներէն նոր լոյսեր ցայտեցնելով համաշխարհային դիտական-բանասիրական աշխարհին մէջ ու վերականգնելով տեղն ու դիրքը, անունն ու պատիւը, կարեւորութիւնն ու արժէքը հայ դասական մատենագրութեան, թարգմանականին ու ստեղծագործականին հաւասարապէս, մէկ կողմէ աւելի խորացնելով մեր ինքնութեան եւ արժանապատուութեան զգացումն ու նանաչումը եւ, միւս կողմէ՝ նոր նպաստ բերելով միջազգային քրիստոնէական գրականութեան եւ մշակոյթին: Ինչո՞ւ լռե՛ր են այս ժայնիւրը արդի հայադիտութեան ալլապէս այնքան դրական եւ զովելի ճիգերուն մէջ: Հայ եկեղեցւոյ սպասաւորները որքա՞ն տարուած են ժողովրդական ծառայութեան յատուկ անմիջական գործերով՝ իրրեւ պատասխան հրատապ ու անյետաձգելի կարիքներու: Մոռցուե՛ր է բանասիրութիւնը, մոռցուե՛ր է մտքի ճգնութիւնը. մնացե՛ր է ծէսը եւ ընկերային ու ազգային առաքելութեան ուղին:

Մտորումներու այս մտալիկիչ տրամադրութիւններու մէջ եմ կորսուած դեռ, երբ համաժողովի յայտադրին վերայ կը կարդամ, թէ կէս ժամէն տեղի պիտի ունենայ այն

նիւտը, ուր հրատարակչական մեծ տուններ, մասնագիտակոն հրատարակութիւններու պատասխանատու կազմակերպութիւններ հերթով զեկոյց պիտի տան իրենց աշխատանքներուն մասին: Ի՞նչ նորութիւններ կան, որոնք դեռ մամուլին չեն յանձնուած եւ, թոնիրէն նոր ելած հացին պէս՝ առաջին անգամ պիտի մատուցուին այս համազում մարին:

Կը փութամ սրահ: Ինձմէ առաջ շատեր արդէն տեղ գրաւած են: Յայտնապէս ամէնէն հետաքրքրաշարժ նիւտերէն մէկն է այս: Հազիւ տեղ մը կը հարեմ միջին դիրքի: Գրասեղաններուն առջեւ, նոթատետրը ձեռքիս: Մէկ առ մէկ բեմ կը հրաւիրուին ներկայացուցիչները հրատարակչական հիմնարկութեանց եւ կը սկսին թուել, հակիրճ կերպով բացատրել իրենց կատարած հրատարակութիւնները հայրաքանութեան բնագաւառէն ներս:

«Արեւելեան հայրաքանութիւն (Patrologia Orientalis) անունին տակ հռչակ վայելող ֆրանսական հրատարակչական տան ներկայացուցիչը՝ Հայր Ռ. Կրաֆֆէն բեմ կը բարձրանայ եւ կ'ըսէ. «Այս տարի մենք հրատարակութեանց երկար եւ տպաւորիչ ցանկ մը չունինք ձեզի մեր կայացմանի: Միայն երկու հատորներ ենք տպած», եւ ալ ձեռքը օդին մէջ բարձրացնելով ու մեծադիր կարմիր կոդէքով հատոր մը ցոյց տալով, կը յարէ:

«Եզնիկ Կողբացիի գլխաւոր բնագիրը՝ գիտական բազդատական հրատարակութեամբ:

Եւ երկրորդ — ու այս անգամ ձախ ձեռքը օդին մէջ բարձրացնելով եւ նոյն ձեռի ու աւելի թանձր հատոր մը պարզելով, կ'ըսէ:

«Եզնիկ Կողբացիի ֆրանսերէն թարգմանութիւնը՝ Հայր Լուի Մարիէսի կատարմամբ»:

Ապա կ'անցնի բացատրելու գործին բնագրային վերականգնումի գիտական աշխատանքը, կ'ընդգծէ ֆրանսերէն թարգմանութեան աշխատանքի հանգամանքները եւ վեր կ'առնէ անոր արժէքը քրիստոնէական աշխարհայեցողութեան բնորոշութեան տեսակէտէն:

Հազիւ կ'աւարտէ իր զեկուցումը, երբ ծանօթ բարեկամներ՝ դասախօսներ եւ ուսանողներ, իրենց տեղերէն յանկարծ ինձի կը դառնան եւ ուրախութեան ժպիտով մը զիս կ'ողջունեն: Ըսել կ'ուզեն. — ահա, քո՛ւ ալ ազգդ, եւ կեղեցիդ, գրականութիւնը ներկայ են այստեղ. մի՛նակ մի՛ զգար դուն զբեկ:

Եզնիկ փրկեց զիս այդ պահուն. փարատեց դառնութեան, անգոհութեան ներքին տառնապս: Այդ վայրկեանին, դարերու մշտնո խորքերէն լուսնդէն սիւնի պէս վեր սլանալով՝ ահա եկեր էր ան աշխարհի ամէնէն հռչակաւոր գիտական կեդրոններէն մէկուն՝ նոր-Աթէնքեան, նոր-Բիզանդոնեան, նոր-Ալեքսանդրեան, նոր-Անտիոքեան Օքս-

Ֆորտի մէջ ու հեղինակօրէն, ակադեմական բեմին վրայ կանգնած՝ կը դասախօսէր, ծանրախոհ, հանդարտազնայ եւ հանդիսական շեշտով մը։

«Յորժամ գամերեւութիւն եւ գմարին զմշտնջեմաւոր զարութեանէն մարիցէ ոք, քանզի մարմնաւոր լիսալ է, պարտի գմիտս յստակել եւ գիտընդարարել, գյոյզս շարժմանց պարզել, զի յայն գոր առաջի եղ՝ հասանել կարացել։ Նա եւ որ ընդ մառազայթս արեգակամն հայել կամիցի, պարտի բզպատորութիւն աչացն՝ զազուն եւ գրիծն ի բաց պարզել, զի մի՛ մթարմն՝ որ գրբաւմն շոգայցեն, արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին»։

(«Երբ մէկը տներեւութիւն եւ անոր մշտնջեմական գորութեան մասին խօսի, քանի ինք մարմնաւոր էակ է՝ պարտի իր միտքը յստակացնել, մառնումները մաքրել, իր ներքին հոգեխռով ապրումները զտել պարզացնել, որպէսզի անոր, զոր իր հայեցողութեան նպատակակէտ ունի՝ կարենայ հասնիլ։ Նման անոր, որ կը փափաքի արեւի ճառագայթներուն նայիլ՝ պարտի աչքերուն պղտորութիւնը, ազան ու բիծը մաքրել հեռացնել, որպէսզի ազտեղութիւնները, որ բիւրերուն շուրջ առատօրէն կ'երեւին՝ արգելք չլլան լոյսի յստակութեան նայելու»)։

Սրահին մէկ անկիւնին մէջ տառնձնացած կը դիտեմ...

Եզնիկ կը դասախօսէ՝ Օրսֆորտի մէջ...

Եզնիկ կը խօսի...

Հսկայ գլուխներ կ'ունենորեն...

Ներկաներէն շատեր կը մօտենան մասնաւոր սեղաններու վրայ ցուցադրուած հատորներուն եւ ոմանք կանգ կ'առնեն Եզնիկի գոյգ հատորներուն առջեւ եւ կը թղթատեն, կը կարդան, երբեմն իրարու ցոյց կու տան ու կը խօսակցին։

Սիրտս կը յորդի, հոգեկան անձկալից վիճակս իր ողջ էութեամբը փոխուեր է արդէն իր հակառակին. լուսնի մութ կողմը չքացեր է սրտիս մէջ եւ լուսաւոր կողմն է ծագեր եւ կարծես արեւի պէս կը վառի։

Հրճուանքը հոգիիս մէջ ծաղկած՝ դէպի վեր կ'ուղղէ ուլաքը մտքիս, ուր աղօթանման բառեր ձեւ կ'առնեն՝ զգացումներուս եւ խոհերուս լեզու տալով։

— Լո՛յս իջնէ գերեզմանիդ, ո՛վ Լուսն անուն լուսանուն դրիչ, անծանօթ ու համեստ դպիր, որ քու մատենաբով գրեցիր զդասառ աստուածաշունչս՝ Եզնիկի այս գործին։ Օրհնեա՛լ ըլլան մասներդ, ո՛վ ճփցուն եւ ապիկար

գրող», որ համբուրեկի խոնարհութեանդ իբրեւ մեծու-
թիւն՝ աղգիդ եւ աշխարհին բնծայեցիր միակ ձեռագիրը
Եզնիկի փոքրակազմ, բայց մեծիմաստ գործին: Դողդոջ
շարժումովը եղէգիդ՝ ըսիր մեզի. «աղաչեմ գղասս լուսն-
րամից յիշել գրագմամեղ գրողիկս»: Չբլայիբ գուն, չբլ-
լար մա՛նաւանդ եղէգդ թանաքով հոսուն, չբլլային մատ-
ներդ արագագիր եւ դիմացկուն՝ պիտի չբլլար «Եղծ ա-
ղանդոց»ը այսօր, ո՛չ ի հայրենիս, ո՛չ ի Պոլիս կամ ի Վե-
նետիկ, ո՛չ յՕքսֆորտ, ո՛չ ի Սորպոն եւ ոչ ի Միւնիխ կամ
ի Վիեննա եւ ոչ... ի Պուէնոս-Այրէս:

— Լո՛յս իջնէ ձեր գերեզմաններուն, հայոց «երկրորդ
Աթէնք»ի եւ «ամենիմաստից մայրաքաղաք» «հրեշտակա-
բնակ միաստան»ի՝ Գլաճորի եռամեծ վարժապետներ՝
Ներսէս «հռետոր» վարդապետ եւ Եսայի «ամենիմաստ Ֆի-
լիսոֆայ», «ճշմարիտ պատկեր Աստուծոյ» եւ «հոգւոյն
ընդունող», որ ձեր մտքի վայելքին ու վեհաթոիչ ճախ-
րումին համար եւ ձեր աշակերտներուն լուսաւորման ի
խնդիր՝ «պատուէր» տուիք Լուսեր գրչին, որպէսզի Եդ-
նիկի հոգեծնունդ այս փոքրիկ երկը հասնի ձեր ձեռքե-
րուն եւ անցնի ձեռքերուն ձեր աշակերտներուն, գլաճոր-
եան հայ-Օքսֆորտեան սերունդին եւ դառնայ լոյս անմա-
րելի, դառնայ սնունդ անսպառելի:

— Լո՛յս իջնէ ձեր գերեզմաններուն, Չմիւնիոյ ար-
հիւպիսկոպոս եւ առաջնորդ Տէր Աբրահամ աստուածի-
մաստ վարդապետ եւ Յակոբ Նայեան բանիբուն հռետոր,
որ միակ վերապրող այս ձեռագիրը յանձնեցիք տիպին,
«Զի մի՛ անհետացեալ ի սպառ կորիցէ աշխատանք
գերաշնորհ սուրբ վարդապետին Եզնակայ»,

որպէսզի ճբագին լոյսը գրուանին տակ չմնայ, այլ
բարձրացուի իր հարազատ եւ արժանի դիրքին՝ աշտանա-
կին վրայ հայ տպեալ գիրին,

որպէսզի անդտանելի դարձած այս սուրբ գիրքը տա-
բածուի յազգի մերում եւ Եզնիկը չմնայ սոսկ անուն, միայն
համբաւ, այլ դառնայ ղէժք եւ իր լոյսը տարածէ իր ազգի
զաւակներուն ուղեղներուն մէջ:

— Լո՛յս իջնէ գերեզմանիդ, Սիւնեցի տիրացու Յո-
հան, «համեստակենցաղ եւ խոհեմամիտ» որդի հայկայ,
որ «թախանձանօք» խնդրեցիր, որ պատիւ արուի քեզի հո-
գայու «զկէս ծախն ապեցման» այս առաջին հրատարա-
կութեան, ի թուին հայոց ՌՄԺԲ (1763ին) Չմիւնիոյ
մէջ:

— Լո՛յս իջնէ ձեր գերեզմաններուն, Բագրատունի
Հայր Աբսէն եւ Գալէմէրեան Հայր Դրիգորիօ, որ Վե-

նետիկի եւ Վիեննայի հոգեմտաւոր մեղուարոյններուն մէջ հայ մշակոյթի մեղրին խառնեցիք հիւթը եզնիկեան կատարելապէս լեզուին, պայծառ հաւատքին, հայրենասիրական հոգիին եւ անստուշ հայրենասիրութեան:

— Լո՛յս իջնէ՛ ձեր գերեզմաններուն, Աճառեան Հրաչ եւ Տէր Մկրտչեան Գալուստ, որ Ս. Էջմիածնի հաղարատը ձեռագիրներուն մէջէն կրցաք վերագտնել եւ վերստին լոյսին բերել այն մէկ հատիկ ձեռագիրը, որուն եզնիկ կը պարտէր իր յետ մահու երկրաւոր գոյութիւնը եւ որ Իգմիթի հրդեհին զոհ գացած ըլլալ կը կարծուէր(*):

— Լո՛յս իջնէ՛ ձեր գերեզմաններուն, Լը Վալեան տը Յլորիվալ, ձոհանդէս Շմիտ, Սիմոն Ուէպէր, Հայր Լուի Մարիէս, Հայր Ծ. Մերսիէ, որ ապէ՛տ տարիներ առաջ Սորպոնէն սկսեալ մինչեւ Գերմանիա հնչեցուցիք ձայնը եզնիկին, Փրանսերէն եւ գերմաներէն լեզու առիք, գրաբարախօս ոսկեղնիկ մեր մատենագիրն եւ անոր լոյսը բացիք օտար աշխարհներուն եւ այսօր ահա մինչեւ հոս, Օքսֆորտ, ուր եզնիկ կը դասախօսէ, անդշխրիմեան իր ողբողէն ձայնով եւ այսրշխրիմեան իր մէկ հատիկ մատենանով:

Հիմա քեզի՛ կը դառնամ, Այրարատեան աշխարհի Կողբ գիւղի գաւազ, Սահակ-Մեարոպի արժանահոգի աշակերտ, Բիւզանդիոնի մէջ փայլած եւ առաւել եւս ճառագայթուն փայլ ստացած քաջամուտ եւ մեծիմաստ վարդապետ, լսէ՛ ձայն տկար եւ բառերս հեղուժ:

— Փա՛ռք ու պատի՛ւ եղական սնունդիդ, որուն հազցուցիք հանճարիդ գունամաւ քղամիդը: Եղար առ ոտն վարդապետաց քոց եւ մերոց Սահակայ եւ Մեարոպայ, յարեցար անոնց, «մերկացար աշխարհային ապրումներէն, ... հրաժարեցար աշխարհադրօն երկրաւոր զբաղումներէն, եւ առնելով պարծանքի առիթ՝ խաչը, հետեւեցար աշխարհը ապրեցնող իրաշխային... խառնուեցար Քրիստոսի խաչակիր գունդին, մտար միայնակեցութեան կարգին մէջ», հետեւելով Հացեկացի Մաշտոց վարդապետին քայլերուն հեթանոսութեամբ խաւարամտած Գողթնեաց աշխարհի ճգնարաններուն մէջ, անոր տաղնապը բաժնեցիր՝

(*) 1902 թուի շրջիկայ մը՝ Ապրիլ 25, Հիմզաքթի օրն էր, տաքիւն շաքուած խումբ մը ձեռագիրներու մէջէն մէկը քացի պատահաբար. աչքիս հետեւեալ տաքերը կանգնեցան. «Այսպիսի ահաւառ եւ գանդալանաց բանից տիմարաց կարկասեւոյ...» կարնի՞ք էր երեւակայել իմ զգացած ուրախութիւնը. եզնիկն էր, 1111 թիւ ձեռագիրը. ա՛յն՝ որ Միտրանը (Գալուստ Տէր Մկրտչեան) յամենաբարձր էր մայիլը (Աճառեան):

ինքզինքդ ընծայելով կեանքի մեարդակեան՝ ոճին՝ «առանձնակեցութեան, բանջարանաշակութեան, անյուս քարանձաններու եւ խարազնաղգեստ ու գետնատարած անկողիններու... շատ անգամ տանակացութեամբ գիշերուան քույր աչքերէդ թօթափելով» մաղաղաթիւներուն վրայ սրբազան մասեաններուն։

Երջագայեցար գաւառ առ գաւառ աշխարհին Հայաստանեայց, տեսար վարդապետիդ աղիքները գալարելու աստիճան առ աստիճան ժողովուրդիդ, անոր ինքնութեան պահպանութեան սպառնացող ահաւոր վտանգը, օրհասական, ասոր դէմ յամառ պայքարը անոր՝ պարսիկին, ասորիին եւ յունին ազգայնական ազդեցութիւններուն դէմ լուռ ընդվզումով։

Աղօթեցիր ու աքնեցար վարդապետիդ հետ միասին, երբ ան երկրի վրայ Վաղարշապատէն մինչեւ Եդեսիա ու Սամոսատ ու երկնքի աստղերէն հայ գիր կ'որոնէր, ինչպէս մարդ հաց ու անձրեւ կը փնտռէ սովի եւ երաշտութեան լիկիւն ու անձկալից օրերուն։

Երբ հայ գիրն ու հայագրեալ Առակաց գիրքն ի ձեռին, վարդապետիդ թափօրին մէջ, անցար Թաճ գետը եւ վերադարձար հայրենի տուն, Վաղարշապատի մէջ դարձար թարգմանիչ ու ուսուցիչ Հայ նորաստեղծ տառերուն, երբ բացուեցան «դպրոցը հօտին ուսմանց, բազմացան դասը դրչաց ելեւելս առնելով զմիմեամբք», երբ հայօրէն պայծառացաւ պաշտամունքը եկեղեցւոյդ եւ երբ «մեծամեծք եւ աղայք աղմուկով եւ կցորդաւ ասելով՝ շարականներ երգելով կը վարդապառէին հայոց մայրաքաղաքի հրապարակները, փողոցները եւ տունները։

Գացիր Եդեսիա եւ ասորական դպրութեան անդաստաններուն մէջ գտար իմաստութեան մատենաներ, աստուածաշունչ ու մարդամշակ, առիւր, բերիւր ու խառնեցիր ազգիդ միտքին եւ կեանքին մէջ ազգիդ սեփական, իւրաքանչեւ լեզուով։ Հասար կայսերանիստ քաղաքը՝ Բիւզանդիոն, տեսար չքեղ պալատներ, եռուղեք կեանք, հրդեհականուն ուսումնարաններ. ընկերներուդ հետ մտար աւելեմական շրջանակներու մէջ, տէր դարձար միտքի բարձրագոյն արտայայտութեան գործիք՝ յունարէն լեզուին, հաւաքեցիր մատենաներ սրբագիր, մատենաներ ահեղ, մատենաներ խոր. վերծանեցիր, որպէսզի ազգդ անհաղորդ ու աղքատ լմնայ անոնց հրաշագոր ուժէն։ Քաղաքին փայլն ու փառքը այնքան գրաւիչ մեծութեամբ եւ շլացուցիչ փորձութեամբը յուրթի՝ չկրցան գերել մարմինդ ու հոգիդ հայաստանաստեղծ ու հայկաշունչ՝ օծւած հաւատքովը հաւատոյ հօր Ս. Լուսաւորչին եւ անոր արժանընձիւղ շառաւիղ Ս. Սահակին եւ գրոյմուած տառերովը վարդապետիդ՝ Ս. Մեսրոպին։ Ձմեռացիր — կըրնայիր մնալ — Բիւզանդիոն։ Ձյամեցար — կըրնայիր եր-

կա՛ր դեղերիւ — յուսահեղեղ քաղաքին մէջ: Լուսակարօտ հայրենիքիդ «նախանձ»ը՝ սիրոյ ու պատասխանատուութեան այդ հրաշագործ միախառնումը հոգիիդ մէջ «կերաւ քեզ» ու բերաւ յերկիր հայրենի, եւ առ ժողովուրդն սեփական, որպէսզի քաղած ու միտքիդ փեթակին մէջ շտեմարանած մեղուի խորխոր դառնայ համեղաճաշակ բարիք աղգակիցներուդ քիմքերուն վրայ:

Ինքդ՝ այժմ վարդապետ՝ կանգնեցար կողքին հոգեծնող վարդապետներուդ, եղար լծակից եւ ձեռքդ կապած անոնց ձեռքերուն, մանր պինդ բռնած՝ հերկեցիր ու ցանք բրիր ի դաշտն Արարատեան: Ետար վարդապետներուդ կողքին եւ բնկերներուդ շարքի գլխին, եւ Աստուածաշունչ մատենի էջերը յունախօս աշխարհէն փոխադրեցիր հայախօս աշխարհ եւ այն աստե՛ն «երանելի, ցանկալի եւ անպայման սքանչելի» եղաւ աշխարհն հայոց, ինչպէս վկայեց դասակիցդ՝ Կորին:

Անխառն չէր, սակայն, պակուցիչ ուրախութիւնը այդ աշխարհին: Խոռովք կար հոն, տաղնապ, խառնուրդ անհարազատ: Հեթանոսութենէ ժառանգուած հաւատալիքներ, անտո՛ւկապաշտական դադափարներ եւ բարքեր ու սովորութիւններ, յունական փիլիսոփայութիւններէն հաւաքուած եւ քրիստոնէական հաւատքին ու աշխարհայեցողութեան հակադրուող բմբռնումներ, աղանդաւորական շարժումներէ ու մտածողութիւններէ կրուած աղդեցութիւններ՝ հարցականի եւ վտանգի տակ դրած էին ժողովուրդիդ ընդունած քրիստոնէական կրօնի բմբռնողութիւնը Աստուծոյ միակութեան եւ բացարձակութեան, տիեզերքի ստեղծագործութեան աստուածային ձեռակերտն ըլլալու հաւատքին, հոգիի գերակայութեան եւ նիւթի ստորակայութեան եւ այլ հիմնական կեանքի սկզբունքներու մասին: Մարդիկ՝ յոյն փիլիսոփաներ, մանիքէականներ, մարկիոնականներ պղտոր աղբիւրներէ ջուր հոսեցնող աղանդաւորական եւ հերետիկոսական մտածողներ, զրադաշտական խորհողներ Աստուծոյ միակութեան եւ ստեղծագործային բացարձակութեան դէմ միոխոնարական մոլեռանդութեամբ եւ նախանձալուզութեամբ կը տարածէին երկարմատեան վարդապետութիւններ, երկու աստուածներու, բարիի ու չարի հաւասարազօրութեան բմբռնողութիւններ, նիւթի ինքնագոյութեան հասկացողութիւններ: Պարսիկ քաղաքականութիւնը, Զրադաշտի կրօնը գրօշակի վերածած ամպի նման կը թանձրանար ու կը սեւնար հայոց աշխարհի հորիզոնին վրայ՝ հեղեղի նըման գրոհ տալու եւ ճնորափետուր զարդարեալ ազգդ տանելու:

Կը զգայիր անշուշտ, որ այս բոլորը կը ձգտէին արմատախիլ ընել ժողովուրդիդ կեանքէն քրիստոնէական ճշմարտութիւնները, որոնք նոր կերպարանք, նոր դիմա-

գծութիւն, նոր ուժականութիւն տուեր էին ժողովուրդիդ, մա'նականդ նոր կրօնի հայացումի ալդ տենդոտ շրջանին: Պէտք էր պահել ոսկին եւ մաքրել փոշին, պէտք էր խնամել ցորենը եւ դուրս չպրտել որոմը, պէտք էր կենդանի, հարսդատ, անաղարտ ու աննուաճ պահպանել քրիստոնականդ, առաքելափառանդ եւ լուսաւորչահիմն հաւատքը հայուն, առանց որուն ան պիտի վերածուէր տառանդ եղէգի՝ օր մը հակելով գէպի Արեւելք եւ ուրիշ օր մը դէպի Արեւմուտք, մէկ մասը՝ գէպի առօրական կողմ, ուրիշ մաս մը՝ գէպի յունական կողմ:

Զգացիր բնականօրէն, որ աստուածաշնչեալ Գիրիմ մէջ եղող հաւատքը պէտք էր լոյսի եւ ուղիի՝ վերածել ժողովուրդիդ կեանքին մէջ եւ հարթել անոր տեսութենէն «բիժ» ու «միարք»ը, մաքրել անոր ճամբուն վրայ փուշն ու տառասկը, որպէսզի ան քալէր անշեղ աստուածացոյց ճամբաներէն՝ հասնելու համար իր փրկութեան, իր մարդկային եւ ազգային ինքնագործումի հաստատակամ եւ անշրջելի նպատակին:

Զգացիր, անպայման, որ Հայաստան բացաստանին վրայ չորս կողմերէն փչող հովերուն պիտի յաջորդէր մեծ փոթորիկը՝ զրադաշտական հեղեղը, որուն դիմաց իբրեւ բանակ կանգնելէ առաջ — եւ կանգնելու համար — ժողովուրդդ պէտք ունէր զազափարարական գօտեպնդումին, ներքին զօրացումին, հաւատքի ամրապնդումին, անմահութեան յոյսի ծաղկումին:

Եւ ահա ստեղծեցիր միտքի անժանգելի գէնքդ, ժողովուրդիդ կեանքին մէջ որդի նման սպրդած աղանդներու հերքման անդուգական գիրքդ՝ Աստուծոյ, տիեզերքի, մարդու ու կեանքի մասին լուսացոյց մատենադ: Մնունդ տուիր հոգեւորականներու եւ աշխարհիկ ղեկավարներու միտքերուն, որոնք ալիք առ ալիք, զաւառ առ զաւառ բացւեցան ժողովուրդիդ զաւակներուն, որպէսզի անոնք գիտնան, ըմբռնեն եւ հաւատան, թէ՛

— «Անոնց, որոնց հոգիները թուլցած են երկնաւոր առաքինութենէն — հոգեկան արիութենէն — անոնց մարմնեղէն բնութիւնը ահաւոր վախի մատնուած կ'ըլլայ. ա՛մէն հովէ կը շարժի, ամէն բանէ կը խռովի. ամէն բանէ կը զողայ... եւ ան անդառնալի կորուստի կը մատնուի իր մահուան մէջ», թէ՛ «մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է» ինչպէս պիտի ըսէր գրչակից եւ թակից եղբայրդ՝ գիւցազնաշունչ Եղիշէն: Գօտի կապեցիր այն զինուորներուն, որոնք պիտի երթային Աւարայր՝ ճակատելու փիղերով զրահուած ահեղատեսիլ բանակներուն դէմ: Այդ ոգեպինդ գօտին շողացուցիր պարսից ահատեսիլ աչքերուն՝ նամակովն այն յանդուգն եւ վաճանանման, զոր իրրեւ Բաղրեւանդայ եպիսկոպոս զրեցիր Արտաշատի ժողովին մէջ հայուն հաւատքն ու կամքը շե-

փորոզ, որուն բառերը դարձան քայլերդ դէպի մահ եւ մահէն դէպի անմահութիւն. «Ենայմ հաւատոց զմեզ ո՛չ ոք կարէ խախտել, ո՛չ երեշտակ եւ ո՛չ մարդիկ, ո՛չ սուր եւ ո՛չ հուր, ո՛չ քուր, ո՛չ ամենայն զինչ եւ եմ դառն հարաւոր»:

Ազգդ գնաց Աւարայր.

Աւարայրէն՝ դէպի Աւարայր...

Միշտ Աւարայր.

Ե՛ւ Աւարայրեան Հայաստանի,

Ե՛ւ Աւարայրանման սփիւռքի մէջ:

✱

Ո՛ւր մնացիր դու:

Ձեռ գիտեր, ո՛ւր ամփոփուեցաւ քեզմէ մասունք դարձած նիւթեղէն տարրը. Բաղրեւանդի՛ մէջ, Թէ կողբի: Կ'ըսեն՝ Գեղարքունեաց աշխարհին մէջ:

Բայց ի՞նչ փոյթ, Թէ աշխարհէն առածդ աշխարհի ո՛ր անկիւնին մէջ թողուցիր: Աստուծմէ առածդ տուիր ազգիդ եւ ընծայեցիր ողջ մարդկութեան: Այլապէս, այսօր այստեղ, Օքսֆորտի սա բարձր ամպիոնին վրայ, գիտնականներու այս կաճառին առջեւ այսպէս Հայարտ, ինքնաշնչաւ եւ ժամանակէն ու միջոցէն անպարտելի, աննուաճելի ոգեղէն դիմագիծովդ պիտի չդասախօսէիր...: Տե՛ս, Յզնիկ, այս նոր-փիւզանդիոնի մէջ մեծ ազդերու եւ մեծ եկեղեցիներու, գերաՀռչակ Համալսարաններու եւ բարձրահամբաւ դիտական ամպիոններու մարդիկ ինչպէ՞ս դարձեր են ունկնդիր կողբի աննշան գիւղի զաւակիդ:

Ո՛չ այսօր միայն. վա՛ղն ալ պիտի դասախօսես այստեղ. պիտի դասախօսես այլուրեք. պիտի խօսիս յազազս Աստուծոյ, յազազս արարչութեան, պիտի խօսիս Հոգիի եւ նիւթի (Հիւլէի) մասին, պիտի խօսիս մարդու ինքնիշխան կամքին, ազատութեան, բարիի ու չարի, ընտելեան ու անոր աստուածաստեղծ բիւրեղութեան մասին, պիտի հերքես ճշմարտութեան դէմ իօսողները, աւելորդապաշտական, սնոտի, յերիւրածոյ առասպելներն ու ժողովուրդին դիւրընկալութեան մէջ տեղ գտած սին Հաւատալիքները, եւ պայծառ իմացականութեամբդ, յստակատես Հայեցողութեամբդ, կուռ ու կառուցող տրամաբանութեամբդ պիտի ապացուցես, Թէ «զուր է ընդդէմ խթանի աջացել», ճշմարտութեան դէմ վարագոյր իջնել եւ զրիստոնէական Հաւատքին դիմաց փռչի ցանել ու մշուշ տարածել:

Պիտի խօսիս միշտ, որովհետեւ խօսեցար զիրո՛վ զայն լեցնելով միտքիդ ճառագայթներով, որոնք արեւմուտք չունին, այլ կը շողան «յարեւելից յարեւմուտս, ի Հիւսիսոյ եւ ի Հարաւոյ...»:

**

Նիստը շատոնց փակուած է, մարդերն ալ հեռացած՝
 արահէն: Եղնիկի հետ մինակ եմ հիմա: Երկու հայեր տաս-
 նըհինգ դարերու անջրպետին երկու շրթունքներէն իրա-
 րու հանդիպող, բայց այնպէս՝ ինչպէս աղքատ Ղազարոսն
 ու արդար Արբաշամը...

Դո՛ւն՝ լոյս անտուեր, մութուլոյս ստուերիս դիմաց.
 Դո՛ւն՝ միտք անպարագիծ, սահմանաւոր ու սաղմնաւոր

~ ուղեղիս դիմաց.
 Դո՛ւն՝ ամենիմաստ պատգամախօս, լեզուին բացուող
 թոթովիս դիմաց.

Դո՛ւն՝ երկինք կապոյտ, աստեղազարդ. ես՝ հողեղէն
 անօթ անզարդ.

Դո՛ւն՝ ծով անծայրածիր եւ անհուն. ես՝ դեռ անուակ
 հողաքեռ եւ անծուփ.

Դո՛ւն՝ ծառ փարթամասաղարթ. ես՝ ծիլ նորատունկ
 եւ անսաղարթ.

Դո՛ւն՝ լեռ բարձրահայեաց ու երկնահամբոյր.
 ես՝ տափաստան լերկ գետնասոյր:

Դո՛ւն՝ դաստառու դերաթուր.
 ես՝ դասընկալ որոնիչ:

Թօսէ՛ Եղնիկ. խօսէ՛ այնպէս, որ հո՛ն՝ ուր ձայնդ լըս-
 էի, Աստուած ձայնիդ արձագանդէ. հո՛ն՝ ուր խօսքդ հաս-
 նի, հայութիւնն այնտեղ հնչէ. հո՛ն՝ ուր դիրդ հասնի,
 հոն հայաստանի քարտէսը գծուի...

Թօսէ՛ այնպէս միշտ եւ պայծառ.

Որպէսզի՝

Այս օտար աշխարհի հաղարակօս անդաստանին մէջ
 զգամ, թէ ես ալ ածու մը ունիմ, հայո՛ւ ածու, ես ալ ա-
 նուն ունիմ, հայո՛ւ անուն, ես ալ հայրենիք ունիմ, Հա-
 յաստան անուն:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Գրականագիտությունը, ինչպէս որեւէ գիտութիւն, իւրաքանչիւր անկէնսագարձի պարտաւոր է ետ նայիլ եւ զննել իր կտրած ուղին, որպէսզի ո՛չ միայն հինն հետ ունեցած նոր հանդրուանին առնչութիւնը գտնէ, այլեւ անոր լոյսին տակ նոր խնդիրներ կարենայ լուարանել: Գիտական միտքին համար առիկա անհրաժեշտ է, որովհետեւ որեւէ ճիշդի գարգացում ներքին միասնութիւն մը եւ յաջորդականութիւն մը ունի: Այս երկուսիցը ոչ մէկ ձեւով կը խառնուէ նոր, մինչ այդ անծանօթ սկզբունքներու ճշդումը, ընդհակառակն, կը նպաստէ անոնց բանաձեւումին եւ ամբողջականութեան:

Իրեւ այդպիսին, գրականագիտութիւնը նոյնպէս ետ նայելու եւ գրականութեան հոլովոյթին հետեւելու պարտադրանքին տակ կը զսնուի, որպէսզի անոր գարգացումը հեղատաւ ընթացք մը առնէ:

Այս նիւթը արժարժելով, Եդուարդ Զրբաշեան, «Լրաբեր» ամսագրի Նոյեմբեր 1980ի թիւին մէջ ստորագրած է «Գրականութեան զիտական ուսումնասիրութեան ուղիներում» խորագրով յոդւած մը:

Իր յօդուածին մէջ, Զրբաշեան կը կատարէ գրականագիտութեան հարցերուն սպառիչ ուսումնասիրութիւնը: Գրականագիտութեան պահպան երեսներէն ան յատկապէս կանգ կ'առնէ գրականագիտական միտքի գարգացումին, հայ հին եւ միջնադարեան գրականութեան պատմութեան, հայ նորագոյն գրականութեան պատմութեան, մենագրութիւններու, գրականութեան տեսութեան, գրական քննադատութեան եւ հայ գիրքի տարածման հարցերուն վրայ:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ

Զրբաշեանի համաձայն, յատկապէս երկու ազդակներ գործն դեր կը խաղան գրականագիտական միտքի գարգացման վրայ: Մէկ կողմէ հասարակական կեանքի եւ գաղափարաբանութեան ազդեցութիւնները, միւս կողմէ՝ զեղարուեստական հոլովոյթի վիճակն ու պահանջները: Հասարակական գիտակցութեան որոշ մակարդակի մը վրայ ձեւաւորուելով, գրականագիտութիւնը կը դառնայ այդ գիտակցութեան անբաժան մասը եւ անոր հասունութեան մակարդակին ցուցանիշը: Այս առումով (նայած թէ գրականագիտութիւնը իրեն հասարակական գիտակցութիւն ի՞նչ մակարդակի վրայ կը գտնուի), երբ գասական եւ Ժամանակակից գրականութեան ուսումնասիրութեան եւ քննադատման կը լծուի, կը դառնայ զեղարուեստական յոռադիմութեան կամ յետադիմութեան կտրուոր ազդակներէն մէկը:

Պորհրդային կարգերու հաստատումէն առաջ, Հայաստանի մէջ ընթացիկ եւ հին գրականութեան վերլուծման, գրնահատման եւ պատմութեան հարուստ փորձառութիւն ամբարուած էր: Սակայն, Պորհրդային կարգերուն հետ, գրականագիտական աշխատանքներուն մէջ արժատական վերափոխութիւններ տեղի ունեցան, արժէքներու վերագնահատման ճամբով: Առաջնակարգ կարեւորութիւն ստացան, օրինակ, գրականութեան գաղափարական բովանդակութիւնը, գաստկարգային պայքարը, եւայլն: 20-30ական թուականներուն այս ուղղութիւնը ծայրայեղութիւններու զնաց, մինչեւ որ բանիմաց մարդիկ այս արժէքաբանութիւնը «գոհհիկ ընկերաբանութիւն» անուանեցին եւ անոր առաջըր տունելու միջոցներուն մասին մտածեցին:

Գաղանիք չէ, որ այդ ժամանակաշրջանին ազգային-ազատագրական շարժումին գեղարուեստական արտացոլումները մերժուեցան (Ալիշան, Բաֆֆի, Սիմանթո), իսկ միջնադարեան գրականության կոթողներուն հրատարակութիւնը արգիւտեցաւ, իբրեւ ճանցեալի խաչալականացում: Բայց նաեւ, երբ հակառակ հոսանքը առեղծուեցաւ, դարձեալ ճշգրտեցաւ ծայրայեղութեան գացող ընթացքը: 50ական թուականներուն, 19րդ եւ 20րդ դարու հեղինակներէն շատեր արժանացան ծայրայեղ գնահատականներու: Բարեբախտաբար նման սխալները երկարատեւ կեանք չեն ունեցած եւ հաւատարակչութիւնը վերահաստատուած է: Ամէն պարագայի, Խորհրդային կարգերու հաստատումէն ի վեր որդեգրուած սկզբունք մը տակաւին ի զօրաւ կը մնայ: Գրականութեան պատմութիւնը եւ ժամանակակից գրական հոլովոյթը ընկերային կեանքի իրաւիքներին կապելու սկզբունքն է անիկա:

ՀԱՅ ՀԻՆ ԵՒ ՄԻՋՆԱՒԱՐԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձրաշէանի համաձայն, հայ հին եւ միջնադարեան գրականութեան պատմութիւնը գրեթէ ամբողջութեամբ կը կապուի Մանուկ Աբեղեանի անուան: Անոր «Հայոց հին գրականութեան պատմութիւն» երկհատոր գործը կ'ընդգրկէ սկիզբէն մինչեւ 15րդ դարը: Իր արժանիքներուն բերումով, այս գործը կը համարուի հայագիտութեան դասական գործերէն մէկը:

Անոր գործին գրական-պատմական հարաւորութիւնը, պատմութեան պարբերացումին եւ իմաստասրման կայուն բուկըղունքները, հոն երեւցող վերլուծական եւ զգաստ միտքը պատմաւորական են, որ բացայայտուին հին եւ միջնադարեան գրականութեան զարգացման կարգ մը առանձնաշարժութիւններն ու օրինաւորութիւնները: Աբեղեան յայտնագործած եւ հիմնաւորած է հայ ժողովրդական վէպի զարգացման հիմնական հանգրուանները, մեր հին մատենագրու-

թիւնը բնորոշած է իբրեւ «եկեղեցա-գաղափարն մաքառման գրականութիւն» եւ կատարած է միջնադարեան բանաստեղծութեան եւ առակագրութեան մէջ հայկական վերածնունդի, ինչպէս նաեւ ընկերային յարաբերութիւններու բացայայտումը:

Մանուկ Աբեղեանէն ետք, հին եւ միջնադարեան գրականութեան կարգ մը մարդեր, որոնք մինչ այդ չէին բացայայտուած, ճանարկուեցան նաեւ տարբեր դէմքերու կողմէ: Լուսարձակի տակ առնուեցան, օրինակ, միջնադարեան հեղինակներու գեղարուեստական մասնորոնութիւնը, իրականութեան ընկալման եւ մարդու պատկերացման առանձնաշարժութեան հարցերը, գրական ժամկետը ազգային իւրայատուկ կերպ առանալու հանգամանքները, եւայլն:

ՀԱՅ ՆՈՐԱՅՈՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մինչեւ Խորհրդային կարգերու հաստատումը, 19րդ եւ 20րդ դարու հայ գրականութիւնը էպպէս կը տարբերէր հին եւ միջնադարեան գրականութենէն եւ դարձած էր զարաշրջանին նոր պայմաններուն մէջ առեղծուած ազգային ոգիին զարթոնքին հարապատ արտացոլացումը:

Երբ 1930ական թուականներուն, յիշեալ ժամանակաշրջանի գրական պատմութեան պարբերացումին եւ շարադրումին ձեռնարկուեցաւ, գրողին արժեւորման վճռական շափանիչը կը նկատուէր «յն» թէ գրողը որքան ժողովրդային է: Ուրիշ խօսքով՝ հարցին կը մօտեցուէր «գրեհիկ ընկերարանութեան» դիրքերէն:

Ծուռով ի յայտ եկաւ սակայն, որ գիտական սխալ սկզբունքներ կ'որոշողը չէին: Այդ տուեալներով, ազգային գրականութեան ամբողջ պատմութիւնը ընկերային կեանքին շուրջ օրէնքներու կ'ենթարկուէր: Ուստի գրողէն պարտին անմիջապէս կը տրուէր քաղաքական եւ ընկերային երանգ մը, որուն արտացոլումը, իբր, կը դառնար ան: Խաչատուր Աբովեան, օրինակ, կը յորջորջուէր «բուրժուական հոսանք»ի ներկայացուցիչ,

իսկ Միջոյնէլ նախապատեան՝ ձեռք բերած Ժուական յիշափոխական հոսանքի: Սակայն, ինչպէս ըսուեցաւ, գրականագիտական միտքը շուտով յաղթահարեց այս մտացածին շրջանակներու դրութիւնը:

Հայաստանի գիտութիւնների Եղեղեմիայի գրականութեան հիմնադիր լայն ընծայած գործերը հանդիսացան այս ուղղութենէն ձեռքադատուելու լուսադոյն գրականները: 1940ական թուականներէն սկսեալ լայն տեսած Աբեղեանի «Հայաց» հին գրականութեան պատմութիւնը, հաւաքական աշխատանքով պատրաստուած Հնդաստրեայ «Հայ և Եր» գրականութեան պատմութիւնը, ինչպէս նաև նոյն ձեռքով պատրաստուած Երկհատոր «Սովետական գրականութեան պատմութիւնը» կարելի է համարել գրականագիտութեանը գիտական հիմքերու վրայ դնելու լուրջ առաջնութեան ժր:

«Սովետական գրականութեան պատմութիւնը», օրինակ, որուն աշխատանքները 1965ին աւարտեցան, կը նշէր վերջին քառասուն տարիներու գրականութեան զարգացման հանգրուանները եւ կը վերաբերէր գրական մթնոլորտէն արհեստականօրէն հեռացուած տնտեսներ, ինչպէս Ջարեկ, Բակուր, Թոթովեց, Մահարի, Եսայեան, Եւայն: Առանց այս անուններուն, խորհրդահայ գրականութեան պատկերը ո՛չ միայն ամբողջական չէր, այլև հասկնալի չէր խեղաթիւրուէր:

«Հայ և Եր» գրականութեան պատմութիւնը՝ Հնդաստրեայ գործը, իր կարգին, աւարտեցաւ 1979ին: Անոր գլխաւոր յատկանիշը ա՛յն է՝ որ հայ գրականութիւնը, իր արեւելահայ եւ արեւմտահայ ճիւղերով, մէկ ամբողջութիւն կը ներկայացուի: Գրական-պատմական հոյովոյթին մէջ անոնք չեն առանձնացուիր, այլ կը վերլուծուին իբրեւ զուգահեռ հոյովոյթներ:

ՄԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջին երկու-երեք տասնամեակներուն, մեծ զարկ տրուեցաւ գասական գործերու ժառանգութեան մենագրական ուսումնասիրութեան: Երբեմն միեւնոյն

հեղինակը տարբեր մենագրողներու գնահատանքին արժանացաւ եւ այդ ձեւով ստեղծուեցաւ անոնց ժառանգութիւնը տարբեր տեսանկիւններէ դիտելու հնարաւորութիւնը:

Ջրաշնանի համաձայն, գիտութեան զարգացման ժամանակակից պահանջները յաճախ կը թելադրեն, որ կարեւորութիւն տրուի գրողի կեանքին եւ ստեղծագործութեան օրինալուծութեան շարադրանքին: Ասիկա պատճառ կը դառնայ, որ տուեալ հեղինակին նուիրուած մենագրութիւնէն մեկնելով՝ կարելի ըլլայ անցնել անոր ժառանգութեան առանձին խնդիրներուն խոր քննութեան:

Կարելի է այս իրողութեան վերաբերել խոր քննութեան արժանացած եւ մենագրութիւններու ընկերակցութեամբ հրատարակուած բազմաթիւ հեղինակներու ճամբողջական գործերուն հանդէս դալը: Այս բախտը ունեցան Վ. Տէրեանէն սկսեալ մինչեւ Ջարեկ, Մեծարեկ եւ ուրիշներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գրականագիտութեան մասին խօսելու առին, կարելի չէ չընենք գրականութեան տեսութեան այս շատ կարեւոր հարցը: Գրականութեան տեսութեան հում նիւթ կը ծառայեն գրական ժանրերը, գրականահներու, ոճերու, գրականութեան մէջ մարդը պատկերացնելու եղանակի, զեղարուեստական գրականութեան կառոյցի, տաղաչափութեան եւ, մեր պարագային, հայկական ոտանաւորի իւրայատկութեան հարցերը:

Այստեղէն մեկնելով, կարելի է, օրինակ, ճշգրիտ ազգային գրականութիւններու պատմահամեմատական եւ տիպարորանական հետազոտութեան ձեւերը: Գրական եւ զեղարուեստական գիտակցութեան ընդհանուր օրինալուծութիւններուն հետեւելով, կը բացայայտուին զգրական ստեղծագործութեան ազգային իւրայատկութեան եւ ստեղծագործական անհատականութեան անկրկնելի դիմերը:

Ակնյայտ է, որ տարբեր զարաշըրջաններուն գրական երկերու ընկալման

եղանակները կապուած են զեղադիտական բմբռնումներու, հոգեբանութեան, բնկերային յարաբերութիւններու եւ շրջանի տիրող զաղափարախոսութեան կամ իմաստասիրութեան: Հին, միջնադարեան թէ նորագոյն գրականութեան ուսումնասիրութեան մէջ, ուրեմն, պէտք է որդեգրուին գրականագիտական այս սկզբունքները, որպէսզի ուսումնասիրութիւնը միակողմանի չըլլայ: Միաժամանակ, պէտք չէ սակայն ժխտել այս սկզբունքներուն հետեւիլ, այլ պէտք է նկատել առնել նաեւ հետազոտութեան աւանդական եղանակները: Պէտք է, ուրեմն, Զրբաշեանի համաձայն, խելացիօրէն դուրսբերել հետազոտութեան «աւանդական» եւ «նոր» եղանակները, որպէսզի բարեխառնում մը տուջանայ եւ միակողմանիութենէ խուսափինք:

Այս ուղղութեամբ, Հայաստանի մէջ արդէն բազմաթիւ գործեր լոյս տեսած են: Անոնցմէ են «Գրական ժամեր» պատմական զարգացումը եւ ժամանակակից վիճակը» (1973), «Աւանդոյթները եւ գեղարուեստական զարգացումը» (1976), «Տաղաշարութեան պարզիմներ» (1976) եւ «Ուղեւորական գրականութեան պոետիկան» (1980):

ԳՐԱԿԱՆ ՓՆՆԱՎԱՏՈՒԹԻՒՆ

Զրբաշեանի համաձայն, հակառակ գրականութեան տեսութեան մէջ վերջին 60 տարիներուն արձանագրուած բոլոր շնորհաբերուն եւ մոլորութիւններուն, հայ գրական քննադատութիւնը եղած է գրական զարգացման հաւատարիմ հայելի: 30ական թուականներու սայթաքումներուն վրայ բարեբար ազդեցութիւն գործեցին աւագ սերունդի քննադատներուն զիրքորոշումները, որոնք ճշգրիտ նոր գրականութեան մը զաղափարական եւ գեղարուեստական ուղղութիւնը, դասական ժառանգութեան նախաճաշակը արթնցնելով այդ ժամանակաշրջանի նոր սերունդին մէջ:

Բ. Աշխարհամարտէն ետք առաւել եւս բարձրացաւ գրական քննադատութեան ներդրած ուժը եւ մասնագիտական մակարդակը:

ՀԱՅ ԳԻՐՔԻ ՏԱՐԱՅՄԱՆ ՀԱՐՑԸ

Տրուած ըլլալով, որ գրականութիւնը իր բնոյթով մարդասիրական գործառնութիւն մըն է, ժողովուրդներու հոգեւոր մերձեցման եւ մշակութային արժէքներու փոխանակման այժմու հանդիսանին՝ կարեւոր էր թուի հայ գրականութեան յայն տարածման եւ ծանուցողական արշաւին խնդիրը: Այս ուղղութեամբ, Զրբաշեանի հաւատարկէ, որ ուսուսերէն եւ այլ լեզուներով հայ գրականութեան բազմահատոր գործեր լոյս տեսնեն, որպէսզի հայ ժողովուրդի ստեղծած գրական արժէքները «համաշխարհային գրականութեան պատճէնին» մէջ գիտնուէին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Իրեն եղբայրացութիւն, Զրբաշեանի մասնաճիւղ, որ հայ գրականագիտութեան հետազոյցարկացման համար անհրաժեշտ է կատարել անցնալի եւ արդի գրականութեան աւելի խոր եւ հանդամանաւոր ուսումնասիրութիւնը: Բայց, միւս կողմէ, յիշատակներուն նոր կողմերէ եւ նոր հայեցակէտով մտաւնայու հրաշարաւորութիւնները պէտք չէ խաչաձեւէն դիտար: «Եւ գրական-պատմական հետազոտութեան, եւ տեսական ընդհանրացումների եւ թէ ժամանակակից գրական պրագմատիկ վերլուծութեան ընթացքում կարեւորագոյն խնդիրներին մէջ մնալ է գրականութեան զաղափարական եւ գեղագիտական յատկանշներն իրենց բնական միասնութեան մէջ բացայայտելը», կը գրէ աւ: Միաժամանակ յիշեցընելով, որ գրականագիտութիւնը, իր հետազոտութեան առարկայով եւ մարդասիրական բնոյթով, չի կրնար եւ պէտք չէ ըլլայ սոսկ մասնագիտական եւ նեղ շրջանակներու սեփականութիւնը, այլ, առանց իրենցելու հարցադրումներուն լրջութեան եւ խորութեան մակարդակը, կարենայ անիկա ընթերցող լայն հաստեղծներուն լսելի դարձնել իր խօսքը:

Ն. Գ.

«ՕՆԻՐԱՆԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ
ՀԱՅՅՈՒ ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարելի էր խիստ թերահաւատ լինել դէպի հայ յեղափոխական կուսակցութիւնների մատնանշած ձգտումները, որոնք յամենայնդէպս մարդկանց մի խմբակի ձգտումներ են եւ համարել այդ ծրագիրները լուրջ ուշադրութեան չարժանի քիմերաներ, եթէ հայ յեղափոխական կուսակցութիւնները բաղկացած լինէին բացառապէս ոչինչ արժեքող, տխուր երիտասարդներից, բայց այդ կուսակցութիւնները իրանց շարքերում ունեցել են Եւրոպայի, Թուրքիայի եւ Ռուսաստանի հայ մամուլի համարեա՛ր բոլոր ներկայացուցիչներին, ունեցել են եւ ունեն ներկայ օրերին իրանց կոմիտէները (Լոնդոնում, Փարիզում, Փրնեսում, Կ. Պոլսում, յաջողել են իրանց համար նպաստաւոր մտքով ազդել նոյնիսկ այնպիսի պետական գործչի վրայ, սրպիսին Գլադստոնն (48) է, որը բացայայտ հրապարակ եկաւ պաշտպանելու Թուրք կոռուփարութեան կողմից իբրեւ թէ հարստահարուած հայերի շահերը: Եթէ այդ կուսակցութիւնները այնքան հարուստ եւ հզօր չլինէին, ապա նոյնիսկ հակառակ նրանց անդամների ոմանց անբարեխղճութեան, չէին կարող կազմակերպել բազմամարդ զինուած հրոսակախմբեր, Թուրք մի քանիսը մինչեւ 1000 հոգի (49), չէին յաջողիլ նրանց ապստամբութեան տեղը հասցնել՝ յնա՛յտ ռուս կոռուփարութեան ձեռք առած միջոցների ու հակողութեան: Այդ կուսակցութիւնների շարքերում գտնուում են բանկիրներ եւ շատ ունեւոր ու տարիքով ինքնուրոյն մարդիկ, իսկ Գլադստոնին ներկայացրած ղեկավարին ստորագրել են նաեւ ռուսահայեր, ինչպէս այդ տեսնուում է Թիֆլիսի օտտիկանապետի հաղորդագրութիւնից, որ պահուում է Վարչութեանս 1895 թ. գործերում:

Կարելի է վստահութեամբ ասել, որ հայ յեղափոխականների Թուրքաց Հայաստանում սկսած անյաջողութիւնը (50) ստեղծել է դէպի նրանց հայ կապիտալիստներից շատերի առատաձեռնութիւնը, այն ինչ կոմիտէները միջոցների կարիք էին զգում, թէ՛ յեղափոխական գործը շարունակելու եւ թէ իրանց գոյութիւնը պաշտպանելու համար:

Եւ ահա 1895 թ. Թիֆլիսում սկսուում է չվճարող հարուստ հայերի ահշնայտնի ահաբեկումն (51): Վարչութիւնս, ոստիկանութիւնն ու դատական իշխանութիւնը Նշում են ինչ որ անձանց կողմից տեղացող ո՛չ միայն մի շարք մահուան սպառնալիքով դրամապահանջներ հարուստ հայերին, այլեւ մեծամասն դէպքում վիրաւորումներ ու սպանութիւններ, ինչպէս վիրաւորուեցին Թիֆլիսում Զաքար Աբովեան եւ Պետրոս Մակարեան վաճառականները 1895 թ. Դեկտեմբերին եւ Թիֆլիսի բանուկ փողոցում սպանուեց վաճառական Ստեփան Գէորգեանը (52), երեք ինչ-որ հայերի ձեռքով, որոնցից մէկը ձեր-

բազմազան է հասկանալիության կողմից, երբ դրամաշրջանի անհատական համար երկրորդ անգամ այցելում է վաճառական թուղթերին:

Նախնական քննությունը պարզում է, որ դրամաշրջանները դիմել են ո՛չ միայն Ձաքար Արտվանին, այլև՝ նրա հղթար Բաղդասարին, պահանջելով պիտանքային յեղափոխական դրոշմ համար 5000 ռուբլի: Քննությունն առաջարկում այդ նամակներին դրոշմած է Հնչակեան Յեղ. Կուսակցության կնիքը, որ ներկայացնում է խաչածեղած դաշոյն եւ ասորեանակ հետեւեալ մակագրութեամբ. — Հնչակեան Կուսակցութիւն, Կովկասի Հնչակեան Մասնահանգ: Արտվանի ասացած նամակին կցուած է Հնչակեաններէ հայերէն կոչւող, որ դիմում է Հարուստ հայերին՝ օգնելու Թուրքիայի արկածեալ եղբայրներին եւ վերջանում է «Մահ կամ Ազատութիւն» բացականչութեամբ: Գէորգեանի պաշտոնը, որ ձերբակալուեց, նոյն յանգուզն դրամապահանջով դիմել էր եւ տեղական ճոտար Մամիկոնեանին: Սկզբում նա իրան անուանում էր Հայաստանի Վան քաղաքի բնակիչ թիւրքապատակ Գաթիւտանեանց: Այդպիսի նամակներ ու կոչեր ասացել են շատ ունեւոր հայեր, օրինակ, տիկ. Աթարեկեանը, բայց քանի որ նրանք կատարելապէս անարեւելած էին՝ չբացատրեցին, թէ հասուցե՞լ են իրանցից պահանջուող դրամեւորը: Բայց պէտք է նշանակել, թէ հասուցել են, քանի որ պահանջ ասանալով՝ չեն ենթարկուել բռնութեան:

1896 թ. Փետրուարի 6ին ձերբակալուած է դրամաշրջաններից մէկը եւս, որ բացայայտօրէն ու յանդգնօրէն ինքններ Եւրալեանից պահանջում էր 1000 ռուբլի: Կայ եւրալեանին ներկայացրած նամակի պատճէնը: Միտմամանակ 1896 թ. սկզբին վարչութիւնն տեղեկութիւններ է ստանում Եւրուսեց, թէ տեղական հարկեր դիմում են, յուզումնային լուրեր են գալիս Բաքուից, թէ հայերը պատրաստուած են պայթեցնել վառօդի պահեստը եւ փաստօրէն Փետրուարի 9ին անյայտ մարդիկ մէ քանի զնդակ են արձակում Նաւասորի վառօդայանատի պահակի վրայ: Թիֆլիսում էլ լուրեր տարածուեցին, թէ Մկրտումիւն Հանդէսին պիտի պայթեցնուի Յորդանանի կամուրջը եւ հասարակութիւնը խիստ շփոթուած էր: Փետրուարի 8ին ձերբակալուեց Ալեքսանդրապոլի բնակիչ Սիւրանեանցի զէմ մահափորձ կատարող՝ իրան սկզբում պարսկապատակ անուանող Յովհաննիսեանը, որ պարզուեց, թէ Վարչութեան յայտնի հայ յեղափոխական Մարկոս Մարգահանն է: Մարտին նոր դրամպահանջ եղաւ վաճառական Ալիխանեանից, ըստ որում պարզուեց, թէ մեղաւորը տեղական վաճառական Խանդանեանն է, որը դրանից առաջ ձերբակալուած դրամաշրջանների բնկերակիցն էր:

1896 թ. Ապրիլին № 36 դրութեամբ Ղազարի(53) դատապետը հաղորդում է Գանձակի նահանգապետին, թէ Գարվանսարտ գիւղում հայերի զաղտնի ժողովներ են տեղի ունենում դատաւոր Մելիքեթիանի մօտ, որը ուր որ զէնքեր է փոխադրում: 1896 թ. Հոկտեմբերին № 8508 դրութեամբ Ստեփանուսեան Դեպարտամենտը նորից մատնանում էր վարչութեան հայ յեղափոխականների յարատեւող դործունէութեան մասին Պարսկաստանում եւ նրանց բռն յարաբերութիւնները Թիֆլիսում բնակուող հասարակ խանութպան Ներսէս Գրիգորեանցի(54) հետ, իսկ Հոկտեմբերի 17ին № 8930 դրութեամբ հաղորդում է, թէ Թիֆլիս են հասել յիշեալ Գրիգորեանցի ծանօթներ Լեւոն Յովհաննիսեան եւ Լեւոն Տէր-Սարգսեան, նպատակ ունենալով տեղական հայ յեղափոխական խմբակները ժխցնել Ամերիկայի նոյնպէս հայ յեղափոխական Անդակոյիսան(55) խմբակցութեան: Նոյեմբերի 19ին № 10037 դրութեամբ Դեպարտամենտը տեղեկացնում է, թէ Բաքուում երեւացել է նոյն

Գրիգորեանցի հետ թիֆլիսում կապ պահպանող հայ ազիտատոր Գաբրիել Բաղինեանցը(56) (հաւանորէն Բաղէշեանց — Դ. Ա.):

Այդ թուականին վարչութիւնս փաստօրէն նշել է հայկական շարժում 1035 յօդուածի կարգով հարցաքննութիւն յարուցանելով Մկրտիչ Սարգսեանի, Արամեմ Նազիրեանի(57) եւ միւսներէ մասին, մեղադրելով նրանց պատժադրքի 320րդ յօդով: Վարչութեանս մէջ պահպանուած գրութիւնից երեւում է, որ միաժամանակ հարցաքննութիւն է քայցուել եւ Երեւանում մերթապալուած Սարգսեանցի, Յովհաննիսեանի, Սարգսեանի եւ Յարութիւնեանի մասին, որոնցից առաջինի մօտ գտնուել է յեղափոխական բովանդակութեամբ գրադրութիւն, նշանակուած յանձնելու տեղական երգուհաւ հաստատմամբ Մնացականեանին(58), Թիֆլիսի հնչական մասնաճիւղից վկայական Յովհաննիսեանի անունով, որ լրագործւած է նուիրատուութիւններ ժողովել, պրոպագանդ մղել և խմբեր կազմակերպել, նման մի վկայական եւ Սօսի Գուգարեանցի անունով: Այս գրադրութիւնը հիմք ծառայեց հարցաքննութեան կանչելու նաեւ Մնացականեանին:

Թիւրքայում հայերի ընդհանուր ապստամբութիւն յարուցանելու անյաջող փորձերից յետոյ, որ վերջացաւ հայերի զինուած հրոսակախմբերի կատարեալ ջախջախումով քրդական անկանոն զօրքերի մեղքով եւ ապստամբների ծանր կոտորածով Սասունում եւ չրվակայ հայ գիւղերում — մեր ու պարսկական սահմանները շտապեցին թաքնուելու Եւրոպայի ու Ռուսաստանի հայ յեղափոխական կռիւտէնների զօրծակալները ու հրոսակախմբերի մնացորդները, իսկ որանց յետեւից փախան եւ ջարդից խուսափած թիւրքահայերը: Գովկասի ճաղաքացիական մասի կառավարչապետի զինանոսան տեղեկութիւններով նման փախստականներ Անդրկովկասում, առաւելապէս Կարսի շրջանում, եւ մասամբ Թիֆլիսի, Գանձակի եւ Բաքուի(59) նահանգներում ժողովուրդէն է 80·000 մարդ: Սկզբում այդ փախստականները իրանց ցոյց էին տալիս կատարելապէս քայքայուած, անօգնական եւ կարօտ ուսուսհանքի ժամանակութեան: Իրանց փախստական անուանողները ինքնութիւնը անհնարին էր որոշել որեւէ բանով, եւ եթէ անգամ նրանք մերկացուած էին մի քանի անուն կրելու մէջ, ապա դրան ուղղակի քայքայութիւն էին տալիս, թէ այդ անում են իրանց հեաքերը թիւրքաց կոտորածութեան հնարաւոր պահանջից թաքցնելու նպատակով, քանի որ նրանց ապստամբ էր պատկեր իրեւա ապստամբութեան կարծեցեալ մտանկիցների: Սկսեցին իրանց փախստականներ անուանել եւ այն ուսուսհայերը, որոնք խուսափում էին իշխանութիւններից, եւ դա այն պատճառով, որ փախստականներից անցադիր եւ վաւերադիր չէր պահանջուած: Հայոց մամուլը նրանց ներկայացրեց իրեւ թիւրքական գաղանթութիւնների դուշեր, իսկ նրանց սկզբնական չքուոր կերպարանքը խաբեց եւ տեղական բնակչութեանը:

Հայերը սկսեցին իրանց դիմալ տանել նրանց ապրուստը, աշխատանք, անունդի եւ կեանքի միջոցներ հայթայթել: Գովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը ուժեղացրեց նուիրատուութիւնների ժողովարարութիւնը: Եւ որովհետեւ Անդրկովկասի ղլխաւոր կենտրոնները հանգիստնում են Թիֆլիսն ու Բաքուն եւ այստեղ համախմբուեց փախստականների մեծ քաղմութիւն, ապա եւ այդ քաղաքների հայկական Դուժաները(60) շտապեցին քաղաքային հասարակական գանձարկից օգնութեան դալ նրանց, քաղաքային վարչութեան եւ հասարակական գործերի մէջ պաշտօնի ընդունել, ձրի եւ էժանադին ճաշարաններ կազմակերպել: Եւ եթէ առաջ դժուար էր իմանալ, թէ ի՞նչ նպատակով են ծախուում կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան խո-

չոր ժողովարարութիւնները (պաշտօնական տեղեկագիրով տարին 12,000 ռ. աւելի), ինչպէս եւ հայ զանուցան խմբակներէ միջոցները, — այժմ այս նոր բարեփոխութեան զարգացումով ուղղակի անհնարին էր հսկել, թէ ժողոված միջոցները արեւմտեան իրանց մեղքով կամ անմեղութեամբ վնասուած թիւրքահայ փախստականներին, թէ փոխադրուած են յեղափոխական կոմիտէներին, բայց դատելով այն բանից, որ յանկարծ դադարեց հայ հարուստների աւարեկումը՝ հաւանական պիտի համարել, թէ ժողոված միջոցներէ մի նըշանաւոր մասը գոցելու գնաց արտասահմանի յեղափոխական կոմիտէների պահանջները:

Թէ որքան էր դժուարանում այդ ժամանակ ոստիկանութեան գործունէութիւնը՝ դրան լաւագոյն ասացուց կարող է ծառայել Սարգսեանի, Նադիրեանի եւ միւսների հարցաքննութիւնը, երբ պատասխանատուութեան վանջը 8 ամէկից մերթափառեցին միայն երկուսը:

1897 թ. վերջնայէս յաջողուեց մերթափառել Ռատկանութեան Դեպարտամենտի ցոյց տուած հայկական հռանդու գործակալ Գարեգին Բաշինեանցին (61) (Բաղէշեանց — Դ. Ա.) եւ Մայիսի 13ին պահուողական կարգով նրա մասին դրադրութիւն յարուցուեց, որը ընդգրկեց 20 մարդու, բայց նրանցից չորսը մնացին չզտնուած: Պատասխանատուութեան կանչուածների մեծամասնութիւնը թիւրքա եւ պարսկահայատակներ էին եւ անդամներ նոր ինքնաւորին Արմենական (62) հայ յեղափոխական կուսակցութեան: Այդ գրադրութիւնը հաստատեց արդէն պարզուած այն դրութիւնը, թէ յեղափոխական զաղափարը համակել է հայ Ժողովրդի բոլոր խաւերը, ունեւորին եւ չունենաւորին, սկսած հարուստ վաճառականից մինչեւ շինականը, քաղցնին եւ մասնր խանութպանը, մատուրականութիւնը եւ միանդամայն անկուլտուրական տարրը: Արհեստաւորի կամ գիւղացու կողքին աշխատում էին հայ մամուլի՝ օրգանների խմբագիրներն ու աշխատակիցները, բժիշկներ, երդուեալ հաւատարմատներ, համալսարանական կրթութեամբ անձինք, համարեա՝ ողջ ուսուցչական կազմը: Այդ գրադրութիւնը եթէ չապացուցեց Ամենայն Հայոց կաթողիկոսի (63) դրական մասնակցութիւնը շարժման մէջ, յամենայնդէպս անպայմանօրէն հաստատեց թէ՛ նրա եւ թէ էջմիածնի (64) Մինոգի ողջ կազմի խիստ համակրութիւնը դէպի շարժումը: Եւրոպական մասնակից էր եւ այդ մասին անկեղծօրէն խոստովանեց կաթողիկոսի եղբոր որդի Սորէն Սրբիմեանը, որ պատասխանատուութեան ենթարկուելով՝ մերթափառեց էր Նա կաթողիկոսի թիկնապահ ու հաւատարիմ քարաուղարն էր, ուրեմն եւ մօտ ծանօթ էր էմիածնի գործունէութեան: Իսկ թէ ինչպէս էին աշխատում շարժման մէջ հայ-կաթողիկ Միթիթարեանները (65) — այդ մասին վկայում է «Իսլամէի վիսթնիմ» ամսագրի 1893 թ. № 5 (Մայիս) տպագրուած յօդուածը՝ «Ս. Ղազարի վանքը» խորագրով:

ՏԵՆԵԱՍԳՐԻ ՆՈՅԵՐ

48. Ոտքը կ'երթայ Ձեռքերի նշանաւոր ճառին: Կատարեալ, մեծ հայասէր, 1895 Օգոստոս 6ին կը նախագահէ, Լոնտոնի մէջ, Հայաստան հաւաքի մը, որուն կը մասնակցեն Ռեւոլյուցիոնար Դուբուէ, Մաք Գոլ եւ ուրիշներ: Կը ձաղկէ ոմիտները, քանադաւումները եւ շարքաւորումները, կը կ'ուղղէ բոլորին՝ յանուն զմարդկային մեծ սկզբունքներուն, հետաքրքրեալ գրեթէ անսահման աշխարհին: Քոմիտէի վրա սոսի բանաձեւ մը: Ի նպատակ Թուրքիոյ բարենորոգումներուն (անս Մաք Գոլ, Հայաստանը Եւրոպայի դէմ, փարեզ 1897):

digitised by A.R.A.R.®

Այս արտայայտութիւնները, որոնք յենարան կը դրոնան անգլիական դիւանագիտութեան (ան'ս Վալադայտ զիրէն, Լոնտոն, 1895), Օսմանեան պետութեան մօտ, աւելի եւս կ'աւելանային պիտի դարձնեն կոմկոստանայ հայրենասիրները յայտ առա կառավարութեան, իբր անգլիական:

40. Այս թիւը ծննդաւ յախապանքուած է: Ոչ մէկ արժեանքով, հնչական կամ դաշնակցական խումբ հասած է անոր երբեք: Երկու արգելիք կար առար, Նախ՝ զորահաւաքի հարցը: Ֆետայական շարժումը փաստորէն հայ երեստարգրութեան մէջ յարաբերաբար փոքր թիւ մը շարժման մէջ դրած է, խոսելով մա'նուանդ անգլիական երկտարգրութեան մասին: Միւս կողմէ, պիտական յարակից լուրջ հարցեր էին, հայ կուսակցութիւնը ներուած համար, սպասողներու, պահպանումը եւ պարենաւորումը: Ֆետայական խումբները պէտք էր մնային հեռաւոր, չենային ու անհրաժեշտ լըլաններու մէջ, յաճախ միմեանք զարմիր, եւ կենսաբի պահպանումը կ'ախում ունէր մա'նուանդ խումբերու շարժումներին: Նկատարութեան իրենց աստիճանին ու հաղորդակցութեան կարելիութիւններէն: Ասիկա եւս չէր հարկադրէր ասմանախօսելու զորահաւաքը: Ըստ մասնակի եւ վայրէ, ամենակատարար թիւը արտաբերուեցաւ 105 և 15 Ֆետայի միջեւ: անկա հաղորդակցութիւնը հասաւ 40ի: Բայց ճիշդ է, որ կարգ մը նախաձեռնութիւններ շարժման մէջ կը դնէին Մ'ս զիւղացիներ, Մ'ս զաղաքացիներ: Այսպէս, վանի ինքնապաշտպանութեան ընթացքին (1896), ուր երեք կուսակցութիւնները միացուցին իրենց ուժերը, մօտ 1000 մարտիկ հաշուեց զբանակը: 1897ի Յուլիսին, ինտատորի մէջ (Վանէն ոչ հեռու) տեղի ունեցաւ ծանօթ պատմական արշաւանքը, որ խմբից 250 Ֆետայի, որոնք մաղրիկ ցեղին վրայ յարձակում գործէին, վաղով Պարկաստանէն:

50. Հոս յիշատակուած մախուլութիւնները միայն հնչականներուն կրնան վերաբերիլ: Արդարեւ, մինչեւ 1898, Դաշնակցութիւնը միայն պաշտպանողական կոխ կը մղէ Արեւմտահայաստանի մէջ: Նոյն թուականին, վերջ կը դրնէ հնչականներու հարմարողական լըլանը: Գոմ-Գոմի (Գ. Պոլիս) ցոյցը՝ 1890ին, Սասնոյ ապստամբութիւնը՝ 1894ին, Պոլսը Ալիի (կրկին Գ. Պոլիս) ցոյցը՝ 1896ին, եւ Ջէյթուի ապստամբութիւնը՝ 1896ին — կը յանդիման մեծ պետութիւններու պիտանագիտական միջամտութեան, որ Սուլթանէն բարենորոգեցնելու խոստումը կը խլէ: Այս բարենորոգումները, սակայն, երբեք պիտի չկերպարէին, մինչ հայերը, նկատուած՝ Վեր պուլիսները, աստիճանաբար աւելի անպոք ու իրիտ ճնշումի պիտի ենթարկուին: Հնչականները ալ կը դանդաղ կրկնակ հակառակահեռ մը առիւտ: Մէկ կողմէ, իրենց զորմունքները հայութեան պոլսութեան կը վառանդէ, միւս կողմէ անոնք, իբր մարքոսներ, դէրք ճշդիւմ հանդերձ մեծ պետութիւններու հայաբնակաշտութեան դէմ՝ կը յուսան, աւելի ու աւելի, որ իրենց յեղափոխական զորմունքները պիտի յառաջանէ իրական միջամտութիւն մը: այս վերլիններուն կողմէ:

51. Յատակ է, որ եթէ հայ յեղափոխական շարժումը ներշնչուած է պուլիսի հայադուկային շարժումէն, անիկա շոյնքան ալ հետեւած է առաւ աւարեկական ճոճքին: Արմենականներ, հնչականներ եւ զաշնակցականներ՝ երբեք ալ կ'իրարկած են աւարեկութիւնը եւ հայ շարժման պատմութեան այս դուրիւ լատ հարուստ է: Եթէ արմենականները կը թշուառէին խուսափիլ այս միջոցէն, քայլ որով մասնաւոր պարագաներէ, զահարեկայութիւնը յանուանէ արժանազրուած է հնչականներու ծրարքին մէջ: Պարզութեան եւ զապիտանքի կողքին, ժողովուրդի յեղափոխական դաստիարակութեան մեծերէն է: Ան կը պաշտպանէ զանգուածները, կ'աւելցնէ անոնց ինքնապաշտպանութիւնը, կը տկարացնէ պետութիւնը, կը կիրարկուի Օսմանեան պետութեան ներկայացուցիչներուն, անոր զործակալներուն (հայ կամ թուրք), լրտեսներուն ու դատաւաններուն դէմ: Անոր համար ալ, կուսակցութիւնը պէտք է կազմակերպէ յատուկ մարմին, աւարեկական աքթիւն համար: Զ. Դաշնակցութեան Ծրարքի (1907ի) Վիլզոններ խորագրուած պարբերութեան ութերորդ կէտը կը յայտարարէ, որ կը գործածէ աւարեկութիւնը պետական պաշտաններու, լրտեսներու, դատաւաններու, վաշխառներու եւ ամէն տեսակի շահադրոնողներու դէմ:

Հայկական շարժման աւարեկական այս ոճը, ինչպէս նաեւ Ֆետայական շարժումը բուն ընդհանրութեան ենթարկուած են կովկասի մարքոսներու կողմէ: Փոխադարձաբար, հայ յեղափոխականները կը թեղադրէին այս վերլիններուն մերժումը անմիջական ըրտ միջոցներու, որոնք, կ'ըսէին, թիակ մեծ են տկար ուժերով կայսրութիւններ խառնելու, եւ անոնց յարումը միայն զործադուրներու:

Վերանայելու, դատաւաններու եւ ուրացողներու դէմ կ'իրարկուած ներքին աւարեկութիւնը ծննդաւ զոհեր առաւ իր կարգին: Հնչակապաշտպաններ անխառնակի հիւանդութիւնը, վախը, որ կը ծնէ ամէն յեղափոխական փոքրամասնութեան մէջ, նաեւ իւր

բազմաթիվ թիվ լրացնելու՝ հայաթի մարմինը՝ երբեմն հասցուց ահաբեկչական դուրս գալիս թիվը լրացնողներին հանձնում է:

Արաբիկ ահաբեկչությունը կիրարկվեցաւ փաշաներու, ազաններու (թիւրք կամ թուրք), ոստիկաններու եւ պետական պաշտականներու (ուսու կամ թուրք), նախ քան հարաւանու մը պարտնելու (հայաթի մարմինը կողմէ՝ Կաթիբ Բեյը, 1903 Նոյեմբերին, զաւր-նակցականներու կողմէ՝ Ապիւր-Համիտ Բ.ը, Յուլիս 1905ին): Յեղափոխական մամուլին եւ թուրքիկներու շնորհիւ յայն սեղատուական ծանուցում ապահովուեցաւ այս ազդեցութեան:

1896ի ըստը, հնչակեանները Ազգրիփաթի մէջ նախաձեռնեցին ահաբեկչութեան նոր մեծ մը:— Հայ քաղաքներու մօտ ըսնի հանդանոցներին: Հոս եւս, դաշնակ-ցականները պիտի պատգարծեն նոյն մէջ հետապնդին (սե'ս վարը, սեղեկադրի նոթ 100): Այս միջոցառումը ինքզինք էր պարտադրէր, որովհետեւ իսկական դրամական շուկայ էր ստեղծուած, եւ հայ քաղաքներին մէջ քաղաքական անարարութիւն ցոյց կու տար յեղա-փոխական շարժման հանդէպ:

Ստանայ ազատամարտի մարտգործները փաստած էր նախապատրաստութեան եւ ապստամբական սերտաբարութիւնը: 1896ին, հնչակեանները Ձէյթունի մէջ էր պատրաստ-ւելին նոր ապստամբութեան մը, որուն համար անդորդին դրամ կը փնտռէին, զէնք ու զին-նամքներ: Հայ քաղաքներին մէջ, մշտապէս անհադի դատաւարդ (անդրիփաթի մարմինը հայ դը-րոպները տարդի փ.Պ. դարու երկայնքին մարդեր են դաշին), երբեք չէ ստեղծուելու հայ յե-ղափոխական շարժման, առանց հայաւերս անհատական քաղաքականութիւններ: Երբեմն հետա-քրքիր հայ դիւանագիտական ղեկավարները, աշխարհադրական հետաւորութեան եւ դա-տաւարական նախապայտարմիններու (նաեւ լահերու) թերութիւնով, ան երբեք ծառ չէ դա-սած հեղափոխական ուղիներ:

52. Մայանիս 27 Թուաւար 1896ին (սե'ս Գ. Ա.):

53. Չալուի, Թիֆլիսին էլիզաւէթիփու (Գանձակ) ճամբուն վրայ դանուղ առան:

54. Ներսէս Գրիգորեան, կամ Գրիգոր Շիկահերեան, կամ՝ «Շիկահեր» Ռուսա-ցիւ՝ Անգղադրացի մէջ: 1890ին արմենական է: Խառնաբան չէ, բայց համակուտութիւնի դեր կատարած է արմենականներուն, Թիֆլիսի մէջ հայաւերսին միջոցառութեամբ (սե'ս Գ. Ա.): Ծաղկումով՝ վանեցի, 1890ին ահաբեկուած է Ստամբուլ, ուր արմենական խումբ մը կը կազմակերպէ:

55. «Անդախական» արմենական հաւաքներին մը դրոշմին չէ ունեցած քնու: Հաւանաբար հայ արմենականներն սխալ մը հոս: 1896ին, միակ խմբակներին, որ շա-ղաքականներին ազդեցիկ էր Միացեալ Նահանգներու մէջ եւ տառիկ՝ ճանաչուած արմենա-կաններուն՝ «Վերականգնող» խումբն է, այսինքն՝ հնչակեան ըմբոս թիւը, հակադրուող՝ Ժողովրդականական կողմերուն (սե'ս վարը, սեղեկադրի նոթ 96):

Այս թուականներուն, Միացեալ Նահանգներու հայկական զաւրիքը կազմուած է թշուառ բանուոր դատակարգէ մը, Փաք Աւիայ կեդրոնական եւ արեւելեան վերայնեցեան դիւանագիտական թիւը, եւ որ, դեռ հայրենի հողին վրայ, զգայուն դարձած էր արմե-նական քաղաքականութեան: «Վերականգնողները, որոնք հազիւ թուրքիայ հնչակեաններին էին, մեծ յաջողութեան դասը հայրենաւէր այս պայտարարութեան մօտ, որուն զստակարգութեան գիտակցութիւնը, սակայն, ստեղծանափառ էր:

56. Գարեգին Բաղէչեան, վանեցի արմենական: Զերբակաւուած, ապա արաւա-քուած Ռուսաստանէն: Կը դադարէ Միացեալ Նահանգներ, ուր կը յարի Ժողովրդավար Ազա-տական հաւաքներին (սե'ս Գ. Ա.): Այսինքն՝ ԲԱՅ.ին (հիմնուած Յամանեան կայսրու-թեան մէջ, 1906ին հաջ):

57. Արամ Նապրեան, Ժանոթ Նաեւ «Սօրի Գուգարեան» անունին տակ: Շու-լակեցի ծագումով՝ յայտնի արկածախորհրդի (սե'ս Գ. Ա.): Գրովի ահաբեկ Թիֆլիսի մէջ, 1897ին առիթն առանձնա՝ «Էնլիւն» եւ հնչակեան Ժողովրդի դրոշմներուն թաշխուսը:

58. Գարեգին Մնացականեան (1859 ? – 1917), Երեւանի նահանգի դիւանագիտ. ըն-տանի մը զաւակը, երկրորդական ուսումը կ'առնէ Երեւանի դիմադրային մէջ, յետոյ Թիֆլիսի դիմադրական Ս. Փեթրոպոլիսի եւ Օտտոյի-Համբուրգի քաղաքներուն մէջ կ'աւանդի ի-րաւարտութեան, իսկապատեալութեամբ կը հետեւի պայքարեան շարժումներուն եւ ուսանող ընկերներու զարգացման: Կը հրատարակէ քաղաքական զբոսիկներ: Գովառ վերա-դարձին, փաստարարութիւնը կ'ընդգրկէ եւ, 90ական թուականներու սկիզբին, ուսանողա-ցութիւն-ուղևորութիւն մը կը կատարէ Երկիր: 1893ին, կը ստանձնէ Կազնիսեանի եւ ըն-

կերհերու պաշտպանութիւնը: Եւ այս արի արարքին համար, անշուշտ, իշխանութեան աշխին կը դառնայ կառնածիկ: Կը դառնայ հեյտեան, բայց լուսով կը հեռանայ կուսակցութիւնէն: Մահաւանդ մասուրական գործունէութիւն ունի հայ միջնորդին ներս: Սրեանքի թեմական վարժարանի հաշարարմա, Գաղաթային Դաւանի անգամ, Կալիստոսեցի հայ թերթիւրու: Մանուկարար, ՎՍԱՐԵՆԻ (Թիֆլիսի լուսարդիս եւ յառաջիմական թերթիւրին) մէջ լոյս կ'ընծայէ զեղջիկան կեանքէ պատմականներ՝ Ժողովրդապաշտ անբնական մով: Իւ տեսնակներուն համար ցարկան կառավարութեան կողմէ արտաւան աստիճան հայ մասուրականը: (ՏՄ՝ Գ. Անանուն, Վարդիկի Մանգակեան, Վարդ, Թիւ 11-12, 1917):

ՅԹ. Սահայ կոտորածներէն ետք, 1894-95ին Անգրիզիկա տպատեսան գաղթականական ալիքին կը վերաբերի անարկութիւնը: Նոյն երեսնով պիտի դիտուի, տպուհեան, ամէն ջարդէ կամ ջարդի պատճառիցէ ետք, մինչև 1921, եւ արիւն՝ հակառակ ճիւղի լուսինն ու զաշխակական տարհամարէլ ցարդութեան: Այս վերջիններուն համար, արտապաշտը, պանդխտացումը եւ ջարդը հասարակ շարքերէն էին, Հայաստանը հայութենէ պարզուել, շարժումը կազմալուծող եւ անգամայնաւոր:

Ըստ հայկական աղբիւրներու (տե՛ս Գ. Անանուն, անշ. III, էջ 11-18. Անանուն, անշ. էջ 230), 1895ի գաղթականութիւնը կը զնահառուի 50-000 եւ ոչ 80-000, ինչ որ առանկան որոշողներէն: Եւ արեւելիս աստիճան Թիւ 5: Թուաւ, կեղտոտ, երեխաներով ու ծերերով ծանրաբեռն այս գաղթականական ալիքը կովկասաւայութիւնը լոյսէ հարցի մը առջև կը դրուէ, բայց աստիճան անգամ ըլլալով երկոտարագութիւնը, մահաւանդ, զոյց անհրաժեշտութիւնը ցարդական յանձնարարութեան մը:

Անշուշտ հայկական միասնականութեան զգացումը դործի լծակցաւ, ինչպէս կ'ուէր կերպով կը մատնանէ արդէն անգնկապիւրը, բարեկարգութեան ընթացիկ միջոցներու օգտագործումով: Մոմուրը, կզերը, հայկական հիմարկները ընդհանուր հանգանակութիւններու ճանապարհէն գաղթականներու օգտին: Բայց, ի վերջոյ զարեղործական շարժումը սպառնցաւ կամ անբաւարար զուրս կ'ուէր: Երկար ամիսներ, հայրենասէրները ճշտում քանկեցին ծերունի կաթողիկոս Խրեմեանի վրայ (տե՛ս վարդ, անգնկապիւր ԵՍՅ 66 եւ Ս. Վրացեան, Վեհմեծի օւղիմիսով, III, էջ 229-237) զայն մզնով երկար ու յառախորթը համարողութեան մը մինչև Ս. Փեթրոսպոլիէ արքանիւրը (Մայիս 1896), գաղթականներուն ի նպաստ:

Անգրիզիկա հայ զիւղացիութիւնը, ինքն ալ հողային դժուարութիւններու մէջ, անձնութեամբ կը տեսնէին անհող գիւղացիութեան մը այս խուճումը իրենց լրջաններուն մէջ: Եւ հողին, Մ. հարաւարտեան քաղաքայնութիւնը Երեւանի նահանգին մէջ, ուր քանկութեան խառնութիւնն ալ բարձր էր յարաբերաբար՝ մղց գաղթականները անգնկաւորուելու Թիֆլիսի, Բաքուի, Պաթումի շուրջ:

Ըստ 1897ի մարդահամարին, հաստատունի ընտելացին միջին խառնութիւնը 7ի շուրջ էր, Բաքուի նահանգին՝ 24, Թիֆլիսին՝ 27, իսկ Երեւանին՝ 33:

Պաթումի լրջանին մէջ, քանի մը հազար գաղթական անգնկաւորացեան Սեւ ծովեան ափերու ծիսատուի անկարգներուն շուրջ, անհողին լծակցեալ մէկ մասին մեկնումին շնորհիւ զէպի կրօնակից Թուրքիան (տե՛ս Գ. Անանուն, անշ. III, էջ 11-18):

Գաղթականները միշտ ալ կառնածիկ նկատուեցան ուսում իշխանութիւններու կողմէ՝ Մ. իրը քնն անգնկան անտեսութեան վրայ, Մ. իրը յեղափոխականներու զանկարանները կազմող համայնը: 1901 Նոյեմբերին, Կալիսին իշխանի մէկ հրամանագրով, անոնք կը դրուին ուսումնական հպատակութիւն ընդունելու կամ կայսրութենէն հեռանալու: Երկրորդ անգամ ասիւն: Մոխրագական զինուորական ծառայութիւնը, Հայաստանի մէջ հողեր զննելու արդիւրը եւ կայսրութեան խորը գաղթիւն թելադրածը իրաւեցուցին անոնց մաս կէտը: Ետեւրը մեկնեցան Պարսկաստան, ուրկէ, պարսկապատան զարման, իրը զործաւոր եկան Բաքու: 1905ի յեղափոխութեան անոնց՝ շատերու մասնակցութիւնը պիտի արդարացնէր, հետագային, անոնց շուրջ կանուխէն հաստատուած պետական իրաւ հակողութիւն մը: Ուրիշներ արտաքսուեցան 1902 Սպանիոյն, արտուելով մինչև Թրքական սահման (տե՛ս Անանուն, անշ. էջ 229-245):

60. Վարչական քաղաքագրումը Անգրիզիկա մէջ հրամանագրուեցաւ 19 Յունիս 1870ի օրէնքով, բայց քաղաքներուն մէջ կիրարկուեցաւ Անգլոսոսթր Բ. ի արտոնութեամբ՝ 1874 Հոկտեմբերին: Այս քաղաքագրումը կը ստեղծէր քաղաքային զուգանք (քաղաքագրական խորհուրդ), որոնք ունէին քան Թուրքաստանի զամարներուն իրաւունքներն ու պարտաւորութիւնները: Ընտրուած լոյս արտուած համար՝ բոս Գեղեկային զրութեան մը, որ քաղէ իրաւունք կու արք միայն անարժ կուսաններու անգնկաւորներուն: 1892ի օրէնք-

քը աւելի եւս պիտի խտացնէ այս պայմանները Այսպէս, Թիֆլիսի եւ Բաքուի մէջ քաղաքապետութիւնները անցան հայ վաճառականներու զարթոնքին, որովհետեւ այս երկու քաղաքներն ալ հոծ հայութիւն կը հաշուէին. մասնաւորաբար թրք զօրքանջը հայ բարձր քաղաքներու միջեւ, 1880ական թուականներէն ի վեր:

Այսպէս, 1800ի շուրջ, Թիֆլիսը ունի 150-000 բնակիչ, որուն կէսը հայ է, եթէ ոչ աւելին: Առաւել եւս կարեւոր է հայութեան ուժը անշարժ սեփականութեան տեսակէտէն դիտած: 1901ին (ըստ վիսկադի, Յ, 1901 — մէլքերուստ Դ. Անանեանի կողմէ, անդ, III, էջ 421), Թիֆլիսի մէջ կան 7929 կալուածատէրեր, որոնց 4028ը՝ հայ, 2021ը՝ վրացի, 1443ը՝ ռուս, 297ը՝ թուրք, 128ը՝ գերմանացի, եւ մնացեալը՝ չրեայ, յուն, եւայլն: Պէտք է տակաւին աւելցնել, որ հայերու կալուածները կեդրոնական աշխարհ թաղերուն մէջ են անդադրուած: Պազարի թաղին մէջ միայն՝ հայերը կը ներկայացնեն, 1187 կալուածի վրայ, 940 կալուած:

Նոյնատեսակ օրինակներ կարելի է բերել Պաթումի, Բայք մահալակ Բաքուի համար, ուր մասնաւոր կալուածատէր թաւը Նիկոնիւրէն կը զարգանայ զարասկիւրէն, եւ Թիւրքի կը դերադանջէ միւսները, Բայք հայերը հոս ալ կը պահեն ամէնէն արժէքաւոր կալուածները:

1914ին, Բաքուի մէջ (տե՛ս նոյնը, էջ 423, Բաքուի քաղաքապետական վիճակագրութիւնները), առեւտրական հիմնութիւնները — զատուած ըստ ներդրուած զբաղակցութիւնի — հայերու կը պատկանին հետեւեալ համեմատութեամբ.

Դրամագլուխի ներդրում	Հայ դրամատերեր — %
10-000 ռուբլի	14,3
10-000 — 50-000 ռուբլի	27,9
50-000 — 200-000 ռուբլի	47,5
+ բաց 200-000 ռուբլի	49

Եթէ Բաքուի մէջ, հայերը պիտի կորսնցնեն զուգայի հակազդէրը, Թիֆլիսի դուստան մինչեւ 1917 պիտի մնայ հայկական, անկեղծով վրացիներու եւ, մասնաւորապէ՛ս վրացի մենեւիկներու թնամանքը հայ քաղաքներու միջեւ հանգիպ:

61. Տե՛ս վերը, տեղեկագրի նոթ 66:

62. Արմենական կուսակցութիւնը, անշուշտ, գնորդ չէ: Ասկայն անցեալին շատ եանթ կ'ըսէ ըլլալու չէ առաւ օտարկանական ապստարկութիւններուն, իբր աւելի Թուրքիոյ մէջ զարգացած կազմակերպութիւն: Արմենականները յարաբերաբար կարեւոր թիւ կը կապէին զազմականներուն մէջ, եւ յանկարծ զբաւեցին օտարկանութեան աշարդութիւնը (տե՛ս վերը, տեղեկագրի նոթ 15):

63. Մկրտիչ Խրիմեան (1821-1907) անուանակոչուած է Խրիմեան Հայրիկ: Ամենայն Հայոց Կաթողիկոս 1883ին 1907: Հայ ժամանակակից պատմութեան ամենաթողութեամբ կան զեմքերէն մէկը: Ենած՝ Վան, կուսակցութիւնը զատեալ կնովը եւ աշխարհ մահէն ետք: Վանի առաջնորդ եպիսկոպոս՝ Թուրքիոյ հայութեան Պատրիարք Կ'ընտրուի 1869ին: 1873ին կը հրաժարի: Եւ ներկայացնէ հայութեան զինդրանները Պերլինի վեհաժողովին (1878), ամբողջ Եւրոպային: Իր կաթողիկոս ընտրուելը, 1893ին, հայրենասէր հայութիւնը մեծապէս կը յուսովէ, հայ Դատի հաշուին, Բայք լի տար ապստոսած արդիւնքը: 1897ին հայ կական զարդները կը փակուին, եւ եկեղեցական կալուածները կը գրաւուին 1903ին: Իր վճռակամութիւնն ու քաջութիւնը պահպանեցին ժողովուրդին մօտ իր վայելած ամառներէն, եւ իրենից ճշէ անոնց շատին դրժնական արդիւնքներ:

Ինչպէս Գր. Արեւունի, ինչպէս Թ. Պատկանեան, Բաֆֆի եւ այլ գրողներ, Խրիմեան կը պատկանի հայկական շարժման նախապատմութեան: Գուսակրոն զարմած այս աշխարհակալը, հոգեւորական իր գործունէութեան կողքին, վարած է հրապարակագրի, պատմագրի եւ ընդհանրապէ՛ս՝ հայրենասէր գործունէութիւն մը: 1855էն 1856, Պալատի մէջ հրատարակած է Վերի Վաստարակամի թերթը: Խոր կերպով կապուած է հայ հողին ու հայութեան, Երկրի պաշտամունքի առեղծոցներէն է եղած: 1857ին, Գ. Պալատին կը մեկնի Վան, առեւելով իր նախնական ծապարանքը, թուրք ու միւսին կը հաստատուի Վարաշայ վանքին մէջ, ուր կը շարունակէ Վերի Վաստարակամի հրատարակութիւնը: Կ'անդառաւ դառնայ ու աշխարհին կը յայտնարէ, իր յոգեւածներով, Երկրի պատու գիտարարքը, Նիւթական եւ բարոյական անպատմելի թշուառութիւնը դիւղացիութեան, կղերին ու առեւտ

սարակ ժողովուրդին աղիտութիւնը: Այս խաւարին զէժ պայքարելու համար, 1858ին Վանի մէջ դպրոց մը կը բանայ, կը գրէ յօդուածներ՝ իսկական հոլիւր ըմբոստանայու, ցնցող ու հինգանի քարոզներ կու տայ, պարզ ու խայթող նորն ասոնն: Կը նշանակուի վանահայր՝ հռչակաւոր Ս. Կարապետի վանքին, Մուշի լեռներուն մէջ ասանձնացած, ու կը փոխադրուի Տարօն, հետք տանելով կրկին՝ իր սուղարներ, եւ այս աւելի եւս կզգիպուի, աշխարհէն կտրուած շրջանին մէջ 1863ին կը հրատարակէ «Արծաթիկ Տարօն»-ը: Իր ձայնին մէջ հին, պատմական Հայաստանն է, որ, լքուած, իր հետաւոր զաւակները օգնութեան կը կանչէ: Ժողովուրդի դատարարութեան յամառօքն հետամուտ, անտեսական ու մշակութային յատկութեան մասնահետեւ՝ Երեմեան, հարց ասած է, իր յօդուածներուն մէջ, թէ պիտի դա՞նք, երբ մեր գիւղացին խաղաղութեան մէջ պիտի վաշի իր վատասկը, երբ արդարութիւնն ու խաղաղութիւնը պիտի տրին Հայաստանին, պիտի լսուի վայրաշարժի առաջ, զորոնն հեռագիրը, թղթատարը, դպրոցները, համալսարանը, փոխան աւագակ կազմակերպութիւնը հրոցանի պայթիւնին: Մարտունակ, ժողովրդավար, յեղափոխական՝ իր ձառնորդներէն, կը բախի հայկական ընկերութեան եւ եկեղեցիի պահպանողական տարրերուն, քայքայ կը քաղաքականացնէ 60-70-ական թուականներու երթաւորութիւնը. եւ, ինչպէս թաղմանին իրեն ժամանակակից մտապրականներ, լայնօրէն կ'օժանդակէ հայութիւնը կրօնական համայնքէն ազդի վերածելու հոյժոյթին:

Զափառաց կուսկանելի՝ ուսու իշխանութիւններու աչքին, Երեմեանը կաթողիկոս դառնալէ ետք, միայն ստորկական հակադուքեան ժող. ենթակայ: Փոխարքայ իշխան Կալիքիւր կը կասկածէր, թէ ան յեղափոխականներու զաւակիցն է, եւ կ'աշխատի միացեալ Հայաստանի մը սահմանն ի նպաստ: Ատոր համար, թողիցս ժողովուրդիցն իշխանի տնտրը, խտորէն զրաքննեց անոր կրօնապաշտօնական եւ ըստ լուրտուր թերթը՝ «Արարատ»-ը, եւ Երեմեանը մասնեց անկարողութեան, բուն մը, որուն զնպատեց Երեմեանի յառաջացող տարիքը (տե՛ս Ա. Պէլլէրեան, Թեղ, Երեմեանի 1878ի զարմանելութեան մասին: Տե՛ս նաեւ Գ. Լեւոնեան, «Հայոց պարբերական մամուլը», Երեւան, 1984, էջ XXXIII: Արմուհի, անդ, էջ 58: Մ. Վարանդեան, «Հայկական շարժում...», անդ, էջ 46-72):

ՅԱ. Իշխանինը կաթողիկոսանեալ քաղաքն է, Երեւանէն ոչ հեռու:

ՅԵ. «Մ. Ղազարի վանքը՝ Վենետիկի մօտ»: «Ռուսի վերքնից», 226, Մայիս 1893, էջ 177էն 194: Յօդուածը, ստորագրուած Վ. Ք., Վենետիկ այցելող ուսու համարողի մը տեղեկագրութիւնն է: Եղուածի կարեւոր մասը յապկացուած է միաբանութեան պատմութեան եւ տեղի եկարադրութեան: Բայց հեղինակը կ'ընդգծէ, որ կրօնքը երկրորդական տեղ կը զբաղէ միաբաններու կեանքին մէջ, որոնց հիմնական մասնադուքիւնը Հայաստանի ազատագրումն է:

Վենետիկի Միթիթիթեան միաբանութիւնը (կաթողիկէ), հիմնուած 1717ին, բացառիկ դեր խաղացած է հայութեան դրական, լեզուական եւ մշակութային-պատմական Վերածնունդին մէջ, ԺԸ. եւ ԺԹ. դարերուն: Անվանելի է, որ այս միաբանութեան կատարած աշխատանքները, թե՛ն լրջօրէն գիտական քննութի, կը կրեն նաեւ կնիքը բուն հայրենասիրութեան մը, որ Միթիթիթեանները տարածած են իրենց գործունէրուն եւ դատադիքեալուն մէջըսով:

(Նոր. 3)

Յ. Տէր ՄԻԹԻԹԵԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Անցեալ աշնան, «Գէորգ Մելիտիենցի» գրական ժրջանակի դասակարգը Պոլսո Միապետի խմբագրութեամբ լոյս ընծայեց «Երկու տնտեսագիտական 340 էջոց ժողովածու մը, ուր տեղ դրած են 60ական թուականներուն Հայաստանի մէջ հրապարակ եկած երկուսուսուրդ արձանագործութիւն 14 գէժեր» ստեղծագործական յատկանշական կատարելով եւ իրենց անձինն ու գործին վրայ լոյս նետող յարակից տուեալներով:

Հաստատել էր բացառիկ «Երկու իտալ» խորագրուած յառաջաբանով մը, որ կը ներկայացնէր ստորեւ:

«Երկու իտալ» խորագրով ստորուն թիւերով պիտի տանք այս «Երկու իտալ» իրենց լրացուցիչ մաս պատրաստուած Գ. Միապետի յոգեւոր շարքը, որ առաւելաբար կը ծանոթանայ առեւալ ժամանակաշրջանի (1900-1910) ստեղծագործական մթնոլորտին վրայ:

Ներկայ ժողովածուն անձի մը նախաձեռնութեամբ կազմուած գործ չէ: Անիկա մարմին առաւ «Գէորգ Մելիտիենցի» Գրական Մրցանակի դասակարգման մէջ նիւտին բերուած առաջարկի մը քննութենէն ետք, նպատակադրելով:

Հայաստանի մէջ վախճանական թուականներուն յայտնուած արձանագործութիւն կազմել ծաղկաքաղ մը եւ մերտապէս ուղղագրութեամբ ներկայացնել օփիւքահայ ուսանողութեան եւ միջին ընթերցողին:

Բնագործներու ընտրութիւնը կատարելու ատեն հաշուի առնուած են այդ հանգամանքները:

Աւելի լաւ պիտի ըլլար հաւանաբար վէպերէ ու վիպակներէ անջատուած հատուածներուն փոխարէն՝ իրենք իրենց մէջ ամբողջ ստեղծումներ ներկայացնել ընթերցողին, բայց ներկայ ժողովածուին հիմնական նպատակին համապատասխանող նման գործերու գծուար եղաւ մեզի հանգիպել առեւալ հեղինակներուն անունով, ուստի եւ՝ երբեմն դիմեցինք հաստատածային ընտրութիւններու:

Ողջի պարագէ է յիշեցնել, որ ընդգրկուած ժամանակաշրջանին առաւելագոյն եկած արձանագործներուն թիւը այս չէ, կրկնապատիկն է ասոր: Մենք կանգ առինք միայն անոնց առջեւ, որոնք իրենց աշխարհով, լեզուով, ոճական բարեմասնութիւններով ու արուեստով աւելի մօտ կը թուին ընթերցողներուն լայն խաւին ընկալութեան:

Փորձելով դուրս դալ նման հաւաքածոներու դասական կազմակարգին, ստեղծագործական բաժիններու աւելնելով՝ նպատակաւորօրէն նկատուեցաւ աւելի իւրաքանչիւր հեղինակէ նաեւ տեսական էջեր, որոնք ընդհանրապէս ստորագրուած են համազումարներու նախօրեականներուն, հարցաթերթիկներու իրենց արձագանգ կամ բանավէճերու առիթով:

«Իր մասին» ընդհանուր խորագրին տակ մէկտեղուած մատենագիտական տեղեկութեանց համար նկատի առնուած են բացառաբար հայրենի մամուլին կարգ մը անդամները եւ, ամբողջական մատենագրաններու չգոյութեան պատճառով՝ բարարուած ենք մեզի հասանելի աղբիւրներով միայն:

Նոյնը պիտի ըսէինք նաեւ հատորին վերջաւորութեան գրուած տեսական յոգեւածներու ցանկին առիթով:

Եթէ ընդունինք, որ տարիքային առումով սերունդները միայն տասնամեայ ժամանակով մը կը բաժնուին իրարմէ, այն առանձն դիւրին կ'ըլլայ վաթսուն տարուան խորհրդահայ գրականութեան դէմքերը բաժնել Վեց տերունիներու, որոնցմէ երբորդը պէտք է նկատել 1920-1930 թուականներուն ծնած Արամեան-Արշակեան սերունդը, իսկ չորրորդը՝ 1930էն 1940ի միջեւ աշխարհ եկածները, Խալափեան-Յովսէփեան սերունդը։ Հաստիքի տրուած գերկու տերունիք խորագիրը ծնունդ առաւ պայմանական այդ հասկացողութենէն։

Աւելի անմիջական պիտի ըլլար թերեւս անոր տալ Հայաստանի երիտասարդական արձակը տնունը, ատիկա, սակայն, պիտի նշանակէր ընդունիլ դոյութիւնը նոր յղացքի մը, որուն յայտարար նշանները բացայայտ չեն։ Վաթսունական թուականներուն թափ առած եւ իբր այդ ճանչցուած արձակը, նոր աշխարհի մը յայտնութենէն աւելի՝ կը բերէր ճշմարիտ գրականութեան վերագործի մը արժանիքները, որոնց ձեւաւորման մէջ հաւատար չափով դեր ունեցան թէ՛ Երէջ գրողները, թէ՛ Արամեանի սերունդը եւ թէ՛ անոր փոփոխողը։ Այդ հանգամանքով կը բացատրուի նաեւ երկուքը նոյն հաստիքին մէջ ներկայացնելու մեր միտումը։

Գրական շրջաններ ընդգրկող նման ձեւաբանութիւնը ստիպուած թիւն է ըսել, որ սահմանուած տարածութիւններու վրայ դժուար է նոյնիսկ ուրուագիծը կազմել զօրծող դէմքերուն եւ անոնց յուզած հարցերուն։ Կը օտարպէսինք կրկնել դասական այդ չթմեղանքը, որովհետեւ գրական բուն շրջան մը, ինչպիսին էր հայրենի արձակին վերջին 20ամեակը, իրապէս հնաբար չէ յատկանշուած մէջ ամփոփել։ Անոր դիմաց տունեակ հարցեր կը դանդաղէին մարդուս, — կեանքի պայմաններ, հոգիներուն կազմաւորման հոլովոյթը, ստեղծագործական միջոցաւորը, կրուած ազդեցութիւններ, յըղացներուն տեսակարար տարբերութիւնները, լեզուական ու ոճական յատկանշները, կառուցումի իւրապահութիւնները, եւայլն, եւայլն։

Այս բոլորը եւ ասոնց յարակից գիծերը իրողութիւններ են, որոնք չեն կրնար մեկնաբանական համապատասխան ծաւալներ ստանալ հոս։

••

Պէտք են, որ իւրաքանչիւր գրող, ի վերուստ արուած խմբին հետ, իր բախտորոշ ազդեցութիւնները կ'որոշայ մանկութեան եւ պատանեկութեան օրերուն կրած ազդեցութիւններուն, հակազդեցութիւններուն եւ կուտակած գղափարներուն տարբերէն, հրճուածքներու, զրկանքներու, սգեւորութիւններու ու բեկումներու հիւսկէներէն։

Այս առումով շատ հարուստն եղաւ կեանքը ներկայացուող երկու սերունդներուն, որոնք իրենց անփական բախտին հետ՝ ապրեցան նաեւ հաւաքական կեանքի մը բարդ յուզումները, անուկնկալ տակնուվրայութիւններու, վարչակարգային բլրութիւններու, պատերազմի, պատերազմական հասեւանքներու, դաժանութեան կրկնաբեկութիւններու եւ յարաբերական շնչառութիւններու անփերջ ալեկոծումի մը մէջ, մինչեւ որ հասան տարիքի երեսունի ու քսանի սահմաններուն, ստեղծագործական կեանքի սեմին։

Ոմանք, Արամեան, Յովսէփեան ու Սարգսեան, պատանիներ էին տակաւին, երբ խիստ կապանքներու տակ առնուեցաւ գրականութիւնը եւ իրենց աւարեկ աչքերուն առջեւ անճիտուեցան գրականութեան ասոք հասկերը, Բակունցը, Ջարենցը, Թոթովենցը, միւսները՝ մեղքերու լիութեանցիւ հե-

դեղներու տակ: Հաւատարակչութիւն խախտող կամայականութեան այդ փոթորիկը դեռ չէր աւարտած իր կարմիր հունձքը, երբ անոնք, յիշեալ երեք դէմքերը, քսանամեայ եւ քսանէն վար տարիքի մը՝ հազան դիմուորական տարող ու մասնակցեցան Համաշխարհային նրկորդ մեծ պատերազմի թէժ մարտերուն: Երկու փորձառութիւններ, որոնք ծանրօրէն անդրադարձան տնոնց հոգեկան կազմութեան վրայ:

Աւելի բախտաւոր չեղաւ յաջորդ սերունդը, որուն մանկութիւնը բացաւցաւ պատերազմի ընթացքին ու պատերազմի անողոք հետեւանքներուն մէջ, զրկանքներու, կարօտներու խաչածեւ յանախանքին մէջ ու անեցաւ անթեւ մարդաց կողքին, յեռակաւորներու մօտ, չվերադարձած հայրերու սուգէն հարուածուած, վերադարձած ամուսիններէն փախչելու աստապանքին ենթակայ կիներու հասանքին ի լուր:

Փարատօքս պիտի ըլլայ, բայց պէտք է ըսել, որ ստալինեան դաժանութեան բոլոր դառնութիւնները տարած եւ պատերազմին հետեւանքները իրենց մորթին վրայ կրած այս պատանիները, պատերազմի այդ բուռն օրերուն, գրական սնունդի տեսակէտով, քիչ մը աւելի բախտաւոր եղան: Այդ հնգամեակին քիչ մը աւելի տգետ չունէ արուեստը գրողներուն ու գրականութեան ուսուցիչներուն, նաեւ առպարկչ տրուեցաւ դասական գրականութեան: Հայրենասիրութիւնը, ազգային ոգին, ազատութեան համար մղուած պայքարներուն յուշը, հերոսապաշտութիւնը լեզու առին եւ ողողեցին հոգիները, մասնաւորաբար նման շարժումներէ արագ տպաւորուող մատղայ հոգիները:

Բայց դժնդակ եղան իրենց հասուն պատանութիւնը սնուցանելու կոչւած յետպատերազմեան ութ տարիները, որոնց ընթացքին համարեա՛ կրկնըւեցան 1936-1938 տարիներու բրտութիւնները, կոսկածի, զրպարտութեան ուրացումներու, աստիճանազրկումներու, աքսորի ու զնդակահարութեան բոլոր ձեւերուն տակ:

Նաեւ արժեշափերու այլասերումով:

Ֆիզիքական ու բարոյական շարշարանք: Ընկերային վերաբերումներու եւ հայրենական ասպրամներու խաթարում: Մշակութային պղտորումներ ու գրական գունաթափում:

Աւելցնենք նաեւ ա՛յն, որ խորհրդահայ դրականութեան առաջին տասնչորսնամեակի ծանրակշիռ մասը, Չարենցի, Բակունցի, Թոթովեցի, Մասհարիի ու Մկրտիչ Արմէնի սեղանային էջերը փականքի տակ էին յարդէն ու փականքի տակ մնացին. պատերազմի տարիներուն հրապարակ հանուած գաղափարական գրականութեան նմոշները, Բաքիին, Աբովեանը եւ միւսները կրկին նեոստեղծութեան ծոցը, բանադրուեցան պատերազմի տարիներուն սուղօծուած երկարաշունչ կամ տաք շունչով գրուած Դերենիկ Դեմիրճեանի, Ստեփան Չօրեանի, Վիդէն Խնչումեանի եւ այլոց գործերը, դարձեալ փակուեցան հայոց պատմութեան նախահոգեմտութեան էջերը, ու պատանիներուն իրրեւ իմացական սնունդ տրուեցաւ կարգախօսներու գրականութիւն մը, անշիղ ու անարին, հոգիներուն մէջ արձագանգելու զօրութենէն զուրկ դէպքէք խոտան:

Սղաւ շրջան մը, ուրեմն, այսօրուան գրականութեան դրօշը իրենց ձեռքերուն բռնած գրողներուն կազմութեան տարիներուն, բոլորովին զոքուեցաւ պատերազմին քիչ մը բացուած պատուհանը ու ամէն ինչ մասաւ նախկին հունին մէջ, սկսաւ նորէն կոչտեսնային, արդիւնաբերական, հոգեմտութեան ու նոյնմբերեան պահանջներու ցուրտ մրրիկը:

Գրականութիւնը այսպէս, երգը՝ նոյնպէս, թատրոնը՝ աստիճաններուն

պէս, անհրապոյր նիւթ, ապրումէ զուրկ լեզու, միակերպ ուղղութիւն, միակերպ հայեացք, ամէն ինչ նախանշանակեալ, կաղապար։
Ուրեմն՝

36-38 թուականներուն պատահած աննախադէպ իրադարձութիւններուն արիւնոտ յաճախանքը,

Պատերազմի տարիներուն առաջացած կոկծալի տարտուռները,
Թիկունքին ապրուած զրկանքներուն ու կորուստներուն սուզը,

Եւ ասոնց զուգընթաց ազդեցին միւս երեսները, — Հայրենական ապրումներու սով, զրական խաթարուած սնունդ, մտաւորական հորիզոններու սեղմում, մարդկային փոխյարաբերութիւններու անբնական մթնոլորտ, անվստահութեան հիւանդազին տիրապետութիւն, եւայլն, եւայլն։

Ներկայացուող երկու սերունդի երիտասարդներուն ամենամեծը երեսուն տարեկան է մինչեւ հոս, ու կրտսերագոյնը՝ տասներեք։

Անկիւնազարժը կը սկսի այս կէտէն, Ստալինի մահով։

Թաջորդ երկու տարիներուն նշմարուած փոփոխութեան երկչուտ նշաններէն ետք, սկսաւ աւելի բուռն թափով մը առաջ տարուիլ խաղաղութիւնականացման արշաւը, որուն հետ բացուեցաւ Ժ. Մանաքիւնի շրջան վը։ Գիշ մը աւելի ընդհանրացաւ Համարձակախօսութիւնը։ Քիչ մը աւելի ուժեղացաւ վերականգնումներու եւ վերարժեւորումներու ալիքը։

Բարենշան այս երեւոյթին հետ՝ պէտք է յիշել նաեւ պատմութիւնը կենդանացնելու ու պատմական իրականութիւնները արդար նմարներու մէջ կըլուէ թէկուզ թերի միտումները, որոնք Հայեացքները մաքրելու եւ ներքին տարեքններուն տղերիները բանալու իմաստով քիչ նշանակութիւն շունեցան։

Գրականութեան սեմին նետուած այս երկու սերունդին առաջին քայլերուն զուգադիպող վերափոխումը, արտայայտութեան յարաբերական ազատութեան մը հետ բերաւ նաեւ նախօրօք արդիւնուած մեծ արտայայտութիւններուն Հաղորդ դառնալու կենսական սուիթ մը։

Արդիւնուած ազգային ժառանգութիւններէն ոմանք հրապարակ հանուեցան մէկէն, յարութիւն տրուեցաւ ոչնչացուած ու ամբողջ մէկուկէս տասնամեակ մահացու մեղքերու կարգին դասուած Չարենցի, Բակունցի, Թոթովենցի եւ անոնց բախտակից գրողներուն ստեղծագործութեանց։

Երտաւունչ հեռուներէն վերադարձան կենդանի մնացած սամանակերներէն Մկրտիչ Արմէն, Գուրգէն Մահարի, Վաղարշակ Նորինց, Լեւ Կամսար եւ ուրիշներ։

Պետական հրատարակչութիւնները աւելի լայնախոհ մօտեցումներով լոյս ընծայեցին արեւմտահայ արձակագիրներէն Ռուբէն Զարդարեանի, Եւրուխանի, Տիգրան Չօօլուրեանի, Երուանդ Օտեանի եւ այլոց գործերը, առնուազն անոնց գործերէն ոմանք։

Վերափոխումը նշանակալի ուրիշ հորիզոններ եւս բացաւ երիտասարդներուն դիմաց։

Թարգմանուեցաւ, ընթացողացաւ, հարցադրոյցներով պեղուեցաւ եւ ուսումնասիրուեցաւ Ուիլեմ Մարոյեան, անոր հետ նաեւ Հանրի Թրուայա, Զաւէն Սիւրմէլեան, Ինչպէս եւ եւրպացի ու ամերիկացի հոյակաւոր գրողներ, Մէնթէկիւփերի, Անտրէ Մօրուա, Բոտիարդ Քիփլինկ, Հենրի Գէօլլ, Շէյմս Շոյս, Ալպերթ Մորափիս եւ միջուղային այլ ոգիներ, ոմանք ուղղակի այս երկու սերունդներուն թարգմանական ջանքերով՝ Ուիլեմ Ֆոլքները (Ռ. Արամեան), Իրվին Ծօ (Ռ. Արամեան), Ճոն Սթայնպէք (Բ. Յովհաննէս)։

սէփեան, Կ. Միմոնեան), Ալպէր Փամիւ (Կ. Միմոնեան), Էրնեսթ Հեմինկուէյ (Պ. Չէյթունցեան), Կրահամ Կրին (Պ. Չէյթունցեան), Էւայն:

Ամէնքս ալ դիտենք, որ կազմաւորուող սերունդներուն համար խիստ կենսական նշանակութիւն ունին ե՛ւ ազգային, ե՛ւ միջազգային վարդապետութեան հետ հաստատուած յարաբերութիւնները: Այս մարդին մէջ վաթսուեական թուականներուն հոնգփա եկած նոր անունները անհամեմատօրէն աւելի բախտաւոր եղան իրենց նախորդներէն: Անցնող երկու տասնամակնիւրուն մշակուած գրականութեան մեծ տոկոսին, մինչեւ անդամ անոր յարողագոյն էջերուն մասին կարելի չէ խօսիլ, եւ արդէն ոչ ոք կը խօսի, օրինակ, առանց Ակսել Բակունցի բարեբար անդրադարձը նշելու: Փաստերը շատ են:

Ձիւնհային բերումով ազգային թէ միջազգային նշանաւոր գէմբերուն գործին հազարդ զառնալու առաւելութեան հետ, այս երկու սերունդին գէմբերը աւելի բախտաւոր եղան նաեւ ուսումնասիրութեան տարիներուն: Գրեթէ ամէնքն ալ առիթ ունեցան անցնիլ համալսարաններէն ու տիրտալ ժառանգութիւններու, գրականին մերձ կամ հեռու, — բունասիրական, լրագրական, ուսողական, մեքենագիտական, հոգատնտեսական ու երկրաբանական: Ոմանք՝ Հրանտ Մաթեւոսեան, Պերճ Չէյթունցեան ու Ռուբէն Յովսէփեան, յաջողաբար պատմաւեղումադիտական, լեզուաբանական ու երկրաբանական իրենց առաջին վկայականներէն ետք, Մոսկուայի մէջ հետեւեցան նաեւ բեմագրական արուեստին:

Երբ այսօր գրականութիւնը ժամանակակից բարդ իրադրութեանց դըրսերումներուն անպայման էջ կը բանայ եւ մարդուն ափսոսանքին ու հոգիին խուճած նոր իրերուն ու սոցաւորութիւններուն խաշածեւ կշռոյթներէն չի կրնար անմասն մնալ, հայրենի գրականութեան պատասխանատուութիւնը ստանձնած երիտասարդներուն վերոյիշեալ ձեռքբերումները կը ստանան մասնաւոր նշանակութիւն:

Հաւանաբար նայն իրողութեան պէտք է վերագրել իրենց բազմակողմանիութեան նախապատճառներէն մէկը:

Ակնարկադրութեան մէջ ուշադրաւ գէմբեր էին Հրանտ Մաթեւոսեան, Մուշեղ Գալստեան, Վարդգէս Պետրոսեան, Յովհաննէս Մելքոնեան եւ Ռուբէն Յովսէփեան, երբ որք զրին գեղարուեստական արձակի սեմին:

Ձուտ արձակին աւելցնել՝ շատերը մասնակցեցան բեմական արուեստին՝ թէ՛ իբրեւ թատերագիր եւ թէ՛ իբրեւ բեմագիր:

Չորայր Խալափեանի, Գէորգ Արշակեանի, Վարդգէս Պետրոսեանի, Պերճ Չէյթունցեանի, Կարէն Միմոնեանի ու Յովհաննէս Մելքոնեանի թատերախաղերը բեմագրութեան հայրենի թէ միութենական տարբեր ֆաղաքներու բեմերուն եւ անարձագանգ լմնացին մոմուլին մէջ:

Իսկ Հրանտ Մաթեւոսեանի, Աղասի Այվազեանի, Պերճ Չէյթունցեանի, Կարէն Միմոնեանի, Ռուբէն Յովսէփեանի եւ Վարդգէս Պետրոսեանի բեմագիրներուն վրայ կոտուցուած նկարասանումները համարուեցան ասպարէզին առաջնութեան նշող հաստատուն քայլեր:

Համալսարանական պատրաստութեան, հայեացքներու լայնութեան եւ բուն շահագրգռութեան արդիւնք պէտք է համարել նաեւ երկու այս սերունդներուն այն միւս առաքնանքը, որ զուտ մտաւորական գրահետքով եղաւ՝ հրապարակագրական, աեսական թէ բանավիճային կալուածներէն ներս: Մտաւորական այդ գիծը հաստատուի է գրեթէ ամէնուն մօտ, Ռաֆայէլ Արամեանէն մինչեւ Նորայր Աղաբեան, Բաղիշ Յովսէփեանէն մինչեւ Վարդգէս Պետրոսեան եւ Մկրտիչ Սարգսեանէն մինչեւ Պերճ Չէյթունցեան ու Ռուբէն Յովսէփեան:

Վաթսուհական թուականներուն սկսած եւ դեռ իր լինելութեան մէջ զտնուող զբաղանքները ունի ընդարձակելու, խորացնելու եւ վարձատրութեան որակները բարձրացնելու միտող իրենց տեսական մտորումները, կարելի է համարձակօրէն ըսել, որ ցայսօր կը պահեն իրենց ոյժ-մէքութիւնը: Նոյնպէս եւ՝ վիճարանական մտորումները: Այս շարքին առաջին արտա-յայտութիւններէն մէկը պէտք է համարել Վարդէս Պետրոսեանի «ՀԱՄԱՅԱՐԱՒ ԲԱԳՈՒՄ ԵՄ ԵՄԱՅՈՒՆՆԵՐՈՒՄ» (Գրաւում, 1968, քիւ. 3), որուն անմիջապէս արձագանգեցին Հրանտ Մաթեոսեան, Պերճ Զէյթունցեան, Նորայր Արաւիան եւ Գէորգ Արշակեան, իրարու հակասող կամ լրացուցիչ մտքերով, այնուամենայնիւ, ամէնքն ալ իւրովի հետաքրքրական, մասնաւորաբար համարձակութեան եւ անկեղծութեան տեսակէտով: Աւելի ուշ, նոյն աշխուժութիւնը աւելացաւ քննադատութեան շուրջ ծաւալած բանավեճին առիթով, որուն բացումը, դարձեալ «Գրաւում»-ի մէջ (1973, քիւ. 1), կատարեց այս անգամ Նորայր Արաւիան՝ «Բնագիտութեան բարձր կոչումը՝ խորագրուած յօդուածով, իսկ լեզուական բանավեճի մը եղբայրակիւն խօսքը վստահեցաւ Բաղդէ Յովսէփեանին (ՀԱՎԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒՄ, 1968, քիւ. 5):

Գիւղ թէ քաղաք, անանդո՞յթ թէ նորարարութիւն, ազգային թէ միջազգային թեմա, հիւն թէ նոր հերոս, բանաստեղծի միջավայր թէ խառնուրդային ոլորտ, քննադատական հակում թէ դիտարկողական նորարարութիւններուն բացուելու հրամայական, անհատ թէ հասարակականութիւն: Իրենց տեսական թէ բանավեճային յօդուածներուն մէջ արծարծուած հարցերը մօտաւորապէս ասոնք են, եւ այդ մասին արտայայտուողները, ընդհանրապէս իրենց սեփական տեսլականներուն հիմնարկումները ընկնով հանդերձ, տուեալ յօդուածներուն մէջ ունին նոյնպէս ընդունելի ընդհանրացումներ՝ յօդուած զրազանութեան այն ճշմարիտ հասկացողութեան, որ իրականութեան մէջ կը մեկնի եւ համապատասխան խառնուրդի մը մէջ անելով ու ձեւաւորելով՝ կը նուանէ երկրորդ մակարդակի մը:

Ուրուագծուած այս մթնոլորտին մէջ ծնած, հասակ առած, գրականօրէն աշխուժ տնած, քաղճաթիւ հակասութիւններու զարնուած, վէճերով լի, յարաբերական ազատութեամբ բախտաւոր, երբեմն բաշխութույն արժանաւորութիւններ ցուցաբերած, ազգային ու միջազգային որոշ դէմքերու գրականութեան հաղորդ, համալսարանական հանաշունչներու տէր ու տեսականօրէն կարգ մը բիրեզացումներու յանգած հոս ներկայացուող այս երկու սերունդները, վերջին քառորդ դարուն հրատարակած են մեծ ու փոքր ծաւալով շուրջ յիսուն հասարակ, որոնցմէ ոմանք ներկայութիւն հաստատող որակ ունին եւ յաճախ յիշատակուող անուններ են՝ տեսական յօդուածներու թէ վիճարանական ասուլիսներու ընթացքին:

Թուենք առաջին տասնամեակին կապուած կարեւոր գործերը՝ իրենց լոյս ընծայման կարգով.

«Զբամբաժնի» (Բ. Արամեան), «Սերմնացանները չվերազարման» (Բ. Յովսէփեան), «Կեանքը կրակի տակ» (Մ. Սարգսեան), «Սիցիլիական պաշտպանութիւն» (Կ. Սիմոնեան), «Որտե՞ղ էիր, մարդ Աստույ» (Զ. Խալափեան), «Նոգ ամառ» (Ն. Արաւիան), «Սու ու սպիտակ կարապետներ» (Գ. Արաւիան), «Օգոստոս» (Հր. Մաթեոսեան), «Ընտանիքի հայրը» (Ա. Արաւիան), «Կողմ Ռաբերտ Իգնիւսին» (Պ. Զէյթունցեան), «Կուսակ» (Մ. Գալ-շոյեան), «Հայկական Խաբիբներ» (Վ. Պետրոսեան), «Նրկու վիպակ» (Բ.

Յովսէփեան), «Փարսաւան» (Յովհ. Մէլքոնեան) :

Ասոնց վրայ պէտք է աւելցնել երկրորդ տասնամեակին հրատարակուած «Ապրիլ» եւ չապրիլ տարիներ» (Վ. Պետրոսեան), «Բարեւ, քարի արեւ» (Մ. Սարգսեան), «Մեռած քաղաքի պարիսպներէ տակ» (Ռ. Արամեան), «Խաղաղ գորանոցներ» (Ն. Աղալեան), «Փառաւանք» (Ա. Այվազեան), «Ամենատաք երկիրը» (Ռ. Յովսէփեան), «Հարցաւնումքիւն» (Յովհ. Մէլքոնեան), «Արշակ երկրորդ» (Պ. Ջէյթունեան) եւ «Մատեր» (Հր. Մաթևոսեան) խորագրուած գործերը :

Դեռ ասորի ու իրենք գիրենք ընթերցողին պարտադրած շուրջ քսանըւհինգ գործեր :

Ձևաչափ օրուան պահանջներուն որձազանգող ռմանց հաստատարներ բաժինները, յիշեալ գործերը, ամէնքն ալ, է՛րիման զուտ զրուակաւութեան կալուածէն ներս, է՛լ քանակով մարդուն ու քննութեան, առաւելարար հայ մարդուն ու մեր բնութեան, գիւղի թէ քաղաքի միջավայրերուն մէջ, ազգային, կենցաղային թէ մարդկային յարաբերութեանց հէնքի մը վրայ :

Այս գործերուն ջախջախիչ տոկոսին հերոսը վերջին յիշամեակին մեզի վիճակուած փորձառութեանց մէջ կոփուած անհատն է :

Ափ մը հողին ամբօրէն կառնած մարդը,

Թրքական սպանդէն ճողուցած եւ ներկայ Հայաստանի մէկ անկիւնը վերստին տուն շինած կամ շինող կարօտահարը,

Համալիարհային երկրորդ պատերազմէն վերազարձած վերաւորը կամ անծանօթ տեղ մը անվերադարձ կորսուածը,

Ստալինեան մոգոգին ունիւցուցած անմեղը կամ ցուրտ հեռուներէն տուն վերադարձած կիսակործան անձը,

Կեանքին մէջ իր տեղը չըզելու տենդով տաքնապազ երիտասարդը,

Եւ պատմական դէմքեր :

Ննթազըլի է այդ տիպարներուն աշխարհը, ուր կը խաչաձեւութիւն ազնիւ մղումները, հողին սէրը, բնութեան զգայնութիւնը, մարդկայնական գիծները, կարօտները, ժառանգութիւն մը երկարած գելու տենդը, ինչպէս նաեւ կորուստներու սուգը, անփոփոխութեան հառաչանքները, վերաւորանքներն ու անգործ ծառայումները, անհեթեթեան խոցող յուշը, հակաբուժիւններն ու շփոթը, հազարերանգ դատնութիւններու խայթը, խղճահարութեանց բեռը :

Թարմ են այս զգայնութիւններուն բացուող էջերը, երբեմն վարակիչ, տեղ-տեղ եռյնիսկ ցնցիչ յատկութիւններ կը պարզեն անոնք, բայց մեծ տմբողջներու կարօտը քիչ անգամ կը յաղենայ ընթերցողին սրտին :

Բոլոր պարագաներուն, տրուածը որակ ունի եւ քիչ չեն ակնկալութիւնները :

ՀԱՅ ՏԵՍԱՆ

ՀԱՅ ՏԵՍԱՆ

Կ Ա Մ

ՀԱՆԴԵՍ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ, ԹԻԻ 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿԱՄ	Իբրեւ յառաքան
Զ. ՈՐԲՈՒՆԻ	Մահազ
Գ. ՊԸԼՏԵԱՆ	Կախարդանքը գրութեամբ
Վ. ՊԵՆԻԱՄԻՆ	Թարգմանիչիմ աւարտականութիւնը (Թարգմանութիւն ԿԱՄ, գերմաներէնէ)
Մ. ՊԶԱՆՇՕ	Թովմաս Մթազիմը (գլուխ 1-2-4-5, քարզմ. ԿԱՄ, Փրանսերէնէ)
Մ. ՆՇԱՆԵԱՆ	Վ. Թէֆէեմ կամ անկարելի անցքը

Գին՝ Ֆրանսա՝	75 ֆրանք
Միացեալ Նահանգներ՝	18 ամլար
Լիբանան՝	60 ոսկի

Ատանալու համար գինիլ՝

Revue GAM
3, rue Philippe HECHT,
75019 Paris


Ա Ի Օ

Տ Ա Ճ Ա Տ Թ Ե Ր Լ Ե Մ Է Ջ Ե Ա Ն

Ատանալու համար գինիլ՝

AVO — A. TOUMAYAN
B. P. 80321
TEL. 266492
BOURDJ HAMOUD
LIBAN

digitised by



ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵՐԻՆ

ԼԻՌԱՆԱՆ	50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	27 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՅԱՌ	5 Լ. ՈՍԿԻ

بَاكِين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 المدير المسؤول
 السيد ارتين كلارك فرايجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

ԲԱԿԻՆ
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր
 ԳՕՂԱՍ ՄԱՍԳԵԱՆ
 Խմբագրությունը տեղակայված է
 ՕԱՐՈՒՌՈՒՄԻ ՊԵՐՏԵՐԱՆ
 ԱՆԿԻՍ ԿՐԸԱՌԱՅԱՆ

B. P. 11-8404 - Beyrouth - LIBAN
 Tel. 296898